

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԻԿՅԱՆ ԱՇՈՏԻ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ ի. գ. թ. , դոցենտ Է. Է. Շաթիրյան

Երևան 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ I. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

§1. Մաքսային հսկողության էությունն ու մաքսային իրավական հարակից ինստիտուտների հետ դրա հարաբերակցությունը16

§2. Մաքսային հսկողության իրականացման սկզբունքները և դրանց կենսագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.....43

ԳԼՈՒԽ II. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

§ 1. Մաքսային հսկողության ձևերի և միջոցների հարաբերակցությունը.....67

§ 2. Անձնական զննման իրականացման իրավաչափության վավերապայմանները.....89

§ 3. Մաքսային տեսազննման և զննման իրավական հիմքերը և դրանց կատարելագործման հիմնախնդիրները.....102

ԳԼՈՒԽ III. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՐԱՆՔԻ ԲԱՑԹՈՂՈՒՄԻՑ ՀԵՏՈ

§ 1. Կամերալ մաքսային ստուգման իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.....123

§ 2. Արտագնա մաքսային ստուգումը՝ որպես մաքսային հսկողության համընդգրկուն ձև.....139

ՎԵՐՋԱԲԱՆ.....154

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ.....163

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից իրավական իրականությունում շարունակաբար տեղի ունեցող ինտեգրացիոն հարափոփոխ գործընթացներն ու դրանց արդյունքում իրավական ինստիտուտների համապատասխան փոփոխություններն օբյեկտիվ անհրաժեշտություն են հարուցում գիտավերլուծական նոր դիտանկյունից դրանք դարձնել գնահատման առարկա: Ակներև է, որ իրավունքի մասին գիտությունը պետք է օպերատիվ արձագանքի օրենսդրական համապատասխան փոփոխություններին՝ յուրաքանչյուր դեպքում դրանց դոկտրինալ հիմնավորվածությունը դարձնելով առանձին գնահատման առարկա: Միայն այդ ճանապարհով է հնարավոր հասնել տեսություն-պրակտիկա կապի համընթաց և ներդաշնակ զարգացմանը, ապահովել պրակտիկայում օրենքով սահմանված պահանջների անշեղ իրականացումը: Դրա արդյունքը, բնականաբար, իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքի հետևողական իրականացմանը միտված առավել հիմնարար օրենսդրական ակտերի մշակումն ու այդպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության առավել բարձր մակարդակ ապահովելն է:

2015 թվականի հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունը դարձավ 2014 թվականի մայիսի 29-ին հիմնադրված Եվրասիական տնտեսական միության անդամ, ինչը սկզբունքորեն նոր կարգավորումներ առաջադրեց հասարակական կյանքի տնտեսական ոլորտում, և առաջին հերթին՝ արտաքին տնտեսական գործունեության և մաքսային կարգավորման շրջանակներում: Դրանից հետո Հայաստանի Հանրապետությունում կիրառվեցին Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերը: Դրանց շարքում, հատկապես, առանձնակի տեղ է գրավում մաքսային իրավահարաբերությունները կարգավորող համապարփակ նոր կողիֆիկացված ակտը՝ ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարների մակարդակով 2009 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված «Մաքսային Միության մաքսային

օրենսգրքի մասին» համաձայնագիրը: Այն, փաստորեն, դարձավ միասնական տնտեսական տարածության մաքսային իրավարգավորման միասնական ուղենիշները սահմանող միջազգային պայմանագիր, որով, փաստորեն, Միության անդամ չհանդիսացող պետությունների հետ իրականացվելու էր միասնական մաքսասակագնային քաղաքականություն:

Բնական է, որ նշված փոփոխությունը ենթադրում էր օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի համալիր փոփոխություններ՝ Եվրասիական տնտեսական միության իրավապայմանագրային աղբյուրներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով: Ինչպես ԵԱՏՄ անդամ մյուս պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ի կատարումն 2009 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված «Մաքսային Միության մաքսային օրենսգրքի մասին» համաձայնագրի՝ 17.12.2014թ. ընդունվեց ներպետական մաքսաիրավական կարգավորման առանձնահատկություններ սահմանող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքը, որն, ի թիվս այլ կարգավորումների, նախատեսում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց վերաբերող նոր պահանջներ ու չափանիշներ, ինչպես նաև կարգավորում մաքսային հսկողության իրականացման հետ կապված միութենական օրենսդրությամբ չկարգավորված հարաբերություններ:

Ավելորդ չէ նշել, որ ՀՀ-ում տարիներ շարունակ գործած մաքսային-իրավական ինստիտուտների կիրառումը դրվում էր այնպիսի իրավական տիրույթում, որն առավելապես խարսխված է ԵԱՏՄ անդամ պետությունների միջև համաձայնեցված և համակարգված մաքսային քաղաքականության պայմանագրային կանխադրույթների վրա: Նման իրավիճակը բոլորովին այլ խնդիրների հրատապ լուծման հրամայական առաջադրեց: Անհրաժեշտ էր ապահովել մաքսային ընթացակարգերի միասնական կիրառությունը, դրանցով պայմանավորված՝ մաքսային հսկողության ձևերի ու միջոցների միատեսակ կենսագործումը, մաքսային միասնական վիճակագրության վարումը և ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի տեղափոխման կարգի պահպանումը, որպիսի գաղափարների ակունքները թաքնված էին դեռևս Եվրասիական տնտեսական միության պայմանագրային նախահիմքը կազմող և 1995թ. հունվարի 6-ի Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի

Հանրապետության միջև կնքված «Մաքսային միության մասին» համաձայնագրում: Ավելին, հետագայում նշված դրույթներն արտացոլվեցին նաև «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական և հումանիտար ոլորտներում ինտեգրման խորացման մասին» 29.03.1996թ. պայմանագրի 2-րդ հոդվածով:

Հայրենական իրավական գրականությունը, ինչպես նշվեց, պետք է համարժեք և օպերատիվ արձագանքի օրենսդրության կոնկրետ ճյուղում արձանագրված նման հիմնարար փոփոխություններին՝ ապահովելով մաքսային կարգավորման ոլորտում ծագող զանազան հիմնախնդիրների գիտատեսական և գործնական հարթության մեջ ընդունելի լուծումներ: Ի թիվս այլնի, ասվածը կարևորվում է, հատկապես, մաքսային հսկողությունը վերահսկողությունից տարանջատելու, մաքսային հսկողության իրականացման սկզբունքները որոշարկելու, մաքսային հսկողության կոնկրետ ձևերի իրավակարգավորման կատարելագործման ուղղությունների, հսկողության ձևը միջոցից տարբերակելու և մաքսային իրավունքի ոլորտի այլ հիմնարար հարցերի հետազոտման տեսակետից: Ուշագրավ է նաև այն, որ վերը հիշատակված միջոցառումների իրականացման հրատապությունն ընդգծվել է նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից 2013թ. դեկտեմբերի 24-ի որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի (ճանապարհային քարտեզ) 9-10-րդ կետերով, ինչն ուղղակիորեն փաստում է, որ հիշյալ խնդիրների առաջնահերթ լուծումը մինչև Եվրասիական տնտեսական միության հիմնադրումը հանդիսացել է ԵԱՏՄ օրակարգի կառուցվածքային բաղկացուցիչ:

Ակներև է, որ նշված խնդիրների շուրջ գիտական հետազոտությունները ելակետային նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետությունում մաքսային իրավունքի գիտության զարգացման համար՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ դրա շրջանակներում հայրենական իրավական գրականությունը, ըստ էության, չունի հարուստ ավանդույթներ: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ այն մեծապես խարսխված է ոչ միայն «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, այլ նաև նշված հարաբերությունները կարգավորող ԵԱՏՄ անդամ

մյուս պետությունների օրենսդրական համապատասխան ակտերով նախատեսված իրավակարգավորումների համեմատական վերլուծության վրա, որպիսիք առանձին դեպքերում իրարից էապես տարբերվում են: Ավելին, աշխատանքում արված գրեթե յուրաքանչյուր առաջարկ քննարկման առարկա է դարձել նաև ՀՀ Կառավարության 22.12.2016թ. որոշմամբ հավանության արժանացած ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի նախագծով սահմանված իրավակարգավորումների համատեքստում, ինչը մի նոր հարթակի է բարձրացնում կատարված ուսումնասիրությունների արդիականությունը նաև տեսանելի ապագայում: Հիշյալ հանգամանքներն իրենց համակցությամբ ապահովում են աշխատանքի գիտագործնական արժեքը՝ պայմանավորելով դրանց օբյեկտիվ արդիականությունը մաքսային գործի ու կարգավորման բնագավառում:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը:

Առհասարակ, պետք է նկատի ունենալ այն իրողությունը, որ հայրենական իրավական գրականության շրջանակներում մաքսային իրավունքի ինստիտուտներին վերաբերող գիտական բնույթի հետազոտությունները բավական սակավաթիվ են: Նշված հետազոտության շրջանակներում մեր հանրապետությունում առաջին անգամ հետազոտման առանձին առարկա է դարձել մաքսային իրավունքի անկյունաքարային ինստիտուտներից մեկը՝ մաքսային հսկողությունը, որի պատշաճ իրականացումից է մեծապես կախված ազատ տնտեսական գործունեության, սոցիալական արդարության հիմնարար սկզբունքին համապատասխանող տնտեսական կարգի կենսագործումը, որը նաև ՀՀ Սահմանադրության (2015թ. *փոփոխություններով*) 11-րդ հոդվածով նախանշված է որպես սահմանադրական կարգի հիմունք:

Ինչ վերաբերում է հետազոտության տեսական հիմքերին, ապա հատկանշական է, որ մաքսային հսկողությանը վերաբերող իրավաբանական գրականությունը Մաքսային Միության մաքսային օրենսդրության իրավակարգավորումների համատեքստում դեռևս չի կարելի դասել ծավալունների շարքին: Այս իմաստով հետազոտության գիտատեսական ակունքներում ընդգրկվել են ինչպես համեմատաբար ավելի վաղ շրջանի, այնպես էլ ժամանակակից գիտնականների մոտեցումները: Մասնավորապես, հետազոտության շրջանակներում վերլուծության և գնահատման առանձին առարկա են դառել Բ.Ն. Գաբրիչիձեի, Վ.Գ.Դրոգանովայի,

Ա.Պ.Այրոխինի, Ե.Գ.Մոխսեևի, Կ.Ա.Բեկյաշևի, Ի.Վ.Տիմոշենկոյի, Տ.Ն.Տրոշկինայի, Ա.Ա.Կոստինի, Ե.Վ.Սերգեևի, Վ.Ա.Մակսիմցևայի, Մ.Մ.Ռաստրովայի, Յու.Մ. Կոզլովի, Լ.Լ.Պոպովի, Ա.Ա.Արտեմևի և այլ ականավոր տեսաբանների դոկտորինալ հայացքներն ու հայեցակարգային մոտեցումները: Հաշվի առնելով վարչական և մաքսային իրավունքի ճյուղերի միջառարկայական փոխկապակցվածությունը՝ վերլուծվել են նաև Գ.Գ.Հարությունյանի, Գ.Բ.Դանիելյանի, Ա.Վ.Խալիպովի, Ա.Բ.Նովիկովի, Օ.Վ.Գրեչկինայի, Ա.Վ.Ազապովայի, Գ.Վ.Մատվիենկոյի, Ա.Ա.Կարմոլիցկիի և այլ գիտնականների՝ սույն հետազոտության օբյեկտին ու առարկային վերաբերելի դիրքորոշումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության օբյեկտը մաքսային հսկողության կառուցակարգերն ու դրանց առնչվող իրավահարաբերություններն են, որոնք ծագում են մաքսային մարմնի և մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց միջև: Ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես նախնական ու ընթացիկ, այնպես էլ ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողությանը (հետբացթողումային հսկողություն): Հետազոտության առարկան, օբյեկտով պայմանավորված, ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ մաքսային վարչարարության արդյունավետ իրականացումը, «հսկողություն» և «վերահսկողություն», «հսկողության ձև» և «հսկողության միջոց» եզրերի տարանջատման հիմնախնդիրները և մաքսային գործի ոլորտում պետական իրավասու մարմինների գործադրիչ-կարգադրիչ գործունեության ընթացքում ծագող այլ խնդիրներ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը մաքսային հսկողության կառուցակարգերի կենսագործման տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված համապատասխան առաջարկներ ներկայացնելն է: Հիշյալ նպատակի իրականացումը պահանջում է հետևողականորեն լուծել հետևյալ խնդիրները.

– հստակեցնել մաքսային հսկողության հասկացության բովանդակության շրջանակներն ու օբյեկտիվ ուղենիշները՝ տարանջատելով այն վերահսկողությունից.

– որոշարկել մաքսային հսկողության իրականացման սկզբունքները.

– մաքսային հսկողության իրականացման կառուցակարգերի համակարգում տարբերակել մաքսային հսկողության միջոցը ձևից՝ նախանշելով դրանց տարբերակման չափանիշները.

– մաքսային հսկողության յուրաքանչյուր ձև քննության առարկա դարձնել միջոցի և հետաանդվող նպատակի միջև անհրաժեշտ համամասնության ողջամիտ հարաբերակցության տեսակետից՝ իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման համատեքստում.

– հաշվի առնելով ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության առանձնահատկությունները՝ հետազոտման առարկա դարձնել նաև մաքսային հսկողության ձև համարվող մաքսային ստուգման (հետբացթողումային հսկողություն) օրենսդրական կարգավորման հետ կապված հարցերը:

Ըստ էության, վերոհիշյալ խնդիրների հետևողական իրականացումը նպատակաուղղված է մաքսային հսկողության կառուցակարգերի կատարելագործմանը, դրանց կենսագործման ընթացքում անձանց իրավունքների պաշտպանության առավել բարձր մակարդակի ապահովմանը, Եվրասիական տնտեսական միության օրենսդրության թերությունների ու բացթողումների վերհանմանը ու դրա հետագա կատարելագործմանը, Եվրասիական տնտեսական միության օրենսդրության պահանջներին ներպետական օրենսդրության մոտարկմանը:

Ընդ որում, ապրանքի բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության վերաբերյալ աշխատանքում հատկացվել է առանձին գլուխ՝ պայմանավորված այն իրողությամբ, որ մաքսային հսկողության ձևերի համակարգում մաքսային ստուգումը հանդես է գալիս որպես առավել համընդգրկուն ձև, որի շրջանակներում թույլատրելի է համարվում նաև հսկողական այլ ձևերի կիրառումը: Բացի այդ, հսկողական հիշյալ կառուցակարգն իրականացվում է ապրանքի բացթողումից հետո, որը պայմանավորում է վերջինիս էական առանձնահատկությունները մաքսային հսկողության այլ ձևերի համեմատությամբ: Ի տարբերություն մաքսային հսկողության այլ ձևերի, մաքսային ստուգման պարագայում գնահատման առարկա է դառնում ստուգման ենթակա անձի գործունեության նկատմամբ մաքսային օրենսդրությամբ

սահմանվող ցանկացած պահանջի պահպանվածության հարցը: Մինչդեռ, մաքսային հսկողության մյուս ձևերն առավելապես ունեն հատուկ ուղղվածություն: Նշված հանգամանքներն իրենց համակցությամբ պայմանավորում են մաքսային ստուգման իրականացման հետ կապված առանձին գլխի ներառումը սույն ատենախոսության շրջանակներում:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են մաքսային հսկողության իրականացումը կարգավորող բազմաթիվ իրավական ակտեր, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության իրավապայմանագրային բազան կազմող համաձայնագրերն ու Եվրասիական տնտեսական միության մարմինների իրավական ակտերը: Աշխատանքում թղթակցող իրավակարգավորումները վերհանելիս, որպես կանոն, ուսումնասիրվել են նաև ԵԱՏՄ անդամ մյուս պետություններում մաքսային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերը՝ անհրաժեշտության դեպքում անցկացնելով նաև համեմատական իրավական վերլուծություն և նախանշելով առավել ընդունելի և արդյունավետ լուծումներ: Պետք է նկատել նաև, որ ինչպես նշվեց, աշխատանքում ուշադրություն է դարձվել նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծով առաջադրվող լուծումներին՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ նշված օրենսգիրքը տեսանելի ապագայում դառնալու է Միության մաքսային իրավահարաբերությունները կարգավորող համապարփակ փաստաթուղթ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտությամբ թիրախավորված խնդիրներին և նպատակներին հասնելու համար կիրառվել են թե՛ համագիտական, թե՛ մասնավոր գիտական մեթոդներ: Մասնավորապես, հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական նշանակություն ունեցող մեթոդները՝ ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ և այլն, այնպես էլ մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային և այլ մեթոդներ: Աշխատանքում կիրառվել է նաև պատմական մեթոդը, որով, փաստորեն, խնդրո առարկա ինստիտուտի պատմական զարգացման համատեքստում առավել ակնառու է դարձել դրա էության բացահայտումը:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում: Աշխատանքում, նախ, առանձին վերլուծության առարկա են դարձել մաքսային հսկողությունը վերահսկողությունից տարանջատելու, մաքսային հսկողության իրականացման սկզբունքների որոշարկմանը վերաբերող հարցերը, մաքսային հսկողության ձևերի իրավակարգավորման հիմնախնդիրները 1973 թվականի մայիսի 18-ին Կիոտոյում ստորագրված՝ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման եվ ներդաշնակեցման մասին» միջազգային կոնվենցիայի իրավակարգավորումների համատեքստում: Բացի այդ, հսկողության յուրաքանչյուր ձև քննության առարկա դարձնելիս մատնանշվել են դրանց իրավակարգավորման թերությունները և արվել դրանց հետագա կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկներ: Ընդ որում, որպես կանոն, ուշադրությունից զերծ չեն մնացել ԵԱՏՄ անդամ մյուս պետություններում մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերով առաջադրվող իրավակարգավորումները: Աշխատանքի գիտական նորույթը հիմնավորվում է նաև՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործի շարունակական զարգացման ապահովման անհրաժեշտությունը, որը ՀՀ Կառավարության կողմից թիրախավորված ուղղություններից մեկն է:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Առանձին քննարկման առարկա դարձնելով մաքսային հսկողության իրականացման սկզբունքները՝ աշխատանքում արվել են կոնկրետ առաջարկներ նաև դրանց շրջանակի որոշարկման հետ կապված: Մասնավորապես, նորովի է քննարկվել ընտրողականության սկզբունքի դերը մաքսային հսկողության իրականացման հարցում այն հանգամանքների համատեքստում, որ բոլոր դեպքերում մաքսային վարչարարության շրջանակներում գործում են հայեցողական լիազորությունների սահմանափակման, համաչափության և կամայականության արգելքի հիմնարար սկզբունքները, որոնց գործողության պայմաններում խնդրո առարկա սկզբունքը չունի ինքնուրույն առարկայական բովանդակություն մաքսային հսկողության իրականացման

համար: Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկայի անկյունաքարը ռիսկերի կառավարման համակարգի գնահատումն է, մինչդեռ ընտրողականության իրավական բովանդակությունն, ըստ էության, հանգում է նրան, որ մաքսային հսկողության կոնկրետ ձևը կիրառվի ընտրողաբար: Նման պայմաններում առկա չէ որևէ առանձնահատուկ իրավիճակ մաքսային վարչարարության մեջ նոր սկզբունքի օրենսդրական ամրագրման հարցում: Հետևապես, աշխատանքում առաջարկվել է մաքսային հսկողության սկզբունքների շրջանակը սահմանել այլ բովանդակությամբ՝ դրանց շրջանակից բացառելով ընտրողականությունը: Միաժամանակ, առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել համաչափությունը մաքսային հսկողության ձևի (միջոցի) և հետապնդվող նպատակի միջև: Թեպետ հիշյալ սկզբունքը ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքի մասնավոր դրսևորում է, այսուհանդերձ, գտնում ենք, որ դրա ամրագրումն ուղղակիորեն բխում է մաքսային հսկողության՝ որպես վարչարարության առանձին տեսակի առանձնահատկություններից:

2. Վերլուծելով մաքսային հսկողության ձևերի գոյություն ունեցող համակարգը՝ կարելի է փաստել, որ իրենց հետապնդած նպատակներով դրանք միմյանցից էապես տարբերվում են: Ակնհայտ է, որ մաքսային հսկողության իրականացման հարցում դրանք նույն իրավական նշանակությունը չունեն: Հետևապես, աշխատանքում առաջարկվել է համարժեքորեն տարբերակել մաքսային հսկողության ձևը հսկողության միջոցից՝ որպես տարբերակման ցուցիչ դիտարկելով իրավական այն չափանիշը, ըստ որի՝ միջոցառումը պետք է անպայմանորեն ենթադրի դրա սկիզբը, ընթացքն ու ավարտն արձանագրող կոնկրետ ընթացակարգային փաստաթղթի առկայություն: Այս կապակցությամբ վերլուծվել է մաքսային հսկողության գոյություն ունեցող ձևերից յուրաքանչյուրը և առաջարկվել է մաքսային հսկողության ձևերի որոշակիորեն փոփոխված համակարգ՝ դրանց կատարելագործմանն ուղղված համապատասխան առաջարկներով:

3. ԵԱՏՄ մաքսային օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում առկա մաքսային հսկողության որոշ ձևերի միջև օրենսդրորեն անհրաժեշտ տարբերակում ապահովված չէ: Մաքսային հսկողության ձևերի կիրառման առանցքում

պետք է լինի դրանք միմյանցից տարբերակելու համարժեք իրավական ելակետեր: Ընդ որում, նշված խնդրի լուծումը չի սահմանափակվում միայն հիշյալ ձևերի կիրառման ընթացքն ապահովող երաշխիքների նախատեսմամբ: Մի շարք հսկողական ձևերի պարագայում ամրագրված չէ անգամ դրանց նպատակը, որով պայմանավորված՝ մաքսային իրավահարաբերությունների մասնակիցների մոտ ձևավորվում է պատկերացում դրանց մասին: Մաքսային Միության մաքսային օրենսգրքով խնդրին լուծում տալուց զատ, անհրաժեշտ է նաև ընդունել մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան կարգավորող ՀՀ Կառավարության առանձին որոշում, որում համակողմանիորեն կարգավորված կլինի նաև մաքսային հսկողության կառուցակարգերի կիրառման կարգը:

4. Մաքսային հսկողության գոյություն ունեցող ձևերի իրականացման ընթացքում համարժեք օպերատիվության, թափանցիկության և համաչափության ապահովման նպատակներից ելնելով՝ էական նշանակություն ունի մաքսային հսկողության հնարավոր դյուրինացումը և պարզեցումը: Նշված նպատակով պայմանավորված՝ մաքսային հսկողության ձևերի մի մասի կիրառման ընթացքում (օրինակ՝ Միության մաքսային օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 133-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված և այլ իրավիճակներում) առաջարկվել է կիրառել ոչ թե ընթերականների ինստիտուտը, որը, դեպքերի մեծ մասում, ըստ էության, անհարկի ծանրաբեռնում է վարչարարությունը, այլ տեսագրումը և դրա բացակայությամբ արված գործողությունը դիտարկել ոչ իրավաչափ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

5. Հաշվի առնելով անձնական մաքսային զննության՝ որպես մաքսային հսկողության ձևի բացառիկ բնույթը՝ առաջարկվել է դրա կիրառման ընթացքում ապահովել անձանց իրավունքների գործուն պաշտպանության լրացուցիչ իրավական երաշխիքներ, մասնավորապես, ամրագրելով դրա կիրառման իրավաչափությունը բացառապես այն պարագայում, երբ մաքսային հսկողական այլ կառուցակարգերի կիրառմամբ հնարավոր չէ հայտնաբերել մաքսային օրենսդրության դրույթի խախտման փաստը: Բանն այն է, որ անձնական մաքսային զննության իրականացման գործող իրավական ընթացակարգը բովանդակային առումով որևէ կերպ չի տարբերվում անձնական խուզարկությունից: Ավելին, դրա համար սահմանված

ընթացակարգը ենթադրում է նաև անձի մերկացում և նրա մարմնի ամբողջական մանրագնին հետազոտում: Հիշյալ երաշխիքների հետևողական ամրագրմանը համահունչ՝ նախատեսվել է նաև անձի մարմնի ամբողջական մանրագնին հետազոտման ձևով իրականացվող անձնական մաքսային զննության իրավաչափությունը բացառիկ դեպքերում՝ դրա իրականացումից անմիջապես հետո դատախազին ծանուցելու պայմանով:

6. Ապրանքի բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության ձևերի, մասնավորապես, կամերալ մաքսային ստուգման իրավակարգավորման ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ օրենսդրորեն դրված չէ համարժեք տարբերակում կամերալ մաքսային ստուգման ակտի և դրա հիման վրա համապատասխան որոշման կայացման միջև: Այլ կերպ ասած՝ ստացվում է, որ անձի դիրքորոշման ներկայացումը կամերալ մաքսային ստուգման ակտի հիման վրա որոշում կայացնելու համար ունի սուսկ ֆակուլտատիվ, ոչ պարտադիր նշանակություն, ինչը սկզբունքորեն անընդունելի է: Եթե արտագնա մաքսային ստուգման դեպքում ստուգման ենթակա անձը բոլոր դեպքերում հնարավորություն ունենում է ներկայացնելու իր դիրքորոշումը ստուգման ակտի հիմքը կազմող տեղեկությունների հետ կապված, ապա կամերալ մաքսային ստուգման դեպքում անձն օբյեկտիվորեն չունի այդ հնարավորությունը: Ստացվում է, որ ստուգման ենթակա անձի դիրքորոշումը հայցելը սուսկ մաքսային մարմնի հայեցողությանը թողնելով՝ օրենսդրորեն հնարավոր է համարվում այնպիսի իրավիճակ, երբ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցը ենթարկվի վարչական պատասխանատվության առանց հնարավորություն ունենալու ներկայացվող փաստարկներով կանխելու այն: Հետևապես, հիշյալ խնդիրը լուծելու համար առաջարկվել է մշակել կամերալ մաքսային ստուգման ակտի և դրա հիման վրա համապատասխան որոշման կայացման տարբերակված ընթացակարգ: Նշված կարգավորումն պայմանավորված է նաև ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով սահմանված պատշաճ վարչարարության իրավունքի համարժեք տեղայնացման անհրաժեշտությամբ:

7. Կամերալ և արտագնա մաքսային ստուգման ձևերի իրավակարգավորման վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցով բացահայտվող հանգամանքների

շրջանակը օրենսդրորեն համարժեքորեն որոշարկված չէ: Ավելին, դրանք ամրագրված են սուկ «մաքսային ստուգում» ընդհանուր հսկողության ձևի ներքո առանց մատնանշելու դրա տեսակների միջև որևէ տարբերություն բացահայտման ենթակա հանգամանքների համատեքստում: Այլ կերպ ասած՝ առաջարկում ենք սպառիչ լրիվությամբ ուղղակիորեն սահմանել արտագնա և կամերալ մաքսային ստուգմամբ պարզվող հանգամանքների շրջանակը, ինչը հնարավորություն կտա առավել պատշաճ ապահովել իրավական որոշակիության սկզբունքի կենսագործումը մաքսային վարչարարության շրջանակներում:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության գիտատեսական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ հետազոտության շրջանակներում համակողմանիորեն վերլուծվել են մաքսային հսկողության էությունը, իրականացման սկզբունքներն ու տիպական հատկանիշները: Բնականաբար, հիշյալ վերլուծության արդյունքում նախանշվել են մաքսային հսկողության ինստիտուտի հետագա կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկներ: Հատկանշական է նաև այն, որ հետազոտության շրջանակներում քննարկման առարկա են դարձել ՀՀ Կառավարության 22.12.2016թ. որոշմամբ հավանության արժանացած Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծով առաջադրվող լուծումները՝ դրանք համադրելով գործող իրավակարգավորումների հետ: Հիշատակված հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև պետական իշխանության մարմինների օրինաստեղծ և իրավակիրառ գործունեության ընթացքում և նպաստել ՀՀ իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնում: Հեղինակն ատենախոսության հիմնական մասերի շարադրման ընթացքում մշտապես կապ է պահպանել իր գիտական ղեկավարի, ինչպես նաև ամբիոնի անդամների հետ, և տարբեր առանցքային դրույթներ ատենախոսության մեջ ամրագրվել են նախապես համաձայնեցնելուց հետո: Բացի այդ, հեղինակը ՀՀ ֆինանսների նախարարության

(ներկայումս ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի) «Արարատյան» տարածաշրջանային մաքսատան շրջանակներում անցկացրած գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում մի շարք գործնական քննարկումներ է ունեցել նաև պրակտիկ աշխատողների հետ, որպիսի հանգամանքը, անշուշտ, իր ազդեցությունն է ունեցել նաև աշխատության գործնական արժեքի վրա: Ատենախոսության էությունն արտացոլող գաղափարների շուրջ հեղինակը հանդես է եկել գիտական ելույթներով, և դրանք արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերականներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված թվով յոթ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԳԼՈՒԽ I.

ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

§1. Մաքսային հսկողության իրավական բնույթը ու մաքսային իրավական հարակից ինստիտուտների հետ դրա հարաբերակցությունը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Բնական է, որ սահմանադրական հիշյալ հրամայականի համարժեք կենսագործումը մեծապես պայմանավորված է սոցիալապես հիմնավորված մաքսային քաղաքականության իրականացմամբ, որը հենց երկրի հիմնական օրենքով նախանշված սկզբունքներին համապատասխան ապահովելու պարագայում է միայն հնարավոր ապահովել իրավունքի գերակայության և սոցիալական արդարության սկզբունքներին համապատասխանող շուկայական տնտեսության ձևավորումը:

Վերը հիշատակված սկզբունքներին համահունչ տնտեսության ձևավորման հարցում ծանրակշիռ նշանակություն ունի մաքսային օրենսդրության դրույթների կատարելագործումը և դրանց հետևողական պահպանումը: Նշված խնդրի իրականացմանը միտված և պետության կողմից իրականացվող մաքսային քաղաքականության կենսագործման միջոցների շարքում կենտրոնական տեղ է զբաղեցնում մաքսային հսկողության ինստիտուտը, որի նշանակությունը մաքսային օրենսդրության խնդիրների կենսագործման հարցում դժվար է գերազնահատել: Սերտորեն փոխկապակցված լինելով մաքսային օրենսդրության մյուս ինստիտուտների հետ՝ այն հանդես է գալիս որպես գործիքակազմ, որի պատշաճ իրականացումից է

հիմնականում կախված արդյունավետ և իրավաչափ մաքսային վարչարարության իրականացումը:

Ակներև է, որ մաքսային հսկողության բնույթն ու կենսագործումը մեծապես պայմանավորված է պետության կողմից վարվող մաքսային քաղաքականության հայեցակարգով: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, ցանկացած իրավական համակարգի հիմքում՝ անկախ տեսակից, միշտ ընկած է որևէ հայեցակարգ: Վերջինը վճռական նշանակություն ունի իրավական համակարգի կազմակերպակառուցվածքային տարրի և իրավական ինստիտուտների իրավական բովանդակության համար:¹ Տ. Յ. Յուրկինի համոզմամբ, օրինակ, մաքսային հսկողության օրենսդրական ձևակերպման պատմական վերլուծության ընթացքում հաստատվել է, որ մաքսային հսկողությունը հանդիսանում է այս ոլորտում պետության քաղաքականության արտահայտումը:² Այս համատեքստում ուշագրավ է նաև Բ.Ն Գաբրիչիձեի պնդումն առ այն, որ չի կարելի չտեսնել լուրջ տարբերություն մաքսային գործի ոգին կազմող մաքսային քաղաքականության և մաքսային ձևակերպման կամ հսկողության միջև՝ որպես մաքսային գործի կարևոր բաղադրիչների, որոնք ուղղակիորեն պայմանավորված են մաքսային քաղաքականությամբ:³ Ուշագրավ է նաև Ն.Ա.Աքսենովայի պնդումն առ այն, որ մաքսային հսկողության համակարգը բավական դինամիկ է: Մաքսային մարմինները պետք է լինեն ճկուն և օպերատիվ կերպով բարելավեն իրենց կազմակերպական կառուցվածքը դիմագրավելու փոփոխվող պայմաններին, որի շրջանակներում լուծվում են պետության տնտեսական անվտանգության ապահովումն ու տնտեսական շահերի պաշտպանությունը:⁴

Բնորոշ է, որ հենց քննարկվող ինստիտուտի բովանդակության մեջ ներառվող բաղադրիչներն են կազմում այն առանցքը, որը հնարավորություն է տալիս առավել

¹ Տե՛ս Ղազինյան Գ.Ս., Վաղարշյան Ա.Գ. Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը/ ԵՊՀ.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014թ. էջ 247:

² Տե՛ս Юркин Т.Ю. Правовое регулирование таможенного контроля при перемещении через таможенную границу объектов интеллектуальной собственности. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2009, էջ 33:

³ Տե՛ս Габричидзе Б.Н. Российское таможенное право. Учебник для вузов. Руководитель авторского коллектива и ответственный редактор д.ю.н., проф. М.: Издательская группа НОРМА-ИНФРА-М, 1998 էջ 3:

⁴ Տե՛ս Aksenova N. A. The problems of the Russian Federation customs activity management nowadays. Customs Scientific Journal, CUSTOMS, Special edition, N 1, 2012, էջ 104:

համակողմանի և արդյունավետ ապահովել մաքսային գործի իրականացումը և մաքսային իրավահարաբերությունների կայուն և դինամիկ զարգացումը: Ընդ որում, հարկ է նկատել, որ մաքսային սահմանով ապրանքի տեղափոխման օրինականության ապահովմանն ուղղված հարաբերություններն ակնհայտորեն ունեն հանրային-իրավական բնույթ: Դրանք նաև բացառիկ են այնքանով, որքանով ՀՀ-ում որևէ այլ պետական մարմնի նորմատիվ իրավական ակտով վերապահված չէ մաքսային հսկողություն իրականացնելու լիազորություն: Թեպետ առկա է ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից ընդունված «ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության և ձևակերպումների իրականացման կարգը հաստատելու մասին» համատեղ հրաման, այսուհանդերձ, նշված որոշմամբ ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանը վերապահված լիազորությունները սուկ ուղղված են մաքսային ձևակերպման պատշաճ իրականացմանը:⁵ Ինքնին մաքսային հսկողության իրականացումը բացառապես մաքսային մարմինների իրավասությունն է՝ հանգամանք, որն իրավական պատշաճ հիմքեր է հարուցում նաև մաքսային հսկողության ընթացքում իրավակիրառման միասնականության ապահովման իմաստով:

Բնականաբար, խնդրո առարկա ինստիտուտի վերաբերյալ վերլուծությունների իրականացումն առավել քան արդիական է՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ ներպետական մաքսային օրենսդրությամբ դեռևս հստակ կարգավորված չեն մաքսային հսկողության էության, դրա իրավական և փաստական հիմքերի, իրականացման իրավաչափության վավերապայմանների հետ կապված հարցերը: Առավել ևս, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում, ի տարբերություն ՀՀ մաքսային օրենսգրքի, տրված չէ մաքսային հսկողության իրավական բնորոշումը:⁶

Մաքսային հսկողության, ինչպես և ցանկացած իրավական ինստիտուտի էությունն առավել համակողմանի և խորը ընկալելու իմաստով առանձնակի

⁵ Ընդունվել է 22.12.2011թ., ուժի մեջ է մտել 11.02.2012թ., ՀՀԳՏ 2012.02.01/3 (416):

⁶ Ընդունվել է 17.12.2014թ., ուժի մեջ է մտել 02.01.2015թ., ՀՀԳՏ 2014.12.30/76 (1089).1: այսուհետ՝ Օրենք

կարևորվում է դրա պատմական զարգացման իրավական հիմքերի ուսումնասիրումը:⁷ Այն հնարավորություն է տալիս խնդրո առարկա ինստիտուտը քննարկել դրա պատմական զարգացման համատեքստում՝ օրենսդրական կարգավորման պատմական շարժընթացի պայմաններում:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում քննարկվող ինստիտուտի իրավական ամրագրման հարցում տարբեր ժամանակաշրջանի մաքսային օրենսգրքերով ամրագրված մոտեցումները միասնական չեն: Մասնավորապես, 1928թ. ԽՍՀՄ մաքսային օրենսգրքով «մաքսային հսկողություն» (надзор) եզրույթի հետ մեկտեղ կիրառվում էր «մաքսային վերահսկողություն» (контроль) եզրույթը:⁸ Այն հիմնականում վերարտադրում էր ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից 12.12.1924թ. ընդունված ԽՍՀՄ մաքսային կանոնադրության դրույթները:⁹ Ուշագրավ է, որ 1928թ. ԽՍՀՄ առաջին մաքսային օրենսգրքով սահմանված չէր անգամ մաքսային հսկողության և դրա իրականացման ձևերի միասնական համակարգ: Ավելին, մաքսային հսկողության մասին խոսվում էր սոսկ մաքսանենգության հանցակազմի շրջանակներում ապրանքի՝ մաքսային հսկողությունից թաքցնելու համատեքստում: Ընդ որում, նշված մաքսային օրենսգիրքը սահմանում էր մաքսանենգության իրավական բնորոշումը և առանձին ամրագրում մաքսանենգության մեջ ներառվող կոնկրետ արարքների սպառիչ ցանկը: Հատկանշական է, որ օրենսգրքի 80-92-րդ հոդվածներով բավական մանրամասնորեն կարգավորվել էր մաքսային զննության իրականացումը՝ նախատեսելով նաև դրա շրջանակում կայացվող որոշումների բողոքարկման ընթացակարգը: Ըստ էության, որպես առանձին մաքսային իրավական ինստիտուտ՝ մաքսային հսկողությունը 1928թ. ԽՍՀՄ մաքսային օրենսգրքով նախատեսված չէր: Օրենսգրքում բացակայում էին դրա իրականացման ընդհանուր վավերապայմանները սահմանող դրույթներ: Փոխարենը, 1928թ. օրենսգրքով կարգավորվում էին մաքսային զննության հետ կապված հարաբերությունները:

⁷ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն աշխատության շրջանակներում չեն ներառվում մաքսային հսկողության ինստիտուտի ձևավորման պատմական ակունքների ուսումնասիրման հետ կապված հարցերը՝ կասեմանափակվենք սոսկ դրան վերաբերող համառոտ ակնարկով:

⁸ Ընդունվել է ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի և ազգային կոմիսարների խորհրդի կողմից 19.12.1928թ. www.lawmix.ru:

⁹ Ընդունվել է ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից 12.12.1924թ. www.pravo.levonevsky.org

Առհասարակ, նշված օրենսգիրքը, բացի մաքսային զննությունից, հսկողության այլ ձևի կիրառման կարգ չէր նախատեսում:

Մաքսային իրավահարաբերությունները կարգավորող հաջորդ կողիֆիկացված ակտը 1964թ. ԽՍՀՄ մաքսային օրենսգիրքն էր: Դրանում մաքսային հսկողության իրականացման հետ կապված հարցերը կարգավորված էին արդեն առանձին գլխի շրջանակներում:¹⁰ Թեպետ նշված օրենսգրքով սահմանված չէր մաքսային հսկողության բնորոշումը, այսուհանդերձ, դրա 9-րդ հոդվածով կարգավորվում էին ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման ժամկետները՝ ըստ համապատասխան մաքսային ընթացակարգերի: Մաքսային հսկողության իրականացումը մաքսային օրենսգրքով տարբերակված էր ըստ փոխադրման համապատասխան տեսակների՝ ջրային, երկաթուղային, ավտոմոբիլային, միջազգային փոստային, ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով: Ընդ որում, մաքսային հսկողության կոնկրետ ձևերն այս ակտում նույնպես ուղղակիորեն կարգավորված չէին: Դրա 1-ին գլխի 9-րդ հոդվածում նշված էր, որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա են մաքսային հսկողության: Միաժամանակ, կոնկրետ փոխադրումների տեսակները կարգավորող օրենսգրքի գլուխներում նախատեսված էին նաև դրանց կապակցությամբ մաքսային հսկողության իրականացման առանձնահատկությունները:

Հետխորհրդային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում առաջին մաքսային օրենսգիրքն ընդունվեց 27.08.1993 թվականին: Դրա 3-րդ հոդվածն ուղղակիորեն արձանագրում էր, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և այլ առարկաների տեղափոխման կարգը, մաքսային հարկումը, ձևակերպումը, հսկողությունը և մաքսային քաղաքականության կենսագործման մյուս միջոցները կազմում են մաքսային գործը:¹¹ Այլ կերպ ասած՝ մաքսային հսկողությունը դիտարկվում էր որպես մաքսային գործի բաղադրիչ՝ սեփական գործառության նշանակությամբ: Միաժամանակ, օրենսգրքով նախատեսված էր առանձին գլուխ՝ 28-39-րդ հոդվածներով, որոնք առավել

¹⁰ Ընդունվել է ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության կողմից 05.05.1964թ., ուժի մեջ է մտել 01.07.1964թ.: www.economics.kiev.ua

¹¹ Ընդունվել է 27.08.1993թ., ուժը կորցրել է 01.01.2001թ., ՀՀԳԽՏ 1993/15-16:

մանրամասն էին կարգավորում մաքսային հսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները: Բնական է, որ օրենսդրական կարգավորման նման պայմաններում մաքսային հսկողությունն օրինաչափորեն առանձնացվում էր որպես մաքսային-իրավական առանձին ինստիտուտ, որը միտված էր ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգի օրինականության ապահովմանը:

Ինչ վերաբերում է մաքսային հսկողության իրականացման ձևերին, ապա պետք է նկատել, որ թեպետ 27.08.1993թ. ՀՀ մաքսային օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավոր էր համարում մաքսային հսկողության այլ ձևերի կիրառման հնարավորությունը, այսուհանդերձ, դրա շրջանակներում կարգավորված ձևերը բավական սահմանափակ էին՝ ապրանքների և այլ առարկաների զննում, իրերի զննում և անձի քննում: Ընդ որում, չկար նաև համապատասխան տարբերակում մաքսային հսկողության ձևերի և միջոցների միջև: Փորձանմուշներ և նմուշներ վերցնելը նախատեսված էր որպես մաքսային ձևակերպման բաղադրատարր: Մինչդեռ, ակներև է, որ այն ընդամենը մաքսային հսկողության ընթացքում կիրառվող միջոց է, ոչ թե մաքսային ձևակերպման բաղադրիչ:

Հասարակության տնտեսական կարգի փոփոխվող պահանջներն ուղղակիորեն պարտավորեցնում էին ապահովել խնդրո առարկա ինստիտուտի առավել համընդգրկուն և բազմակողմանի իրավակարգավորում, հատկապես, երբ մաքսային գործի բնագավառում անձանց իրավունքների խախտումները հիմնականում դրսևորվում են հենց մաքսային հսկողության ընթացքում: Այս առումով 27.08.1993թ. ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսային հսկողության իրավակարգավորմանը վերաբերող մոտեցումները որոշակի փոփոխություններ կրեցին 06.07.2000թ. ընդունված Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով:¹²

Մասնավորապես, օրենսգրքի 138-րդ հոդվածն արդեն ուղղակիորեն կարգավորում էր մաքսային հսկողությունը և նախանշում դրանց ձևերը: Ընդ որում, նշված մաքսային օրենսգիրքը մաքսային հսկողության իրականացման ձևերի առավել ընդգրկուն շրջանակ էր նախատեսում, որն, իհարկե, պայմանավորված էր

¹² Ընդունվել է 06.07.2000թ., ուժի մեջ է մտել 01.01.2001թ., Տե՛ս ՀՀՊՏ 2000.08.21/19 (117):

ապրանքաշրջանառության և ուղևորաշրջանառության մաքսային-իրավական կարգավորման նորոյա պահանջներով:

2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքով իրավական ամրագրում ստացան այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ անձի քննման մեթոդիկան, ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ կրկնակի մաքսային հսկողությունը, հետբացթողումային հսկողությունը, մաքսային զննման ընտրողականությունը, անձի իրավունքներն ու պարտականությունները մաքսային հսկողության ժամանակ և այլն: Ի տարբերություն 1993թ. մաքսային օրենսգրքի, որում առկա չէր օրենսդրական եզրույթների հասկացության թվանդակության սահմանմանը վերաբերող առանձին իրավադրույթ՝ 2000թ. մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի ժգ) և ժէ) կետերով ուղղակիորեն սահմանված էին ինչպես մաքսային ձևակերպման, այնպես էլ մաքսային հսկողության բնորոշումները: Այսուհանդերձ, պետք է նկատել, որ դրանց վերլուծությունը հնարավորություն չէր տալիս արդյունավետորեն տարանջատել դրանք: Մասնավորապես, 2000թ. մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի ժգ) կետի համաձայն՝ **մաքսային ձևակերպում է համարվում սույն օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողման համար սահմանված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝ մինչև որոշակի մաքսային ռեժիմով դրանց բացթողումը:** Նույն հոդվածի ժէ) կետը **մաքսային հսկողությունը** բնորոշում էր որպես Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ:

Ակներև է, որ ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողման համար սահմանված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը նույնպես օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված դրույթների պահպանման նպատակ է հետապնդում: Առավել ևս, երբ մաքսային հսկողության առանձին ձևեր ուղղակիորեն պայմանավորված են որոշակի մաքսային ընթացակարգով (ռեժիմով) ապրանքի բացթողման հետ: Առհասարակ, նշված իրավական ակտի վերլուծությունը ցույց է տալիս այն մասին, որ դրանում կոնկրետ որոշարկված չեն մաքսային հսկողության և

ձևակերպման ինստիտուտների հարաբերակցության հետ կապված հարցերը, դրանց առարկայական շրջանակները: Հիշյալ օրենսգրքով, ըստ էության, հիշատակված ինստիտուտների իրավական բնորոշումները արդյունավետորեն չէին արտացոլում դրանց իրավական էությունը՝ չտարբերակելով դրանց սահմանագծերը:

Ինչպես տեսնում ենք, որպես մաքսային իրավունքի ընդհանուր մասի ինստիտուտ՝ մաքսային հսկողության վերաբերյալ օրենսդրական մոտեցումները միասնական չեն և չեն ապահովում այս հարցում անհրաժեշտ օրենսդրական կարգավորման հստակություն: Ընդ որում, մասնագիտական գրականության մեջ նույնպես դրա էությանը վերաբերող տարբեր մոտեցումներ են արտահայտվել: Հիմնականում այն բնութագրվում է որպես մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակցություն, որն իրականացվում է մաքսային գործին վերաբերող օրենսդրության, ինչպես նաև այլ օրենքների և միջազգային իրավական ակտերի պահանջների պահպանման նպատակով: Համանման տեսակետ է արտահայտում նաև Վ.Գ. Դրոգանովան, ում համոզմամբ մաքսային հսկողության խնդիրներն ուղղակիորեն բխեցվում են մաքսային գործի խնդիրներից, որոնց իրականացումը դրված է մաքսային մարմինների վրա:¹³ Ա.Բ.Նովիկովը մաքսային հսկողությունը բնորոշում է որպես մաքսային մարմինների կողմից անցկացվող ստուգողական գործողությունների համակցություն, որն իրականացվում է ապրանքների, տրանսպորտային միջոցների և մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավական կարգավիճակի որոշման և հաստատման, մաքսային կանոնների խախտման կանխարգելման և մաքսային գործի ոլորտում պատասխանատվության կենսագործման նպատակով:¹⁴ Օ.Յու.Բակաևան որպես մաքսային հսկողությունը հսկողության այլ տեսակներից առանձնացնելու չափանիշ՝ մատնանշում է հետևյալ երեքը.

- այն իրականացվում է բացառապես մաքսային մարմինների կողմից,
- անցկացվում է միայն Միության օրենսգրքով սահմանված ձևերով,

¹³ Ст' у Драганова В.Г., Рассолова М.М. Таможенное право: Учебное пособие / М.: ЮНИТИДАНА, 2001 – էջ 315:

¹⁴ Ст' у Новиков А.Б. Таможенный контроль в системе административных процедур таможенного дела. Ученые записки Санкт-Петербургского имени В.Б.Бобкова филиала Российской таможенной академии. 2005, № 2 (24), էջ 26:

– ուղղված է մաքսային օրենսդրության պահպանման ապահովմանը:¹⁵

Ա.Ա.Կոստինի համոզմամբ, մաքսային հսկողության իրականացումը սահմանում է կոնկրետ գործողության իրականացման պարտականություն ինչպես մաքսային մարմնի, այնպես էլ ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխող անձի կողմից, ինչպես նաև մաքսային հսկողության իրականացմանն օժանդակող անձանց համար:¹⁶ Ուշագրավ է նաև Ա.Ա.Կոսովի մոտեցումը, ով մաքսային հսկողությունը բնորոշում է որպես մաքսային մարմինների կողմից համակարգային հենքի վրա իրականացվող մասնագիտացված վերահսկողական-հսկողական գործունեություն, ինչպես նաև մաքսային կարգավորման իրականացում նորմատիվ իրավական ակտերի պահպանումն ապահովման, մաքսային գործի ոլորտում առկա խնդիրների իրականացման, մաքսային մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման և պարզեցման նպատակներով:¹⁷

Բոլոր հիշյալ մոտեցումների վերլուծությամբ կարելի է, նախ, փաստել, որ մաքսային հսկողությունը մաքսային գործի բաղադրիչ է, որի պատշաճ իրականացումով է պայմանավորված ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականությունն ու թույլատրելիությունը: Հիշյալ դիրքորոշումը համահունչ է նաև «Մաքսային ընթացակարգերի պարզեցման եվ ներդաշնակեցման մասին» Կիոտոյի միջազգային կոնվենցիայի E7./F3. կետի բնորոշմանը, որի համաձայն՝ մաքսային հսկողությունը նշանակում է՝ միջոցներ, որոնք կիրառվում են մաքսային ծառայության կողմից՝ մաքսային օրենսդրությանը համապատասխանությունը ապահովելու համար:¹⁸ Այս առումով տեղին է համաձայնել իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն պնդմանը, ըստ որի նշված ձևակերպումը հնարավորություն է տալիս համակարգելու պետական մարմինների գործառույթները և կենտրոնացնել մաքսային մարմինների ռեսուրսներն այն գործառույթների կատարմանը, որոնք կարող են

¹⁵ Տե՛ս Бакаева О. Ю. Таможенное право: учебник /;. — М.: Норма, 2008. էջ 240:

¹⁶ Տե՛ս Костин А.А. Форма, метод и способ проведения таможенного контроля: соотношение и дефиниции, Российский внешнеэкономический вестник, 2013, № 6, էջ 73-79:

¹⁷ Տե՛ս Косов А.А. Таможенный контроль как способ обеспечения законности / дисс. к.ю. н. Москва. 2005, էջ 14:

¹⁸ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման եվ ներդաշնակեցման մասին» Կիոտոյի միջազգային կոնվենցիա, ՀՀ ԱԳՆՊՏ 2014.04.30/1(27) այսուհետ՝ Կոնվենցիա: www.arlis.am

իրականացվել բացառապես նրանց կողմից և վերաբերում են նրանց իրավասությանը սահմանված կարգին համապատասխան:¹⁹

Ինչպես նշվեց, Օրենքով սահմանված չէ մաքսային հսկողության իրավական բնորոշումը: Ներպետական օրենսդրությամբ դեռևս մշակված չէ միասնական մոտեցում այն հարցի կապակցությամբ, թե ինչի՞ հիման վրա է իրականացվում մաքսային հսկողությունը, ի՞նչ ընդհանուր պահանջների պետք է բավարարի այն: Փոխարենը, 2015 թվականի հունվարի երկուսից արդեն իսկ Հայաստանի Հանրապետությունում գործող և Եվրասիական տնտեսական միության՝ պետության ղեկավարների մակարդակով միջպետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17 որոշմամբ ընդունված «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի²⁰ հավելված համարվող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 31) կետը մաքսային հսկողությունը բնորոշում է որպես *Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից, նաև՝ ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ, իրականացվող միջոցառումների ամբողջությունը*²¹: Նշված ձևակերպումը գրեթե նույնությամբ վերարտադրում է Մաքսային միության իրավապայմանագրային բազային ձևավորման շրջանակներում կնքված «Մաքսային միության անդամ պետություններում մաքսային հսկողության և ձևակերպման կարգի մասին» համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված բնորոշումը, որի համաձայն՝ մաքսային հսկողությունը մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակցություն է, ներառյալ ռիսկերի կառավարման համակարգի օգտագործմամբ, որն իրականացվում է մաքսային օրենսդրության պահպանման ապահովման նպատակով:²²

¹⁹ St' u Azarova Ю.Ф., Баландиной Г.В. Комментарий к таможенному кодексу Российской Федерации – Москва: Норма, 2004 էջ 614:

²⁰ Ընդունվել է 27.11.2009թ. ուժի մեջ է մտել 02.01.2015թ. ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092) (այսուհետ՝ Միության օրենսգիրք):

²¹ Հատկանշական է այն հանգամանքը, որ գրեթե նույն իրավական բնորոշումն ամրագրվել էր նաև 2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքով:

²² «Մաքսային միության անդամ պետություններում մաքսային հսկողության և ձևակերպման կարգի մասին» 12.12.2008թ. համաձայնագիր www.eaeunion.org

Վկայակոչված իրավադրույթի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ մաքսային հսկողությունն իրենից ներկայացնում է որոշակի միջոցառումների համակցություն, որը միտված է ապահովելու միջազգային պայմանագրերով և օրենքներով առկա իրավական կարգադրագրերի իրականացումը: Թեպետ Միության օրենսգրքով ուղղակիորեն նշված չէ, այսուհանդերձ, Միության օրենսգրքի այլ հոդվածների վերլուծությունից բխում է, որ նշված միջոցառումները կազմում են մեկ միասնական համակարգ, որի ցանկացած տարր փոխկապակցված ու պայմանավորված է մեկը մյուսով: Այսպես, Միության օրենսգրքի 122-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *մաքսային ստուգման իրականացման ժամանակ կարող են կիրառվել սույն օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված մաքսային հսկողության ձևերը*: Կամ, նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ժամանակ և (կամ) արտագնա մաքսային ստուգման ժամանակ իրականացվող մաքսային զննումը կարող է իրականացվել առանց մաքսային հսկողության գոտու ստեղծման*: Օրինակների շարքը կարելի է շարունակել: Դրանցից ուղղակիորեն բխում է, որ մաքսային հսկողության ձևերը գտնվում են սերտ օրգանական կապի և փախապայմանավորվածության մեջ: Ըստ էության, դրանք կազմում են մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման կարգի ապահովման անհրաժեշտ գործիքակազմ, որոնցից յուրաքանչյուրի կիրառումը պետք է ուղղակիորեն պայմանավորված լինի անհրաժեշտության և համաչափության գաղափարներով:

Մաքսային հսկողության իրավական բնույթը որոշակիացնելու համար անհրաժեշտ է նաև պարզել դրա հարաբերակցությունը «ստուգում» եզրի հետ: Բանն այն է, որ Միության օրենսգրքի 110-րդ հոդվածի իմաստով մաքսային հսկողության ձևերի համակարգում առանձնացվում է «ստուգում» ենթադրող կառուցակարգերի երեք տեսակ՝ «Ապրանքների՝ հատուկ դրոշմանիշներով դրոշմավորման, դրանց վրա նույնականացման նշանների առկայության ստուգումը», «Ապրանքների հաշվառման համակարգի և հաշվետվությունների ստուգումը» և «Մաքսային ստուգումը»: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել նշված երկու եզրույթների հարաբերակցությունը:

Պետք է նկատել, որ «հսկողություն» և «ստուգում» եզրույթներն ամենևին չեն նույնանում: Այսպես, հսկողությունը ենթադրում է որոշակի պարբերականություն, իրականացման տևականություն և անընդհատություն, ինչը ստուգմանը բնորոշ հատկանիշ չէ: Վերջինս սուսկ որոշակի ժամանակամիջոցում և կոնկրետ փաստի հիման իրականացվող գործողությունների համակցություն է, որի իրականացմամբ դադարում են նաև դրա հետ կապված իրավական հետևանքները: Օրինակ, տնտեսավարող սուբյեկտը չի կարող մշտապես լինել ստուգման ենթարկվող օբյեկտ, մինչդեռ վերջինս մշտապես գտնվում է հարկային-մաքսային մարմինների հսկողության ներքո: Փաստորեն, ստացվում է այնպես, որ ստուգումը հսկողության առարկայացման, դրսևորման ձևերից մեկն է:

Ընդ որում, դրա մասին է վկայում նաև Միության օրենսգրքով սահմանված վերը հիշատակված իրավակարգավորումը: Այսպես, օրենսգրքի 110-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ձևերն են՝

- փաստաթղթերի եւ տեղեկությունների **ստուգումը** (...),
- ապրանքների՝ հատուկ դրոշմանիշներով դրոշմավորման, դրանց վրա նույնականացման նշանների առկայության **ստուգումը** (...),
- ապրանքների հաշվառման համակարգի եւ հաշվեփոխությունների **ստուգումը**:

Նշված դրույթների վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ ստուգումը հսկողության իրականացման ձևերից մեկն է:

Եվս մի տարբերություն. ստուգման ավարտը ենթադրում է կոնկրետ որոշման ընդունում, որով կամ արձանագրվում են օրենսդրության խախտումներ, կամ սահմանվում է ստուգման ենթակա անձի գործունեության համապատասխանությունը կիրառման ենթակա օրինադրույթների պահանջներին: Մինչդեռ, հսկողության արդյունքն ամենևին չի ենթադրում որոշման պարտադիր կայացում՝ պայմանավորված այն իրողությամբ, որ այն անընդհատ և պարբերաբար իրականացվող գործընթաց է:

Բացի այդ, գտնում ենք, ստուգումն առավելապես ենթադրում է պարտադիր կիրառման ենթակա իրավադրույթների հետ վերլուծության և համադրման արդյունքում սուբյեկտի գործունեության փաստաթղթաշրջանառության օրինականության ստուգում:

Մինչդեռ, հսկողությունն առավել ընդգրկուն արտահայտություն է և ենթադրում է օրինադրույթների պահպանման նպատակով սուբյեկտի կողմից իրականացվող գործունեության համակողմանի և համալիր գնահատում՝ անկախ նշված գործունեության իրականացման գրավոր ձևից: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, հսկողությունն օբյեկտի պարբերական դիտարկումն ու նրա գործունեության ստուգումն է ներկայացվող պահանջներին համապատասխան:²³ Այսպիսով, ստուգումը հարաբերակցվում է հսկողության հետ որպես դրա դրսևորման, արտահայտման միջոցի:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթների հարաբերակցությունը, մասնավորապես այն համատեքստում, թե որքանով են մաքսային հսկողության բովանդակության մեջ ներառվող բաղադրիչները, մաքսային հսկողության կառուցակարգերը համադրելի հսկողության գաղափարին առհասարակ: Հիշյալ հարաբերակցության պարզաբանման անհրաժեշտությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ յուրաքանչյուր ինստիտուտ պետք է ունենա հստակ առարկայական բովանդակություն և, դրանով պայմանավորված, ստանա համարժեք օրենսդրական ամրագրում:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ վերահսկողությունը բնորոշվում է որպես պետական կառավարման օրինականության ապահովման միջոց:²⁴ Մեկ այլ բնորոշմամբ, որպես վերահսկողության նպատակ՝ սահմանվում է գործադիր մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից օրենսդրության պահպանումը, միջոցների ծախսման տնտեսվարության և նպատակահարմարության ապահովումը, պետական կառավարման արդյունավետության բարձրացումը:²⁵ Ինչպես նշում է Վ.Մ.Մանոխինը, և՛ վերահսկողությունը, և՛ հսկողությունն հիմնված են օրենքի կատարման փաստի ստուգման վրա, այսուհանդերձ, վերահսկողությունը ներառում է նաև այն ստուգումը, որն անցկացվում է նպատակահարմարության համատեքստում:²⁶

²³ Տե՛ս Осипов Д.А., Большакова В.М. О понятиях «Государственный контроль», «Государственный надзор» и «Тотальный контроль над личностью» Власть, 2015, № 5, էջ 136-140:

²⁴ Տե՛ս Головистикова А.Н., Грудцына Л.Ю. Толковый словарь юридических терминов / М.: Эксмо, 2008, էջ 161:

²⁵ Տե՛ս Козлова Ю.М., Попова Л.Л. Административное право: Учебник-М.: Юристъ, 1999, էջ 437:

²⁶ Տե՛ս Манохин В. М. Административное право России: учеб. Саратов, Ай Пи Эр Медиа, 2009, էջ 115-116:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն հսկողության, վերահսկողության պարագայում գնահատման առարկա է դառնում նաև կոնկրետ գործառնության իրականացման նպատակահարմարությունն ու արդյունավետությունը: Այն չի հետապնդում սուկ օրենսդրության դրույթների պահպանվածության նպատակ:

Բացի այդ, իրավաբանական գրականության մեջ որպես հսկողությունը վերահսկողությունից տարբերակող ցուցիչ՝ մատնանշվում է այն հանգամանքը, որ վերահսկող մարմինն իրավունք ունի անմիջականորեն ներազդելու օբյեկտի օպերատիվ-տնտեսական գործունեությանը վերջինիս համար վարչահրամայական որոշումների ընդունման միջոցով: Մինչդեռ, հսկողության պարագայում նման միջամտություն չի թույլատրվում:²⁷ Վերահսկողական լիազորություններն կապված են օբյեկտի կոնկրետ արտադրական գործունեության հետ, ինչը հաճախ ենթադրում է նաև վերահսկողի կողմից վերահսկվողի որոշման չեղյալ համարում:

Ընդ որում, ընդգծվում է նաև, որ հսկողությունը հնարավոր է բացառապես ոչ ենթակայության հարաբերություններում, մինչդեռ վերահսկողությունը հնարավոր է ինչպես ենթակայության հարաբերությունների մեջ գտնվող, այնպես էլ չգտնվող սուբյեկտների միջև:²⁸

Հատկանշական է նաև այն, որ հսկողության շրջանակներում ներառվում է դրա արդյունքում վարչական ներգործության լծակների, վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը, մինչդեռ վերահսկողության արդյունքում կարող են կիրառվել նաև ներկարգապահական միջոցներ, օրինակ՝ հանձնարարականներ, որոնք վարչահրավական հետևանքներ անձանց համար չեն հարուցում:

Նման պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել՝ վերջին հաշվով ապրանքների տեղափոխման պահին մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակցությունն իր էությանը հսկողություն է, թե՛ վերահսկողություն:

²⁷ Տե՛ս Կոզլովա Յ.Մ., Սոբոլևա Ս.Ս. Административное право: Учебник-М.: Юрист, 1999, էջ 455:

²⁸ Տե՛ս Ստուդենիկինա Մ.Ս. Государственный контроль в сфере управления. М.: Юридическая литература, 1974, էջ 18-19:

Այսպես, Բուլղարիայի մաքսային օրենսդրությունը, օրինակ, հստակորեն տարանջատում է մաքսային հսկողություն («Таможенный надзор») և վերահսկողություն («Таможенный контроль») եզրերը: Մասնավորապես, «Մաքսային մարմինների մասին» Բուլղարիայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային հսկողությունը մաքսային մարմինների գործողությունների համակցություն է, որն իրականացվում է մաքսային օրենսդրության և այլ դրույթների պահպանման ապահովման նպատակով այն ապրանքների նկատմամբ, որոնք գտնվում են մաքսային հսկողության ներքո:

Նույն հոդվածի 3-րդ մասը մաքսային վերահսկողությունը բնութագրում է որպես մաքսային մարմնի կողմից իրականացվող հատուկ գործողություններ, մասնավորապես, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների, տրասնպորտային, առևտրային, հաշվապահական և այլ փաստաթղթերի, տրանսպորտային միջոցների, բեռների ստուգումը և այլ համանման գործողություններ, որոնք իրականացվում են մաքսային օրենսդրության և այլ դրույթների պահպանման ապահովման նպատակով այն ապրանքների նկատմամբ, որոնք գտնվում են մաքսային հսկողության ներքո, ինչպես նաև իրականացվում են մաքսային վճարների գանձման նպատակով:²⁹

Հիշյալ իրավակարգավորումներից բխում է, որ Բուլղարիայի մաքսային օրենսդրությամբ մաքսային հսկողությունն ապրանքի որոշակի կարգավիճակն է, որը ենթադրում է դրա նկատմամբ վերահսկողական բնույթի գործողությունների իրականացում: Իհարկե, թեպետ օրենսդրորեն նախատեսված է հիշյալ տարբերակումը, այսուհանդերձ, պետք է նկատել, որ մաքսային հսկողության և վերահսկողության եզրերի միջև տարանջատումն այս պարագայում նույնպես հստակ չէ:

«Մաքսային հսկողություն» և «վերահսկողություն» եզրերի միջև եզրաբանական խառնաշփոթն առկա է նաև Միության օրենսգրքով, որով նույնպես դեռևս համարժեքորեն չեն առարկայացվել նշված երկու եզրույթները: Մասնավորապես, օրենսգրքի տարբեր հոդվածներում անհարկի գործածվել է «վերահսկողություն»

²⁹ «Մաքսային մարմինների մասին» Բուլղարիայի Հանրապետության օրենքը, ընդունվել է 01.01.2007թ.: www.customs.bg

եզրույթը առանց մատնանշելու դրա շոշափելի տարբերությունը «հսկողություն» եզրույթից (*Միության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 94-րդ հոդվածի 1-ին մաս, 96-րդ հոդվածի 6-րդ մաս, 333-րդ հոդվածի 3-րդ մաս, 368-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր*): Ինչպես նշում է Օ.Յու.Բակասան, մաքսային վերահսկողությունը (таможенный контроль), որը հիմնված է սուկ օբյեկտի (*ապրանքների, փրանսպորտային միջոցների, փաստաթղթերի*) ստուգման վրա, իր օրենսդրական հիմքերով համընկնում է մաքսային հսկողության (надзор) իրավական էությանը: Մինչդեռ, Միության օրենսգրքով դեպքերի ճնշող մեծամասնության պարագայում «հսկողություն» եզրն օգտագործվում է այլ սուբյեկտների պարագայում:³⁰

Ավելին, Միության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության մաքսային տարածքում մաքսային մարմիններն ապահովում են հետեյալ հիմնական խնդիրների իրագործումը՝ (...) մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Մաքսային միության անդամ պետությունների այլ օրենսդրության իրականացման ապահովում, որի իրականացման նկատմամբ **վերահսկողությունը** դրված է մաքսային մարմինների վրա: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, մաքսային հսկողությունը օրենսգրքով սահմանված է որպես օրենսդրության պահպանման նպատակով իրականացվող միջոցառումների համակցություն: Այսպիսով, ակներև է, որ Միության օրենսգրքով նույնպես այս հարցի առնչությամբ չի դրսևորվել միասնական մոտեցում և միևնույն երևույթը մատնանշելիս կիրառվել են օրենսդրական տարբեր եզրույթներ:

Ըստ էության, վերը հիշատակված բնորոշումների պարագայում պարզ է դառնում, որ վերահսկողությունն օրենսդրության պահանջներին կոնկրետ արարքի համապատասխանության հարցը որոշելուց զատ, ներառում է նաև տվյալ արարքի արդյունավետության, նպատակայնության որոշման իրավասությունը, ինչն ակնհայտորեն հսկողության կառուցակարգի մեջ չի ներառվում: Գործող իրավակարգավորման պայմաններում մաքսային հսկողության էությունն ուղղակիորեն պայմանավորված է միջազգային պայմանագրերով, ինչպես նաև օրենքներով ամրագրված դրույթների պահպանման նպատակով: Այլ կերպ ասած՝ մաքսային

³⁰ St' u Бакаева О.Ю. Государственный контроль и надзор как основные функции таможенных органов, Ленинградский юридический журнал, 2012, № 4 (30) էջ 34-42:

հսկողության խնդիրն է պարզել՝ ապրանքների տեղափոխման պահին հայտարարատուի կողմից պահպանվե՞լ են արդյոք օրենքի պահանջները, թե՞ դրանից առկա են շեղումներ: Մաքսային գործող օրենսդրությամբ նախատեսված ձևերի բովանդակային վերլուծությունից ակնհայտորեն բխում է, որ դրանց ընթացքում, բացի կոնկրետ ներմուծմանն (արտահանմանն) ուղղված գործողության օրինականության ստուգումից, ուրիշ որևէ հանգամանք մաքսային մարմնի կողմից գնահատման առարկա չի դառնում: Նման մոտեցման մասին է վկայում նաև Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը, որի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից մաքսային ձևակերպումների և հսկողության կամ մաքսային այլ ընթացակարգերի իրականացման ժամանակ ներկայացվող պահանջները չեն կարող խոչընդոտ դառնալ ապրանքների ներմուծման, արտահանման, բաց թողնման կամ մաքսային գործի բնագավառում այլ գործունեության իրականացման համար, եթե դրանք ուղղված չեն Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման համար անհրաժեշտ նվազագույն հսկողության իրականացմանը:

Մաքսային հսկողության իրականացման ընթացքում մաքսային մարմնի կողմից գնահատման առարկա է դառնում բացառապես մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման օրինականությունը կամ արդեն իսկ տեղափոխված ապրանքներին ներկայացվող օրենսդրական պահանջների պահպանվածության հարցը: Մինչդեռ, տեղափոխման նպատակահարմարությունը, արդյունավետությունը մաքսային հսկողության հիմքում չեն կարող դրվել: Դրանք իրենց արտացոլումն են ստանում առավելապես պետության կողմից վարվող մաքսային քաղաքականության շրջանակներում: Հակառակ դեպքում, հսկողության հասկացության տարածական ընկալման պարագայում անհարկի կընդլայնվի այն՝ վերածվելով վերահսկողության, որն առավելապես միտված է կատարված գործողությունների արդյունավետության և նպատակահարմարության ստուգումը: Հատկանշական է, որ ՀՀ վճարբեկ դատարանը ևս, անդրադառնալով մաքսային հսկողության էության հարցին, արտահայտել է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որ մաքսային հսկողության իրականացումը նպատակ ունի ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ

իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանումը, ինչպես նաև պահպանել ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը:³¹

Հետևապես, գտնում ենք, որ եզրաքանական միասնականության ապահովման նպատակներից ելնելով՝ անհրաժեշտ է Միության օրենսգրքում և Օրենքում վերացնել առկա խառնաշփոթը և գործածել «մաքսային հսկողություն» եզրը առավելա, որ այն իր օրինաչափ ամրագրումն է ստացել նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 263-րդ կետում:³²

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև մաքսային հսկողության և գերատեսչական վերահսկողության հարաբերակցության հետ կապված հարցերը: Այսպես, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում վերադաս մաքսային մարմինը կամ մաքսային մարմնի վերադաս պաշտոնատար անձը ցանկացած ժամանակ իրավունք ունի վերադաս մաքսային մարմնի գերատեսչական վերահսկողության կարգով չեղյալ ճանաչելու կամ փոփոխելու մաքսային գործի բնագավառում այլ մաքսային մարմնի կամ մաքսային մարմնի այլ՝ ավելի ցածր պաշտոնատար դիրք գրավող պաշտոնատար անձի՝ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումը, ինչպես նաև ձեռնարկելու Միության մաքսային օրենսդրությամբ և մաքսային գործի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված միջոցներ՝ ոչ իրավաչափ որոշում կայացրած մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի ոչ իրավաչափ գործողությունների (անգործության) նկատմամբ:

Վկայակոչված իրավադրույթի առկայությունն, ըստ էության, մաքսային մարմնի վերապահված իրավական հնարավորությունն է գերատեսչական վերահսկողության կարգով վերացնելու ստորադաս մաքսային մարմնի՝ կիրառելի օրենսդրության դրույթներին հակասող որոշումները: Դրա ամրագրման նպատակահարմարությունն ակնհայտ է այնքանով, որքանով առանձին դեպքերում վարչական կարգով անձանց

³¹ Տե՛ս թիվ ՎԴ/3633/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 04-ի որոշումը: www.datalex.am

³² Ընդունվել է 29.05.2014թ.. ուժի մեջ է մտել 02.01.2015թ. ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092) Հոդ.24:

իրավունքների պաշտպանությունն առավել օպերատիվ է և իրական, դրանով ավելի սեղմ ժամկետներում են վերացվում իրավունքի խախտումները: Պետք է նկատի ունենալ, որ խնդրո առարկա ինստիտուտը չի ներառվում մաքսային հսկողության կառուցակարգի շրջանակներում: Այն մաքսային հսկողության ձև չէ, ուղղակիորեն միտված չէ անձանց կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման պահին դրանց օրինականության գնահատմանը, թեպետև արդյունքում ոչ անմիջականորեն կարող են իրավունքներ և պարտականություններ ծագել նաև մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համար: Այս իմաստով պետք է համաձայնել մասնագիտական գրականության մեջ տեղ գտած այն կարծիքին, որ գերատեսչական վերահսկողության արդյունքում հայտարարատուների համար որևէ իրավական հետևանք չի առաջանում: Հետևապես, գերատեսչական վերահսկողության արդյունքում այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք շոշափում են հայտարարատուների և շահագրգիռ անձանց շահերը և վերաբերում նրանց կողմից ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ կատարելու պահանջներին, կարող են կենսագործվել բացառապես մաքսային հսկողության օրենքով նախատեսված ձևերով:³³ Խնդրո առարկա ինստիտուտները ենթադրում են դրանցով հետապնդվող բոլորովին տարբեր նպատակներ: Մաքսային հսկողությունն ուղղակիորեն ենթադրում է վարչարարություն՝ անձանց համար ուղղակիորեն իրավական և փաստական հետևանքներ առաջացնող միջոցառումների համակարգ, մինչդեռ մաքսային մարմինների համակարգում գերատեսչական վերահսկողությունն առավելապես ներքին ուղղվածություն ունի և ուղղված է մաքսային մարմինների համակարգի ներսում թույլ տրված բացթողումների և թերությունների վերացմանը, որոնց արդյունքում, իհարկե, բոլորովին հնարավոր է, որ անձանց համար ոչ ուղղակիորեն, միջնորդավորված ձևով առաջանան համապատասխան իրավական հետևանքներ:

Հատկանշական է, որ գերատեսչական վերահսկողության իրականացումը կարգավորող 16-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթի շրջանակներում նախատեսված չէ կոնկրետ ժամկետային սահմանափակում վերադաս մաքսային

³³ Ст' у Артемьев А.А. Таможенные проверки после выпуска товаров: Проблемы процедур: Налоговая политика и практика. 2008, № 7, էջ 10-15:

մարմնի կամ դրա պաշտոնատար անձի համար մաքսային մարմնի կողմից կայացված ենթադրյալ ապօրինի որոշումը վերացնելու համար: Ստացվում է այնպես, որ վերջինս իրավասու է ցանկացած ժամանակ վերացնելու մաքսային մարմնի կամ մաքսային մարմնի այլ՝ ավելի ցածր պաշտոնատար դիրք գրավող պաշտոնատար անձի՝ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումը, որպիսի իրավիճակը, գտնում ենք, թույլատրելի չի կարող համարվել իրավակարգավորման կանխատեսելիության և որոշակիության սկզբունքների ապահովման իմաստով: Ուշագրավ է, որ այն դեպքերում, երբ *վերը հիշատակված որոշումը գերատեսչական վերահսկողության կարգով չեղյալ ճանաչելուց (փոփոխելուց) հետո պահանջվում է մաքսային գործի բնագավառում նոր որոշման ընդունում, այդպիսի որոշումն ընդունվում է մաքսային հսկողության անցկացման համար սահմանված ժամկետներում (Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մաս):* Փաստորեն, օրենսդիրը մաքսային հսկողության համար սահմանված ժամկետների պահպանման պարտադիրությունը նախատեսել է բացառապես վերացված որոշումից հետո նոր որոշման ընդունման անհրաժեշտության պարագայում: Մինչդեռ, ընդհանուր առմամբ չի նախանշվել մաքսային հսկողության ժամկետներով կաշկանդվածության պահանջ: Հաշվի առնելով գերատեսչական վերահսկողության և մաքսային հսկողության ինստիտուտների միջև առկա անխզելի ու օբյեկտիվ կապը՝ գտնում ենք, որ գերատեսչական վերահսկողությունն էլ պետք է ողջամտորեն սահմանափակվեր նշված մաքսային հսկողության համար սահմանված ժամկետով: Հակառակ դեպքում, գերատեսչական վերահսկողության ժամկետները չեն թղթակցում մաքսային հսկողության համար սահմանված ժամկետների հետ այն դեպքերում, երբ օրինակ, մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի որոշումը գերատեսչական վերահսկողության կարգով չեղյալ ճանաչելուց (փոփոխելուց) հետո չի պահանջվում մաքսային գործի բնագավառում նոր որոշման ընդունում: Մինչդեռ, Միության մաքսային օրենսդրությունը գերատեսչական վերահսկողության դեպքում միայն նշված դեպքերի հետ է կապում եռամյա ժամկետի գործողությունը, ինչը, գտնում ենք, ընդունելի չէ մաքսային իրավահարաբերություններում կայունության և որոշակիության ապահովման տեսակետից:

Քննարկվող ինստիտուտն իր համակարգային ամբողջականության մեջ դիտարկելու համար անհրաժեշտ է կոնկրետացնել նաև դրա խնդիրները: Հատկանշական է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով այն ամրագրված էր որպես Հայաստանի Հանրապետության մաքսային քաղաքականության նպատակ: Գործող օրենսդրությամբ դեռևս հստակեցված չեն մաքսային մարմինների նպատակները, խնդիրները և դրանց իրականացմանը միտված գործառույթները: Մասնավորապես, Միության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով մաքսային հսկողությունը նախատեսվել է որպես մաքսային մարմինների խնդիր, մինչդեռ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը մաքսային հսկողության իրականացումը դիտարկում է մաքսային մարմինների պարտականությունների համակարգում: Ակներև է, որ այս հանգամանքն ունի ելակետային նշանակություն սուբյեկտ-գործառույթ-լիազորություն կապի ներդաշնակության ապահովման իմաստով: Ինչպես ամրագրված է Հայաստանի Հանրապետության 2015թ. սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում, Հայաստանի Հանրապետության համար առանցքային խնդիր շարունակում է մնալ պետաիշխանական լիազորություններով օժտված մարմինների սահմանադրական գործառույթների ու իրավասության ներդաշնակումը, դրանց հայեցողության սահմանների հստակեցումը, իրավունքով իշխանության սահմանափակման իրական նախադրյալների ստեղծումը: Դա հիմնական ճանապարհն է հաղթահարելու համար սուբյեկտիվիզմի ու կամայականության դրսևորումները, ստվերային երևույթները՝ պետաիշխանական լիազորություններն իրականացնելիս»:³⁴ Միաժամանակ, տեղին է հիշատակել նաև Գ.Գ.Հարությունյանի պնդումն առ այն, որ սահմանադրական իրողությունը, անտարակույս, քաղաքակրթության նվաճումներից է: Խնդիրն այդ նվաճման հնարավորությունները մարդկանց բարօրության համար առավելագույնս գործադրելու մեջ է:³⁵

Հատկանշական է, որ ինչպես նշվեց, Օրենքում, ի տարբերություն Միության օրենսգրքի, մաքսային հսկողության իրականացումը դիտարկվել է ոչ թե որպես

³⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014թ. հոկտեմբեր, էջ 6:

³⁵ Տե՛ս Գ.Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ. Եր.: Նժար, 2005թ., էջ 8:

մաքսային մարմինների խնդիր, այլ մաքսային մարմինների գործառույթ (Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), ինչը, գտնում ենք, առավել համապատասխանում է քննարկվող ինստիտուտի էությանը: Ակներև է, որ գործունեության նույն ձևը չի կարող միաժամանակ դիտվել և՛ գործառույթ, և՛ խնդիր: Վերջիններիս միջև անհրաժեշտ է իրականացնել որոշակի տարբերակում: Խնդիրն օրենսդրության տվյալ ճյուղի հիմնական նպատակի իրականացմանը միտված անհրաժեշտ գործիք է, որն անխուսափելիորեն ենթադրում է նաև որոշակի գործառույթների իրականացում: Ինչպես նշում է Գ.Բ.Դանիելյանը, «Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնց թվում, ի թիվս այլնի, ներառվում է նաև մաքսային հսկողության և ձևակերպումների իրականացումը»³⁶ Այլ կերպ ասած՝ գործում է գործառույթ-խնդիր-նպատակ հաջորդական կապի կառուցակարգը: Մաքսային մարմինները, իրականացնելով արդյունավետ մաքսային հսկողություն, ապահովում են այնպիսի խնդիրների լուծումը, ինչպիսիք են՝ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ խախտումների կանխարգելումը, բացահայտումը, մաքսավճարների, մաքսատուրքերի և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների գանձման ապահովումը, արժույթային արժեքների փոխադրման համար սահմանված կարգի պահպանումը և այլն: Նշված հիմնարար խնդիրները, ըստ էության, ուղղված են մեկ միասնական նպատակի կենսագործմանը, որն ուղղակիորեն բխում է մաքսային գործի նպատակից, այն է՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության, տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովումը:

Այսպիսով, գտնում ենք, որ մաքսային հսկողության իրականացումն ինքնին չի կարող համարվել մաքսային մարմինների խնդիր: Այն պարզապես մաքսային մարմիններին վերապահված գործառույթ է, որի միջոցով վերջիններս լուծում են իրենց առջև դրված խնդիրները: Հետևապես, նպատակահարմար չենք համարում նաև դրա ամրագրումը Միության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում՝ որպես մաքսային մարմինների հիմնական խնդիր:

³⁶ Տե՛ս Դանիելյան Գ.Բ. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ - Երևանի պետ. համալս.- ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 656-657:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման ինստիտուտների հարաբերակցության հարցը: Ինչպիսիքն այն է, որ կարգավորման առարկաների մասով նշված ինստիտուտները սերտորեն փոխկապակցված են, ինչը, բնականաբար, պահանջում է որոշարկել դրանց հարաբերակցման ելակետերը: Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ ինչպես Միության օրենսգրքում, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծում տրված չէ մաքսային ձևակերպման իրավական բնորոշումը:³⁷ Իրավաբանական գրականության մեջ մաքսային ձևակերպման վերաբերյալ արտահայտված մոտեցումները տարբեր են: Կ.Ա.Բեկյաշևը և Ե.Գ.Մոիսևը մաքսային ձևակերպումը բնորոշում են որպես մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման հետ կապված բոլոր գործողությունների իրավաբանական ձևակերպում:³⁸ Հեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ մաքսային ձևակերպումը մաքսային օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված գործողությունների կարգ է: Ի.Վ. Տիմոշենկոյի համոզմամբ մաքսային ձևակերպումը մաքսային մարմինների գործողությունների համակցություն է, որն ուղղված է մաքսային օրենսդրության նորմերի պահպանման ապահովմանը:³⁹

Մեր համոզմամբ, որպես մաքսային գործի բաղադրիչ՝ մաքսային ձևակերպման ինստիտուտը դիտարկելու համար անհրաժեշտ է հստակեցնել դրա տեղը մաքսային քաղաքականության միջոցների համակարգում:

Այսպես, Միության օրենսգրքի մի շարք նորմերի, (*մասնավորապես, 150-րդ հոդվածի 3-րդ մաս, 96-րդ հոդված և այլն*) բովանդակային-համադրված վերլուծությունից բխում է, որ Եվրասիական տնտեսական միություն ժամանման պահից ապրանքը ենթակա է մաքսային հսկողության: Ընդ որում, մաքսային հսկողությունն իրականացվում է փաստի ուժով և դրա համար որևէ նախնական որոշում կամ թույլտվություն անհրաժեշտ չէ: Այդ մասին է վկայում նաև 1973 թվականի մայիսի 18-ին Կիոտոյում ստորագրված՝ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման եվ

³⁷ Տե՛ս Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայք www.eaeunion.org:

³⁸ Տե՛ս Бекашев К.А., Моисеев Е.Г. Таможенное право. Учебник, 2-е изд. М.: Проспект, 2008, էջ 103:

³⁹ Տե՛ս Тимошенко И.В. Таможенное право России. Ростов н/Д «Феникс», 2001, էջ 306:

ներդաշնակեցման մասին» Կիոտոյի միջազգային կոնվենցիան, որի 6.1-րդ ստանդարտն ամրագրում է անվերապահ պահանջ մաքսային հսկողության ենթարկելու բոլոր ապրանքները՝ ներառյալ փոխադրամիջոցները, որոնք մուտք են գործում մաքսային տարածք կամ դուրս են գալիս այդ տարածքից՝ անկախ այն փաստից, թե դրանք ենթակա են տուրքեր և հարկեր գանձելու, թե՛ ոչ: Նույնատիպ իրավակարգավորում սահմանված է նաև Միության օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մաքսային հսկողություն իրականացնելիս, մաքսային մարմինների կողմից դրա իրականացման համար որեւէ թույլտվություն, հանձնարարագիր կամ որոշում չի պահանջվում, բացառությամբ օրենսգրքով նախատեսված դեպքերի: Միաժամանակ, «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռներն ու այլ գույքը ենթակա են սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական վերահսկողության և մաքսային հսկողության:⁴⁰Այլ կերպ ասած՝ մաքսային հսկողության սկիզբն ուղղակիորեն պայմանավորվում է Միության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման փաստով: Բնականաբար, Միության տարածք ապրանքի ներմուծման պահ

ից պետք է որոշարկվի ապրանքի բացթողնման իրավական ընթացակարգի պայմանները, որպիսի գործընթացն էլ իրագործվում է հենց մաքսային ձևակերպման ինստիտուտի միջոցով: Փաստորեն, մաքսային ձևակերպումն ավարտվում է կոնկրետ մաքսային ընթացակարգի բովանդակության մեջ ներառվող պահանջների կենսագործմամբ: Հասկանալի է, որ ձևակերպման գործողությունն ինքնին պայմանավորված է ընտրված մաքսային ընթացակարգով, դրա շրջանակներում ներառվող մաքսային վճարներով: Թերևս, հենց դա է պատճառը, որ ինչպես նշվեց, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի նախագծով, ինչպես նաև Միության օրենսգրքով մաքսային ձևակերպումը՝ որպես առանձին մաքսային-իրավական ինստիտուտ, չի նախանշվել: Այն ամրագրվել է առանձին մաքսային ընթացակարգերի կիրառության կարգը կարգավորող դրույթներում, որոնք ամրագրում են համապատասխան

⁴⁰ Ընդունվել է 20.11.2001թ., ուժի մեջ է մտել 25.12.2001թ. ՀՀՊՏ 2001.12.25/41 (173):

մաքսային ընթացակարգերով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման պայմանները: Մինչդեռ, մաքսային հսկողության իրականացումը որևէ կերպ կախվածության մեջ չի դրվում մաքսային ընթացակարգից: Այն պետության կողմից իրականացվող հսկողական գործունեության բաղադրիչ է, որն ամենևին չի դադարում իրականացվել անգամ ապրանքի բացթողումից հետո:

Այս իմաստով պետք է նկատի ունենալ, որ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» Կիոտոյի միջազգային կոնվենցիայի E5-F9 կետը կիրառում է «clearance» (մաքսային մաքրում) արտահայտությունը, որի բովանդակությունը, ըստ էության, ամբողջապես համընկնում է ներպետական օրենսդրության շրջանակներում դեռևս իրավական ամրագրում չունեցող «մաքսազերծում» եզրույթին: Կոնվենցիայի E5./F9. կետը «Մաքսազերծումը» բնորոշում է որպես մաքսային ձևակերպումների իրականացումը, որն անհրաժեշտ է ապրանքը ներքին սպառման համար բացթողելու, արտահանելու կամ այլ մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար: Միաժամանակ, Կոնվենցիայի E24./F20. կետը, «ապրանքների բացթողում» է դիտարկում մաքսային ծառայության գործողություն, որով թույլատրվում է համապատասխան անձանց տնօրինել ապրանքները, որոնց նկատմամբ իրականացվել է մաքսազերծում:

Այլ կերպ ասած՝ մեր համոզմամբ նշված հասկացությունները հարաբերակցվում են հետևյալ կերպ: Մաքսային մաքրումը (մաքսազերծումը) մաքսային ձևակերպումների ամբողջություն է: Մաքսային բոլոր ձևակերպումների ամբողջությունն ինքնին ենթադրում է ապրանքի մաքսային մաքրում: Ապրանքի մաքսային մաքրման ողջ ընթացքում՝ մաքսային ձևակերպումների ժամանակ, ապրանքը գտնվում է մաքսային հսկողության ներքո: Բայցևայնպես, մաքսային հսկողության իրականացումը չի սահմանափակվում սոսկ մաքսային մաքրման գործընթացով: Այն կարող է իրականացվել նաև կոնկրետ հայտարարատուի հայտարկած մաքսային ընթացակարգով ապրանքի բացթողնման պահից հետո: Բանն այն է, որ գործող օրենսդրությունը մաքսային մարմիններին իրավունք է վերապահում իրականացնել մաքսային հետբացթողումային հսկողության ձև համարվող մաքսային ստուգում՝ պարզելու անձանց կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և

Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը (*Մաքսային միության մաքսային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մաս*): Մինչդեռ, ներպետական օրենսդրությամբ չի ամրագրվել մաքսային մաքրումը (մաքսագերծումը)՝ որպես մաքսային բոլոր ձևակերպումների ավարտ:

Նշված փուլերի առանձնացումն ակնհայտորեն պայմանավորված է նաև դրա գործնական նշանակությամբ: Բանն այն է, որ ապրանքների՝ մաքսային հսկողության տակ գտնվելն ուղղակիորեն ենթադրում է նաև վերջիններիս իրավական կարգավիճակի որոշակի սահմանափակում: Մասնավորապես, Օրենքի 128-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ արգելվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնումը, բեռնաթափումը, փոխաբեռնումը, փաթեթների վնասվածքների վերացումը, փաթեթների բացումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը կամ այդ ապրանքների կամ դրանց ուղեկցող փաթեթների վրա դրված մաքսային ապահովման միջոցները փոխելը: Բնական է, որ հիշյալ սահմանափակումները կիրառվում են ապրանքի մաքսային հսկողության տակ գտնվելու ժամանակահատվածում, ինչը պայմանավորված է այն իրողությամբ, որ մաքսային հսկողության ներքո ապրանքների իրավական կարգավիճակն էականորեն սահմանափակված է այնքանով, որքանով դեռևս չի որոշվել հայտագրված մաքսային ընթացակարգով դրանց ձևակերպման հարցը: Հենց այդ ելակետով է պայմանավորված մաքսային հսկողության առարկա ապրանքների նկատմամբ կատարվող որոշ գործողությունների, մասնավորապես, դրանց հանձնման, օտարման, ոչնչացման, փաթեթավորման և այլ գործողությունների արգելումը:

Բացի այդ, Միության օրենսգրքի 104-րդ հոդվածն ուղղակիորեն կարգավորում է մաքսային հսկողության ժամանակ ոչ իրավաչափ վնաս հասցնելու անթույլատրելիության հետ կապված հարցերը: Բնականաբար, հիշյալ նորմի գործնական կիրառումն ապահովելու համար ելակետային նշանակություն ունի մաքսային հսկողության իրականացման ժամկետների որոշարկումն այնքանով,

որքանով հենց դրանից է մեծապես կախված վնասի պատճառումը մաքսային հսկողության ժամանակ տեղի ունենալու փաստի հաստատումը:

Հատկանշական է նաև, որ Միության օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը մաքսային հսկողության իրականացման տարբերակված ժամկետներ է նախատեսում՝ ըստ առանձին մաքսային ընթացակարգերի: Հիշյալ հանգամանքներով պայմանավորված՝ մաքսային հսկողության իրականացման ժամկետների ճշգրտումը, մաքսային օրենսդրության այլ ինստիտուտների հետ մաքսային հսկողության հարաբերակցության հարցի քննարկումը ձեռք է բերում ելակետային նշանակություն:

Ակնհայտ է, որ ցանկացած ինստիտուտի ինկորպորացման ժամանակ անհրաժեշտ է հստակ պատկերացում կազմել իրավունքի տվյալ ճյուղի համակարգում դրա դերի, տեղի և գործառությանն առաքելության մասին: Միայն այդպիսի հստակ հիմնավորված, դոկտրինալ պատկերացումը կարող է համապատասխանել սուբյեկտ-գործառույթ-լիազորություն եռամիասնականության ներդաշնակության գաղափարին: Այս իմաստով առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև մաքսային հսկողության ինստիտուտի տեղը Միության օրենսգրքի համակարգում: Այսպես, խնդիրն այն է, որ դրա իրավակարգավորմանը վերաբերող դրույթները նախատեսված են պանդեկտ համակարգի հիման վրա կազմված Միության օրենսգրքի ընդհանուր մասում, որպիսի մոտեցումը միանշանակորեն ընդունվել չի կարող: Բանն այն է, որ մաքսային հսկողությունը մաքսային իրավական մյուս ինստիտուտների համեմատությամբ չունի ընդհանուր բնույթ: Այն ընդհանրական նշանակություն չունի մաքսային իրավական մյուս ինստիտուտների կիրառման համար: Առավելևս, այն պայմաններում, երբ Միության օրենսգրքով հատուկ մասը սկսվում է Մաքսային Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումով, մինչդեռ ապրանքի նկատմամբ մաքսային հսկողությունն իրականացվում է դրա տեղափոխման ժամանակ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դրանից հետո: Հետևապես, անգամ հիշյալ ինստիտուտների կիրառման ժամանակագրական կապի իմաստով մաքսային հսկողությունն իրավական առումով չի կարող դասվել մաքսային իրավունքի ընդհանուր մասի ինստիտուտների շարքին: Նշված մոտեցումը հիմնավորվում է նաև մաքսային իրավունքի տեսական գրականությամբ առաջադրվող մաքսային իրավունքի

ծրագրերով, որոնցով նշված ինստիտուտը ներառված է հատուկ մասի շրջանակներում ուսումնասիրվող ինստիտուտների շարքում:⁴¹

Այսպիսով, ակներև է, որ մաքսային հսկողության հասկացության բովանդակության սահմանների որոշարկումը, մաքսային իրավունքի համակարգում դրա տեղի և հարակից ինստիտուտների հետ հարաբերակցության սահմանների ճշգրտումն ունի չափազանց էական նշանակություն: Բոլոր դեպքերում փաստ է, որ Միության օրենսգիրքն այս խնդիրների լուծման մասով զերծ չէ հիմնարար, հայեցակարգային բնույթի թերություններից, որոնք ուղղակիորեն պայմանավորում են համապատասխան փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը: Այս իմաստով գտնում ենք, որ նշված խնդիրների լուծումը նոր մակարդակի վրա կբարձրացնի մաքսային հսկողության ինստիտուտի իրավակարգավորումը: Քննարկվող ինստիտուտի առնչությամբ առկա կոնվենցիոնալ և միութենական իրավակարգավորումները բոլոր դեպքերում պետք է համարժեք արտացոլումը և տեղայնացումը ստանան ներպետական օրենսդրությամբ, որպիսի հանգամանքը ներկայումս դրված է մաքսային գործի մաքսային կարգավորման առանցքում: Հակառակ դեպքում, ներպետական մաքսային իրավակարգավորումները չեն թղթակցի ինտեգրացիոն կազմավորումների շրջանակում ընդունված փաստաթղթերի պահանջներին՝ խութեր առաջացելով մաքսային վարչարարության ընթացքում:

§2. Մաքսային հսկողության իրականացման սկզբունքները և դրանց կենսագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Մաքսային իրավական ցանկացած ինստիտուտ իրականացվում է տվյալ ինստիտուտի համար ելակետային նշանակություն ունեցող կոնկրետ որոշակի հիմնարար դրույթներին համապատասխան: Բացառություն չէ նաև մաքսային հսկողության ինստիտուտը, որի իրականացմանն օրենսդրորեն առաջադրվել են համապատասխան պահանջներ և ուղենիշներ: Ակներև է, որ նմանատիպ

⁴¹ Տե՛ս Драганова В.Г., Рассолова М.М. Таможенное право: Учебное пособие, -М.: ЮНИТИДАНА, 2001. էջ 636-639, Տե՛ս նաև Молчанова О.В., Коган М.В. Таможенное дело с учебное пособие., 2-е изд., доп. и испр.-Ростов н/Д. Феникс. 2007, էջ 181-183:

վավերապայմանների օրենսդրական ամրագրումը հնարավորություն է տալիս իրավակիրառողին արդյունավետորեն կողմնորոշվելու իրավաբանորեն արժևորվող սեփական վարքագծի ընտրության ժամանակ, ապահովում է իրավական կարգավորման որոշակիություն և մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխող անձանց համար ստեղծում է նպաստավոր պայմաններ համադրելու իրենց վարքագիծը օրենսդրությամբ ամրագրված վարքականոններին: Բնական է, որ սկզբունքների ցանկի ու բովանդակության որոշարկումն այս պարագայում հանդես է գալիս որպես մաքսային հսկողությունը կազմող գործառնությունների իրավաչափության ցուցիչ: Ասվածը հիմնավորվում է հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ խնդրո առարկա ինստիտուտի բովանդակության մեջ ներառվող բաղադրիչներն իրենց էությամբ ենթադրում են անձանց իրավական կարգավիճակի էական սահմանափակումներ, որպիսի իրավիճակը ողջամտորեն պահանջում է առավել հստակ և որոշարկված իրավակարգավորման մակարդակ:

Այսպես, Օրենքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *արգելվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնումը, բեռնաթափումը, փոխաբեռնումը, փաթեթների վնասվածքների վերացումը, փաթեթների բացումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը կամ այդ ապրանքների կամ դրանց ուղեկցող փաթեթների վրա դրված մաքսային ապահովման միջոցները փոխելը*: Բնական է, որ նման սահմանափակումների պայմաններում մաքսային հսկողության շրջանակներում ներառվող միջոցառումների իրականացման ընդհանուր կողմնորոշիչներ նախատեսելու դեպքում անհամեմատ ավելի դյուրին է դառնում իրավակիրառողի գործունեությունը: Հակառակ դեպքում բավական մեծ է անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման հավանականությունը: Ինչպես նշում է Տ.Ն.Տրոշկինան, սկզբունքները երաշխավորում են իրավաստեղծագործության շարունակականությունն ու անընդհատությունը, ապահովում են մաքսային օրենսդրության և մաքսային քաղաքականության միջև

փոխկապակցվածությունը:⁴² Դրանք առավել ընդհանուր, հայեցակարգային բնույթի դրույթներն են այն մասին, թե ինչ ձևով պետք է կազմակերպվի մաքսային մարմինների գործունեությունը մաքսային հսկողության իրականացնելիս և ինչպես պետք է կառուցվեն անձանց և մաքսային մարմինների միջև իրավահարաբերությունները դրա ընթացքում:⁴³

Ավելորդ չէ հիշատակել նաև այն իրողությունը, որ Միության օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մաքսային մարմիններն իրենց իրավասության սահմաններում իրականացնում են հսկողության այլ տեսակներ, այդ թվում՝ արտահանման, արժույթային և ճառագայթային հսկողություն՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, հսկողության նշված տեսակների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման սկզբունքները կիրառելի չեն այնքանով, որքանով դրանց իրականացումը կարգավորվում է այլ իրավական ակտերով: Բացի այդ, հսկողության նշված տեսակները չեն իրականացվում բացառապես մաքսային մարմինների կողմից:

Մինչև մաքսային հսկողության սկզբունքները որոշարկելը նախ և առաջ, փաստենք, որ հանրային իրավունքի ոլորտում մաքսային մարմինների՝ արտաքին բնույթ ունեցող գործողություններն իրենցից ներկայացնում են սովորական վարչարարություն, և դրանց նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքները:⁴⁴ Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը վարչարարությունը բնորոշում է որպես *վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական*

⁴² Տե՛ս Трошкина Т.Н. Правовые принципы таможенно-тарифного регулирования // Известия высших учебных заведений. Правоведение, 2003, № 1 (246), էջ 61:

⁴³ Տե՛ս Степаненко С.М. Система принципов организации таможенного контроля товаров и транспортных средств // Транспортное право. 2012., № 3 էջ 21-22:

⁴⁴ Հաշվի առնելով, որ մաքսային հսկողության նկատմամբ կիրառելի են վարչարարության ընդհանուր հիմնադրույթները՝ սույն աշխատության մեջ ձեռնպահ կմնանք դրանց վերլուծությունից՝ քննարկման առարկա դարձնելով բացառապես ուղղակիորեն մաքսային հսկողության իրականացումը կարգավորող սկզբունքները:

կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ»⁴⁵

Մաքսային հսկողության ինստիտուտը գնահատման առարկա դարձնելով վարչարարության հատկանիշների համատեքստում՝ կարող ենք փաստել, որ դրա կենսագործումն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ, որը վարչարարության բնութագրիչներից մեկն է: Բացի այդ, մաքսային հսկողությունն արտաքին ներգործություն ունեցող գործունեության ձև է, իրականացվում է վարչական մարմնի ներհամակարգային շրջանակներից դուրս:

Ասվածը հիմնավորվում է նաև դատական պրակտիկայի շրջանակներում վարչարարությանը վերագրվող հատկանիշների վերլուծությամբ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում ամրագրված՝ «վարչական մարմիններ», «վարչարարություն» եզրույթների սահմանումների, ինչպես նաեւ 2007թ. նոյեմբերի 28-ի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթի համակարգային վերլուծության արդյունքում բացահայտել է վարչարարության հետևյալ բովանդակությունը. «...վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի՝ հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում:»⁴⁶

⁴⁵ Ընդունվել է 18.02.2004թ., ուժի մեջ է մտել 31.12.2004թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18 (317):

⁴⁶ Տե՛ս թիվ ԵԱԲԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. դեկտեմբերի 3-ի որոշումը:

Վերը բերված որոշման պահանջները համադրելով մաքսային հսկողության էության, դրա հատկանիշների հետ՝ կարելի է փաստել, որ որպես գործունեության ձև՝ մաքսային հսկողության նկատմամբ կիրառելի են բոլոր այն սկզբունքները, որոնք վարչարարության իրականացման համար ունեն ելակետային նշանակություն:

Հիշատակվածի համատեքստում գտնում ենք, որ մաքսային հսկողության սկզբունքների շրջանակն ու բովանդակությունը որոշարկելու համար որպես իրավական չափանիշ՝ պետք է դասակարգման հիմքում դնել ընդհանրապես մաքսային մարմինների գործունեությանը՝ որպես վարչարարությանը բնորոշ և հատկապես մաքսային հսկողության իրականացմանը վերաբերող, այսպես կոչված, հատուկ դրույթների առկայությունը:

Պետք է նկատել, որ Օրենքի 8-րդ հոդվածն ընդհանուր առմամբ մատնանշում է մաքսային մարմինների գործունեության սկզբունքները, որոնց մի մասն ակնհայտորեն կարող է արժևորվել նաև մաքսային հսկողության դիրքերից: Մինչդեռ, մաքսային հսկողության սկզբունքների շրջանակին և էությանը վերաբերող հարցերը Օրենքում դեռևս բավարար որոշակիությամբ կանոնակարգված չեն, ինչը, կարծում ենք, պետք է համարել օրենսդրական լուրջ բացթողում: Մաքսային մարմինների գործունեության սկզբունքներն առավել ընդհանրական բնույթ ունեն և, մեր համոզմամբ, համադրելի են մաքսային օրենսդրության սկզբունքներին: Մինչդեռ, հատկապես մաքսային հսկողությանը վերաբերող պահանջներն Օրենքը համակարգված չի մատնանշում: Ընդ որում, խնդիրը լուծված չէ նաև «Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան սահմանելու մասին» ՀՀ Կառավարության № 236 որոշմամբ⁴⁷, որով սուկ կարգավորվել են մաքսային հսկողության շրջանակում ներառվող միջոցառումների իրականացման մեթոդական ուղենիշները:⁴⁸

Այսպես, Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, ի թիվս մաքսային մարմինների գործունեության այլ սկզբունքների, որպես մաքսային մարմինների գործունեության սկզբունք՝ նախատեսվել են նաև մաքսային հսկողության իրականացման ընթացքում

⁴⁷ Ընդունվել է 24.03.2001թ., ուժի մեջ է մտել 21.04.2001թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.04.11/11 (143):

⁴⁸ Ծանոթագրություն: Հատկանշական է այն հանգամանքը, որ նշված որոշմամբ չեն կարգավորվել ապրանքների և տրասնպորտային միջոցների հետ հետբացթողումային հսկողության իրականացման մեթոդիկայի առանձնահատկությունները:

օրենսդրությամբ սահմանված դրույթների միատեսակ կիրառման անհրաժեշտությունը և մաքսային հսկողության իրականացման նպատակով մաքսային մարմինների ներկայացրած պահանջների հստակությունը: Մեր համոզմամբ, սակայն, հիշյալ սկզբունքների օրենսդրական ամրագրումը վերախմաստավորման անհրաժեշտություն է ենթադրում: Բանն այն է, որ մաքսային մարմնի կողմից ներկայացված պահանջների հստակության ապահովումը ոչ միայն մաքսային հսկողության առանցքային ելակետ, այլ նաև առհասարակ վարչարարության սկզբունք է, ուստիև, դրա կիրառումը՝ որպես սկզբունք, նպատակահարմար չէ սահմանափակել սոսկ մաքսային հսկողության ընթացքով: Նույն դատողությունը վերաբերում է նաև օրենսդրությամբ սահմանված դրույթների միասնական կիրառմանը, որը դարձյալ ունի ընդհանուր բնույթ իրավակիրառման ամբողջ գործընթացի համար: Ուստիև, գտնում ենք, որ նշված հոդվածում նախատեսված հիշյալ սկզբունքներն անհրաժեշտ է խմբագրել այնպես, որ դրանց գործողությունն անհարկի չեզրագծվի միայն մաքսային հսկողության ժամանակահատվածով:

Ասվածը հիմնավորվում է այն իրողության հաշվառմամբ, որ նման սկզբունքի ամրագրումն առնվազն ենթադրում է օրենսդրական կարգավորման դաշտում այնպիսի նորմերի առկայություն, որոնք հնարավորինս կբացառեն մաքսային մարմնի անհարկի կամայականությունները և իրապես կապահովեն օրենսդրությամբ սահմանված դրույթների միասնական կիրառումը: Այլ կերպ ասած՝ հիշյալ իրավադրույթին համապատասխան պետք է կառուցվեր մաքսային օրենսդրության ողջ համակարգը: Մինչդեռ, Օրենքի մի շարք դրույթներ, մեր համոզմամբ, համադրելի չեն նշված նորմ-սկզբունքների բովանդակությանը: Մասնավորապես, Օրենքի 86-րդ, 78-րդ և 74-րդ հոդվածների բովանդակային-համադրված վերլուծությունից բխում է, որ օրինակ, մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդի սահմանման հարցում նշված նորմի շրջանակներում չի ապահովվել պատշաճ իրավական հետևողականություն: Եվ սա այն դեպքում, երբ մաքսային վարչարարության շրջանակներում մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդի կիրառումը դասվում է գործնական առումով ամենախնդրահարույց ինստիտուտների շարքին և, դրանով պայմանավորված, պետք է առավել համակողմանի իրավակարգավորում ստանար:

Այսպես, Օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ հայտարարատուի հայտարարագրած մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ փարածքային (փարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային) մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս սույն օրենքով սահմանված ժամկետում կազմում և հայտարարատուին են փրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով **մերժման եզրակացություն**, որտեղ հիմնավորվում են հայտարարատուի հայտարարագրած մաքսային արժեքի չափը կամ որոշման եղանակը չընդունելու պատճառները, և նշվում է այն վերադաս մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող է բողոքարկման համար դիմել հայտարարատուն: Մերժման եզրակացության հետ փարածքային մաքսային մարմինները հայտարարատուին ներկայացնում են մաքսային արժեքի չափը և որոշման եղանակը՝ հիմնավորելով նաև սույն օրենքի 85-րդ հոդվածով նախատեսված հերթականությամբ մաքսային արժեքի որոշման մեթոդներով ապրանքների մաքսային արժեքը որոշելու անհնարինությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է նաև, որ փարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ մինչև վերջնական որոշում ընդունելը, բայց ոչ ուշ, քան սույն օրենքի 78-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը հայտարարատուի կողմից ներկայացվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարատուին գրավոր ներկայացնում են գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկում են հայտարարատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնց քննության արդյունքում, նշյալ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում են **որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ** կամ ընդունում են հայտարարատուի ներկայացրած մաքսային արժեքը:

Նույն օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով որպես հաշվարկված մաքսային արժեքի մերժման վերաբերյալ իրավական փաստաթուղթ դիտարկվում է մերժման եզրակացությունը:

Հիշյալ իրավադրույթներում առկա կարգավորումների վերլուծությամբ պարզ է դառնում, որ օրենսդրությամբ սահմանված է մաքսային մարմնի կողմից գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի սահմանումը մերժելու մասին ընդունվող վարչական ակտերի երկու տեսակ՝ «մերժման եզրակացություն» և որոշում «մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու» վերաբերյալ: Մինչդեռ, նշված երկու որոշումների միջև իրենց կիրառական նշանակությամբ առկա չէ որևէ տարբերակում, որը, գտնում ենք, մաքսային հսկողության իրականացման ժամանակ կարող է հարուցել իրավական որոշակիության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակներ: Ինքնին հասկանալի է, որ նման իրավակարգավորումը խնդրահարույց է առաջին հերթին, մաքսային հսկողության իրականացման ընթացքում օրենսդրությամբ սահմանված դրույթների միասնական կիրառման անհրաժեշտության և մաքսային մարմնի ներկայացրած պահանջների հստակության ապահովման իմաստով: Առավելևս, երբ Միության օրենսգրքի 66-րդ հոդվածի ուժով մաքսային հսկողությունն իրականացվում է նաև ապրանքի մաքսային արժեքի նկատմամբ, ընդ որում, ինչպես ապրանքի բացթողումից առաջ, այնպես էլ դրանից հետո: Օրինակ, ապրանքի բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության ձև համարվող արտագնա մաքսային ստուգման ընթացքում, ի թիվս այլ հանգամանքների, գնահատման առարկա է դառնում նաև այն հարցադրումը, թե արդյոք պատշաճ է որոշվել ապրանքի մաքսային արժեքը: Հետևապես, ակնհայտ է, որ առկա կանոնակարգումներն այս հարցի առնչությամբ պետք է լինեն բավականաչափ հստակ: Մինչդեռ, ստացվում է որ դրանք ներկայումս լուրջ մտավախություններ են հարուցում հիշյալ իրավադրույթի հայեցողական կիրառման և հնարավոր չարաշահումների իմաստով:

Ընդ որում, հիշյալ նորմերը նույն խմբագրությամբ առկա էին նաև 2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքում ու գործողության ընթացքում դրանք արդեն իսկ դարձել էին սահմանադրական արդարադատության առարկա: Մասնավորապես, ՀՀ

Սահմանադրական դատարանը, թիվ 1176 թվակիր որոշմամբ անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի և 96-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության խնդրին, արձանագրել է իրավական այն դիրքորոշումը, որ «քննարկվող հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերի համադրված վերլուծությունից պարզ չի դառնում հայտարարարուին վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով մերժման եզրակացության տրամադրման, և մինչև վերջնական որոշում ընդունելը հայտարարարուին գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքների վերաբերյալ գրավոր տեղեկացման հերթականության և հոդվածի համապատասխան մասերում գործածվող «մերժման եզրակացություն» և «վերջնական որոշում» հասկացությունների փոխհարաբերակցության հարցը: Նման վիճակը կարող է վարչական մարմինների հայեցողության սահմանների ոչ իրավաչափ ընդլայնման և մարդու իրավունքների խախտման վրանգ ստեղծել»:⁴⁹

Բայցևայնպես, անգամ ՀՀ Սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումից հետո առկա անորոշությունն Օրենքով չվերացավ և սկզբունքորեն նույնությամբ վերարտադրվեց ՀՀ մաքսային օրենսգրքի իրավակարգավորումը՝ լուրջ խնդիրներ հարուցելով մաքսային մարմինների գործունեության ընթացքում ընդհանրապես, և մաքսային հսկողություն իրականացնելիս մասնավորապես, հայեցողական լիազորությունների պատշաճ և արդարացի կենսագործման համար: Ընդ որում, սա այն պարագայում, երբ նույն Օրենքով որպես մաքսային մարմինների գործունեության սկզբունքներ՝ նախատեսվել են նաև օրինականության և օրենքի առաջ անձանց հավասարության, նրանց իրավունքների ու ազատությունների պահպանման անհրաժեշտության սկզբունքները:

Հետևապես, գտնում ենք, որ խնդրո առարկա սկզբունքը պետք է տեղայնացվեր մաքսային իրավական բոլոր ինստիտուտների իրավակարգավորման ընթացքում, որի արդյունքում կապահովվեր նաև օրինաչափ վարչարարության իրականացումը:

Ինչ վերաբերում է հատկապես մաքսային հսկողության իրականացման սկզբունքներին, ապա պետք է փաստենք, որ իրավաբանական գրականության մեջ

⁴⁹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 01.10.2014թ. թիվ ՍԴՈ-1176 թվակիր որոշումը www.concourt.am

այս հարցի առնչությամբ առկա են տարբեր մոտեցումներ: Անդրադառնալով մաքսային հսկողության իրականացման սկզբունքներին՝ Ա.Բ.Նովիկովը, օրինակ, առանձնացնում է մաքսային հսկողության ամբողջականությունը, դրա բավարարությունն ու ընտրողականությունը, մաքսային հսկողության ձևի կիրառման ժամանակ ռիսկերի կառավարման համակարգի օգտագործումը, մաքսային հսկողության առանձին ձևերից ազատվելու հնարավորությունը, օտարերկրյա պետության մաքսային մարմինների հետ համագործակցությունը, արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների և կազմակերպությունների հետ համագործակցությունը, մաքսային սահմանով ապրանքաշրջանառության արագացման համար նպաստավոր պայմանների ապահովումը, ոչ իրավաչափ վնաս հասցնելու անթույլատրելիությունը, մաքսային հսկողության ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման անվտանգությունը:⁵⁰ Ե.Վ.Սերգեևը, ի թիվս վերը հիշատակվածի՝ առանձնացնում է նաև արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, մարդասիրության, օպերատիվության, արդյունավետության սկզբունքները:⁵¹ Մեր համոզմամբ, մաքսային հսկողության սկզբունքների շրջանակի որոշման հարցում պետք է առաջնորդվել ուղղակիորեն մաքսային հսկողության իրականացմանը վերաբերող դրույթների առկայության ելակետով՝ դրանց շրջանակից բացառելով այն դրույթները, որոնք առհասարակ մաքսային կարգավորման և մաքսային գործի սկզբունքներ են և դրված են մաքսային մարմինների գործունեության առանցքում: Ըստ այդմ, մեր համոզմամբ, մաքսային հսկողության սկզբունքների շրջանակը պետք է սահմանափակել հետևյալ շրջանակով.

- *Համաչափությունը մաքսային հսկողության ձևի (միջոցի) և հետապնդվող նպատակի միջև.*

- *Մաքսային հսկողության իրականացումը՝ հիմնված ռիսկերի կառավարման համակարգի գնահատման վրա:*

⁵⁰ Տե՛ս Новиков А.Б. Таможенный контроль в системе административных процедур таможенного дела. Ученые записки Санкт-Петербургского имени В.Б.Бобкова филиала Российской таможенной академии. 2005, № 2 (24), էջ 20:

⁵¹ Տե՛ս Сергеев Е.В. Таможенный контроль: Проблемы правового регулирования, Дисс. ... канд. юрид. наук. Саратов , 2005, էջ 22-37:

Պետք է նկատել, սակայն, որ վերը հիշատակված սկզբունքներն ուղղակիորեն չեն համընկնում մաքսային հսկողության օրենսդրական սկզբունքներին: Մասնավորապես, Օրենքի 120-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *մաքսային հսկողության իրականացման ժամանակ մաքսային մարմինները կիրառում են ընտրողականության սկզբունքը և սահմանափակվում են Հայաստանի Հանրապետության և Միության մաքսային օրենսդրության դրույթների պահպանման համար բավարար մաքսային հսկողության ձևերով*: Հարկ է նկատել, որ նույն ձևակերպումն առկա է նաև «Մաքսային կարգավորման մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի 161-րդ հոդվածի 3-րդ մասով:⁵² Մինչդեռ, Եվրոպական Միության մաքսային օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն ամրագրում է, որ մաքսային մարմինները կարող են կիրառել իրենց կողմից անհրաժեշտ համարվող ցանկացած ձև:⁵³ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի նախագծի 310-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինները ելնում են մաքսային հսկողության օբյեկտների, մաքսային հսկողության ձևերի և (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների ընտրողականության սկզբունքից:

Օրենքի վկայակոչված իրավադրույթի բովանդակային վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ ընտրողականությունը մաքսային հսկողություն իրականացնող համապատասխան պաշտոնատար անձի գործունեության ուղենիշ է դիսկերի կառավարման հիման վրա գնահատելու մաքսային հսկողության կոնկրետ ձևի ընտրության իրավաչափության հարցը: Այն, ըստ էության, մաքսային մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունն է կիրառելու մաքսային հսկողության ձևերից որևէ մեկը: Ընտրողականությունը մաքսային հսկողության շրջանակներում իրականացվող միջոցառումների ընտրության հայեցողական որոշակի ազատությունն է՝ սահմանափակված գործադրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող համաչափության գաղափարով: Ինչպես նշում է Բ.Ն. Գաբրիչիձեն, անհրաժեշտության դեպքում մաքսային մարմինները մաքսային հսկողության շրջանակում կարող են կիրառել ցանկացած միջոցառում, այսուհանդերձ, նրանք էապես կաշկանդված են ընտրելու այն ձևը, որն անհրաժեշտ է մաքսային

⁵² Ընդունվել է 27.11.2010թ. N 311-ՓՅ:

⁵³ 09.10.2013թ. Եվրոպական միության մաքսային օրենսգրք, № 952/1013: www.eur-lex.europa.eu.

օրենսդրության խնդիրների կենսագործման համար:⁵⁴ Համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Ն.Ա. Գլազունովան, ում համոզմամբ, մաքսային հսկողությունը պետք է սահմանափակվի հիմնական նպատակների իրականացման համար անհրաժեշտ մինիմումով՝ իրականացվելով ընտրողականության հիման վրա և ռիսկերի կառավարման համակարգի առավելագույն կիրառման հնարավորություններով:⁵⁵ Բնորոշ է նաև Ա.Ա.Կոստինի մոտեցումը, որ «ընտրողականություն» եզրի հետ մեկտեղ հավասարապես ընդունելի էր համարում նաև «բավարարություն» եզրը:⁵⁶

Ընդ որում, ինչպես և հայեցողական ցանկացած լիազորության կիրառման պարագայում, այնպես էլ այս դեպքում վարչական մարմինը սահմանափակված է կիրառելու հսկողության այն կառուցակարգը, որն անհրաժեշտ է հետապնդվող նպատակին հասնելու համար: Այլ կերպ ասած՝ մեր համոզմամբ, նշված երկու սկզբունքների հիմնարար դրույթների ամբողջությունն իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան վարչարարության մեջ գործառող հայեցողական լիազորությունների սահմանափակման յուրատիպ դրսևորում մաքսային վարչարարության շրջանակներում:

Նման պայմաններում գտնում ենք, ընտրողականության սկզբունքի առանձնացումը՝ որպես կոնկրետ ինստիտուտի կիրառման առանձին սկզբունք, նպատակահարմար չէ և իր իրավական բովանդակությամբ ամբողջությամբ չի համընկնում դրա հիմքում ընկած գաղափարին: Ակներև է, որ օրենքում թվարկված մաքսային հսկողության իրավական ձևերն ակնհայտորեն պետք է իրականացվեն մաքսային մարմինների կողմից որոշակի ողջամիտ հայեցողությամբ, իսկ ընտրողականության սկզբունքի ողջ իրավական բովանդակությունն այն է, որ հսկողական այդ ձևերն ընտրվում ենք մաքսային մարմինների կողմից: Ստացվում է այնպես, որ վերջինս չունի սկզբունքին բնորոշ ինքնուրույն իրավական-

⁵⁴ Տե՛ս Գաբրիչիձե Բ.Ն. Таможенное право. Учебник для вузов. Отв. редактор проф. -М.: Издательство БЕК, 1995.- էջ 264:

⁵⁵ Տե՛ս Գլազունովա Ն.Ա. Новая философия таможенного контроля в соответствии с Киотской конвенцией // Промышленник России. 2006. N 2:

⁵⁶ Տե՛ս Կոստին Ա.Ա., Подойма Л.Ю. Комплексный подход к развитию системы управления таможенными рисками в рамках Евразийского экономического союза, Вестник Белгородского университета кооперации, экономики и права. 2015. № 2 (54) էջ 251:

գաղափարական բովանդակություն, այլ գործում է որպես վարչական հայեցողության բաղադրատարր՝ հանդես գալով որպես հսկողության իրականացման մեթոդաբանական հիմք: Հետևապես, նշված երկու սկզբունքները՝ ընտրողականությունն ու անհրաժեշտությունն ազատորեն կարող են ներառվել հայեցողական լիազորությունների սահմանափակման և համաչափության սկզբունքների շրջանակներում՝ առավել ևս հաշվի առնելով այն, որ հայեցողական լիազորությունների սահմանափակումը համընդգրկուն և հիմնարար դրույթ է, որը ներառում է նաև կամայական արգելքի, համաչափության, իրավահավասարության ելակետային գաղափարները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 6-րդ): Հիշյալ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն ամրագրում է, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Նման պայմաններում մենք սկզբունքորեն համաձայն չենք իրավաբանական գրականության մեջ տեղ գտած այն կարծիքին, թե ընտրողականության սկզբունքն ամբողջ ծավալով ամրագրված է Կոնվենցիայի 6.2-րդ ստանդարտով:⁵⁷ Բանն այն է, որ վկայակոչված ստանդարտն ընդամենը նախատեսում է, որ մաքսային մարմինները պետք է սահմանափակվեն մաքսային օրենսդրության կատարման միայն անհրաժեշտ միջոցներով: Այլ կերպ ասած՝ մաքսային հսկողության կոնկրետ ձևը պետք է բավարար և անհրաժեշտ լինի լինի կոնկրետ հետապնդվող նպատակին հասնելու համար: Նշված դրույթը ենթադրում է, որ վարչական ընթացակարգերը պետք է լինեն գործնականում պարզեցված: Այն կիրառելի է մաքսային հսկողության կառուցակարգերի, արտահանման ժամանակի և մեթոդիկայի և եկամուտների հավաքագրման ձևի

⁵⁷ St' u Юркин Т.Ю. Правовое регулирование таможенного контроля при перемещении через таможенную границу объектов интеллектуальной собственности. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2009, էջ 59:

նկատմամբ:⁵⁸ Բնական է, որ վկայակոչված նորմ-երաշխիքն ինքնին դեռևս բավարար չէ խոսելու մաքսային հսկողական իրավահարաբերություններում ընտրողականության ինքնուրույն սկզբունքի առկայության մասին: Այն սուկ արձանագրում է ձևի և հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ ողջամիտ հարաբերակցությունը: Հետևապես, ընտրողականությունը սուկ Կոնվենցիայով սահմանված հիմնարար սկզբունքներից մեկի բաղադրիչ է, որը վերաբերում է բացառապես մաքսային հսկողության կոնկրետ գործիքակազմի ընտրությանը:

Այս առումով հատկանշական է Ուկրաինայի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված մոտեցումը: Մասնավորապես, նշված օրենսգրքի 320-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ ընտրողականությունը ենթադրում է, որ մաքսազերծման ժամանակ մաքսային օրենսդրության և միջազգային պայմանագրերի կատարումն ապահովող մաքսային հսկողության ձևերն ու միջոցները մաքսային մարմինների կողմից պետք է կիրառվեն ռիսկերի կառավարման համակարգի հիման վրա:⁵⁹ Այս առումով ուշագրավ է նաև ՀՀ ֆինանսների նախարարի 30.06.2011թ. հրամանի 3.2.2. կետը, որի համաձայն՝ ռիսկերի ցուցիչները իրենցից ներկայացնում են ընտրողականության չափանիշների հստակ արտահայտումը:⁶⁰

Ուշագրավ է նաև, որ Օրենքի 120-րդ հոդվածի 4-րդ մասն ընդհանուր առմամբ ամրագրում է ընտրողականության սկզբունքի կիրառելիությունը մաքսային հսկողության իրականացման ժամանակ, որպիսի ձևակերպման պարագայում ստացվում է, թե մաքսային ծառայողին վերապահված է ընտրողական հիմունքներով մաքսային հսկողություն իրականացնելու իրավասություն: Օրինակ, «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 120-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մաքսային հսկողության ընտրողականությունը ներառում է մաքսային հսկողության ձևի և օբյեկտի ընտրողականությունը:⁶¹

⁵⁸ Տե՛ս David Widdowson, *Managing risk in the customs context* Luc De Wulf and José B. Sokol, *Customs Modernization Handbook*, Washington, 2005, էջ 97:

⁵⁹ Ուկրաինայի Հանրապետության մաքսային օրենսգրքը ընդունվել է 13.03.2012, No 4495-VI: www.sfs.gov.ua

⁶⁰ Ընդունվել է 30.06.2011թ., ուժի մեջ է մտել 11.09.2011թ. ՀՀԳՏ 2011.09.01/21 (404):

⁶¹ Ընդունվել է 16.12.2013թ. 10.01.2014թ. խմբագրությամբ, № 129-3 www.pravo.by:

Մինչդեռ, ակներև է, որ ընտրողականությունը չի կարող վերաբերել ընդհանրապես մաքսային հսկողության իրականացմանը: Այն անհրաժեշտաբար և մշտական հիմունքներով իրականացվող գործընթաց է: Նշված գործընթացում ընտրողականության դերը սուկ մաքսային հսկողության ձևերի (միջոցների) կիրառման ընթացքում դրանց աստիճանի որոշման հարցում մաքսային մարմինն ընձեռնված հայեցողության կենսագործումն է:

Ընդ որում, ինչպես ցանկացած հայեցողական լիազորություն, մաքսային հսկողության ձևերի և միջոցների կիրառման աստիճանի հարցում առկա հայեցողական ազատությունն էլ պետք է իրականացվի պիտանիության, անհրաժեշտության և չափավորության ուղենիշների պահպանմամբ, որոնք իրենց համակցությամբ անհրաժեշտ և բավարար հիմք են ձևավորում մաքսային հսկողության ինստիտուտի օրինաչափ կիրառումն ապահովելու համար: Նման պայմաններում պարզապես նպատակահարմար չէ մաքսային վարչարարության մեջ ներդնել սկզբունք, որն ինքնին վարչարարության մեկ այլ հայտնի սկզբունքի բաղադրատարր է: Աներկբա է, որ այս համատեքստում «սկզբունք» չի կարող համարվել այն, ինչն ընդամենը վերաբերում է հսկողության կոնկրետ կառուցակարգի կիրառման իրավասությանը, այն որ տվյալ միջոցն ընտրվում է մաքսային մարմինների կողմից: Դրույթին տրվում է սկզբունքի նշանակություն, երբ ողջամտորեն սահմանվում են դրա կիրառման շրջանակները հանրային շահերից բխող օբյեկտիվ կողմնորոշիչներով: Այս իմաստով բոլորովին պատահական չէ, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծի սկզբնական տարբերակում չէր կիրառվում նշված եզրը, ինչն առավել չափով համապատասխանում էր նաև Կոնվենցիայի իրավակարգավորումներին: Վերջին հաշվով, օրենսդրության տարբեր ճյուղերի, ներառյալ դրանց սկզբունքների տարբերակումն ու տիպականացումը պետք է իրականացվի ոչ թե մեխանիկական, այլ բովանդակային-իրավական չափանիշների վրա:

Իհարկե, ասվածն ամենևին չի նսեմացնում ընտրողականության դերը մաքսային հսկողության կոնկրետ ձևի պատշաճ իրականացման մեթոդիկայի հարցում: Այն կարևոր է այնքանով, որքանով առանձին դեպքերում որոշարկում և կոնկրետացնում է

որոշ հսկողական ձևերի կիրառման աստիճանները: Օրինակ, մաքսային զննության իրականացման աստիճանն ամբողջապես որոշվում է ընտրողականության մեթոդի հենքի վրա՝ դրսևորվելով, օրինակ, տրանսպորտային միջոցների նախնական արտաքին զննմամբ, ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողմամբ՝ առանց զննման, ապրանքների մասնակի զննմամբ, ապրանքների և տրանսպորտային միջոցների մանրակրկիտ զննմամբ: Ապրանքի բացթողումից հետո մաքսային հսկողության իրականացման ժամանակ մաքսային մարմիններում ներդրված հայտարարագրման ավտոմատ համակարգը TWM (TRADE WORLD MANAGER) հենց ընտրողականության մեթոդի արդյունքում է կատարում համապատասխան տնտեսվարող սուբյեկտների ընտրություն՝ ելնելով նախապես մշակված ռիսկի որոշակի չափանիշների համադրությունից: Բայցևայնպես, նշված օբյեկտների ընտրությունը չի իրականացվում հենց այնպես: Դրա հիմքում դրվում է մաքսային իրավահարաբերություններում հիմնարար նշանակություն ունեցող ռիսկերի կառավարման համակարգը, որն, ըստ էության, ապահովում է մաքսային հսկողության կոնկրետ կառուցակարգի համարժեք կենսագործումը: Բնականաբար, դրա արդյունքում ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխող անձանց համար համար ապահովվում է մաքսային հսկողական ձևի հասցեավորված կիրառում: Բայցևայնպես, անգամ այս դեպքում ընտրողականությունն իրականացվում է կոնկրետ չափորոշիչների հիման վրա և չունի սկզբունքին համարժեք առարկայական բովանդակություն: Այն իրականացվում է՝ իր նյութական հիմքում դնելով ռիսկերի կառավարման համակարգը:

Պետք է նկատի ունենալ, որ ռիսկերի կառավարման համակարգի գնահատումը՝ որպես մաքսային հսկողության սկզբունք, ամրագրված է նաև Կոնվենցիայի 6.3-րդ ստանդարտում, որի համաձայն՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում մաքսային մարմինները կիրառում են ռիսկերի կառավարումը:

Միաժամանակ, Օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինները մաքսային հսկողության իրականացման ժամանակ կիրառում են ռիսկերի կառավարման համակարգ:*

Ակնհայտ է, որ ռիսկերի կառավարման գնահատումն ունի հիմնարար նշանակություն մաքսային հսկողության ողջ գործընթացի պատշաճ իրականացման համար: Այն հնարավորություն է տալիս հայեցողական լիազորություններն իրականացնել անհրաժեշտաբար և հասցեավորված՝ ելնելով մաքսային մարմիններին տարբեր միջոցներով հայտնի դարձած տեղեկատվության արդյունքներից: Այս իմաստով կարելի է աներկբա արձանագրել, որ նշված սկզբունքն ուղղակիորեն կապված է հայեցողական լիազորությունների սահմանափակման վարչարարության հայտնի սկզբունքի հետ:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, այս համակարգի օգտագործումը թույլ է տալիս բևեռել մաքսային մարմինների ուշադրությունը ներքին առևտրային գործընթացների վրա, որտեղ առկա է մաքսային օրենսդրության դրույթների խախտման առավել մեծ հավանականություն՝ հնարավորություն տալով ապրանքների մեծ մասն ազատորեն տեղափոխել մաքսային սահմանով:⁶²

Ռիսկերի կառավարման համակարգի հիմնական նպատակը պետք է լինի անհիմն ընդունված որոշումների կապակցությամբ պետության, մաքսային մարմինների և գործարար հանրության հնարավոր ռեսուրսների (դրամական, ապրանքային և ժամանակային) և կորուստների նվազեցումը ռիսկերի կրճատմանն ուղղված միջոցների ընտրության միջոցով:⁶³

Ընդ որում, հարկ է նկատել, որ նշված նպատակների մի մասն ամրագրված է նաև օրենսդրորեն: Այսպես, Միության օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *ռիսկերի կառավարման համակարգերի կիրառման նպատակներն են՝ (...)*

2) բարձր ռիսկայնության ռիսկերի վրա ուշադրության կենտրոնացում և տրամադրության տակ եղած ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման ապահովում:

Ակներև է, որ որևէ լիազորություն անհրաժեշտաբար կիրառելու համար պետք է ունենալ նաև գործիքների համարժեք համախումբ: Այլ կերպ ասած՝ մաքսային

⁶² St' u Костин А.А., Разинькова В.Г. Система принципов таможенного контроля, Сборник научных трудов вузов России, “Проблемы экономики, финансов и управления производством”. 2013, № 34, էջ 73:

⁶³ St' u Матвеева О.П. Система управления рисками как фактор обеспечения результативности услуговой деятельности таможенной системы. Вестник Белгородского университета потребительской кооперации.-2009, № 1 (29), էջ 103:

հսկողության կոնկրետ ձևի կիրառման հիմնավորվածության աստիճանն ակնհայտորեն կարող է ավելի բարձր լինել, երբ հիմնված է պատշաճ հավաքագրված ռիսկային գործոնների և ցուցիչների վրա: Այլապես, դրա կիրառումը կլինի խիստ հայեցողական, մաքսային ծառայողի սուբյեկտիվ ընկալման տիրույթում, որը որևէ կերպ համադրելի չէ նախ համաչափության գաղափարին, ինչպես նաև պետական ռեսուրսների արդյունավետ ծախսման, խնայողության սկզբունքներին: Ռիսկի գնահատման հարցում, մեր համոզմամբ, ակնհայտորեն պետք է դրվի կարողությունների, ռեսուրսների համարժեք գնահատման, նպատակայնության, դրանց պատշաճ գիտակցման գաղափարները:

Բոլոր դեպքերում ավելի արդյունավետ ու նպատակահարմար է ունենալ «ռիսկ» համարվող գործոնների մասին վկայող կոնկրետ-որոշակի տվյալներ, քան առաջնորդվել սեփական երևակայությամբ՝ որոշելու, թե անձը մաքսային սահմանով ապրանքի տեղափոխման պահին իսկապես խախտու՞մ է մաքսային օրենսդրության պահանջները: Այս իմաստով կարելի է աներկբա պնդել, որ ռիսկերի կառավարումը մաքսային հսկողության իրականացման իրավաչափության նյութական հենքն է, առանց որի հսկողության կոնկրետ ձևի և միջոցի կիրառումը չէր լինի բավարար չափով առարկայացված ու նպատակամետ: Տեղին է համաձայնել նաև այն պնդմանը, որ մաքսային ռիսկերի կառավարումն արդյունավետ մաքսային հսկողության կիրառման ելակետային բաղադրիչն է առևտրի ակնկալվող հոսքերը կառավարելիս:⁶⁴

Հատկանշական է, որ «ռիսկ» հասկացության իրավական բնորոշումը միութենական օրենսդրությամբ բացահայտված է: Այսպես, Միության օրենսգրքի 127-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ *ռիսկ է համարվում Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության չպահպանման հավանականության աստիճանը*: Հարկ է նկատել, որ նման ձևակերպումը խիստ ընդհանրական է և թույլ չի տալիս հստակորեն որոշել «ռիսկ» եզրույթի առարկայական շրջանակները: Բանն այն է, որ ռիսկի կառավարման ինստիտուտը մաքսային վարչարարության շրջանակներում անհրաժեշտ է մաքսային հսկողության ինստիտուտի արդյունավետ կիրառման նպատակներով: Դրա

⁶⁴ St' u Tadashi Yasui, Benefits of the Revised Kyoto Convention, Research and Strategy Unit, 2010, էջ 6:

գնահատումն ու վերլուծությունն արժևորվում են սուկ մաքսային հսկողության և որոշակի ընթացակարգով մաքսային ձևակերպման ինստիտուտների դիրքերից: Բերված հիմնավորմամբ էլ, գտնում ենք, որ ռիսկի իրավական բնորոշումը պետք է ուղղակիորեն կապվեր մաքսային հսկողության իրականացման ժամանակահատվածում որևէ օրինադրույթի պահանջի խախտման հետ: Բոլորովին պատահական չէ, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի նախագծի 376-րդ հոդվածի իմաստով մաքսային ռիսկ է համարվում բացառապես մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի եւ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հավանականությունը:

Ասվածը հիմնավորվում է նաև «Ռիսկերի գնահատման չափանիշների մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 30.06.2011թ. հրամանով, որի 1-ին կետի համաձայն՝ ռիսկերի կառավարումը մաքսային հսկողության ժամանակակից մեթոդների հիմնական սկզբունքն է: Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին ռիսկերի գնահատումն իրականացվում է մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ մաքսային հսկողության իրականացման նպատակով, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից հետբացթողումային հսկողության նպատակով իրականացվող ստուգումների ծրագրավորման համար: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ և հաջող կիրառման առաջին վավերապայմանը գործառույթների կազմակերպման հնարավորինս բարձրորակ և համակարգված տեղեկատվությունն է:⁶⁵

Ակներև է, որ օրենսդրության չպահպանման հետ կապված բոլոր դեպքերը չէ, որ ներառվում են «ռիսկ» եզրույթի հասկացության թվանդակության առարկայական շրջանակներում: Մաքսային օրենսդրության իմաստով «ռիսկ» կարող է համարվել այն խախտումների հավանականությունը, որոնք տեղի են ունենում ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծման, արտահանման կամ այլ ձևով տեղափոխման պահին մաքսային հսկողության իրականացման ժամանակ:

⁶⁵ St' u Mihály Arnold Customs control in the 21st century. Customs Scientific Journal, CUSTOMS, Special edition, N 1, 2012, էջ 80:

Հետևապես, գտնում ենք, որ անհրաժեշտ է վերախմբագրել «ռիսկ» եզրույթի իրավական բնորոշումը՝ անպայմանորեն կապելով այն մաքսային հսկողության իրականացման ընթացքում որևէ օրինադրույթի պահանջի խախտման հավանականության հետ:

Պետք է փաստել, որ ռիսկի գնահատման չափանիշների մեթոդաբանության հետ կապված հարցերը կարգավորվել են հենց ՀՀ ֆինանսների նախարարի նշված հրամանի շրջանակներում, որով սահմանված կարգավորումներն ամրագրվել են դեռևս ՀՀ մաքսային օրենսգրքի 148-րդ հոդվածի 4-րդ կետի գործողության պայմաններում: Այլ կերպ ասած՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ենթաօրենսդրական նշված ակտը համապատասխանեցնել Եվրասիական տնտեսական միության օրենսդրության և Օրենքի պահանջներին: Այլապես, ստացվում է, որ ենթաօրենսդրական բազան այս ոլորտում համահունչ և ներդաշնակ չէ Միության օրենսդրությանը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ հակազդման ենթակա խախտումների՝ Օրենքով նախատեսված թվարկը: Այսպես, Օրենքի 121-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է մաքսային մարմինների ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա՝ Միության մաքսային օրենսդրության և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության խախտումները կանխարգելելու և մաքսային մարմիններին վերապահված հսկողության այլ ձևերն իրականացնելիս այնպիսի խախտումներին հակազդելու նպատակով, որոնք՝*

1) ունեն կրկնվող բնույթ.

2) կապված են զգալի չափերով մաքսատուրքերի, հարկերի վճարումից խուսափելու, ինչպես նաև օֆշորային գոտիների փարածքում գրանցված ռեզիդենտների հետ ֆինանսական գործառնությունների իրականացման հետ.

3) կապված են տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովման հետ.

4) վտանգում են հայրենական ապրանք արտադրողների մրցունակությունը

5) առնչվում են մաքսային մարմիններին վերապահված Միության և Հայաստանի Հանրապետության այլ շահերին:

Բանն այն է, որ զգալի չափերով մաքսատուրքերի, հարկերի վճարման շեմը Օրենքը չի նախատեսում: Ավելին, որևէ այլ նորմատիվ ակտով նախանշված չէ, թե որ սահմանաչափից պետք է հաշվարկվեն Օրենքով նախանշված զգալի չափը: Մեր համոզմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված չափերը չպետք է ուղենիշ համարվեն Օրենքի իմաստով հակազդման ենթակա խախտումները գնահատելու իմաստով:⁶⁶ Դրանք ռիսկայնության դիրքերից տարբերակված մոտեցում են ենթադրում: Բացի այդ, դրանցում նախատեսված չափերը նշանակություն ունեն բացառապես նշված գլխում ներառված հանցագործությունների համար: Ուստիև, գտնում ենք, որ այս հարցը նույնպես պետք է կարգավորման առարկա դառնար ներպետական օրենսդրության շրջանակներում:

Ինքնին հասկանալի է, որ ռիսկերի գնահատումն իրականացվում է կոնկրետ որոշակի օբյեկտների կապակցությամբ ձեռքբերված համապատասխան փաստական տվյալների վերլուծության արդյունքում: Ընդ որում, Կոնվենցիայի 6.4. ստանդարտը բավական ընդհանուր կերպով կանխորոշում է նշված օբյեկտների ցանկը: Մասնավորապես, նշված ստանդարտի համաձայն՝ *մաքսային ծառայությունը կիրառում է ռիսկերի վերլուծությունը՝ որոշելու համար, թե որ անձինք և ապրանքները, ներառյալ փոխադրամիջոցները, պետք է ստուգվեն, և սահմանում է այդ ստուգման ծավալը (ներառյալ՝ տրանսպորտային միջոցները):* Ուշագրավ է, որ Միության օրենսգիրքը մաքսային հսկողության օբյեկտների առավել ընդգրկուն շրջանակ է նախատեսում՝ դրանց շրջանակում ներառելով նաև անձանց գործունեությունը: Այսպես, Միության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից իրականացվող մաքսային հսկողության ենթակա են՝*

1) *ապրանքները, այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, որոնք տեղափոխվում են մաքսային սահմանով եւ (կամ) ենթակա են հայտարարագրման սույն Օրենսգրքին համապատասխան.*

⁶⁶ Ընդունվել է 18.04.2003թ. ուժի մեջ է մտել 01.08.2003թ. ՀՀՊՏ 2003.05.02/25 (260):

2) մաքսային հայտարարագրերը, ապրանքների վերաբերյալ փաստաթղթերը եւ փյուջաները, որոնց ներկայացումը նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ.

3) անձանց գործունեությունը, որը կապված է մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, մաքսային գործի բնագավառում ծառայությունների մատուցման հետ, ինչպես նաեւ իրականացվում է առանձին մաքսային ընթացակարգերի շրջանակներում.

4) անձինք, որոնք հատում են մաքսային սահմանը.⁶⁷

Այլ կերպ ասած՝ վերը հիշատակված օբյեկտների կապակցությամբ մաքսային մարմինները պարտավոր են վարել ռիսկերի գնահատման աստիճանների և ցուցիչների հնարավորինս կատարելագործված և մշտապես թարմացվող համակարգ, ինչը հնարավորություն կտա արդյունավետորեն կիրառելու հասցեավորված մաքսային հսկողության կառուցակարգերը: Նշված խնդրի լուծումը Միության օրենսդրությամբ վերապահվել է Մաքսային Միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային, որը, մասնավորապես, 13.06.2013թ. թիվ 8/7 որոշմամբ հաստատել է ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները եվ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկը եվ դրանց կիրառման կարգը: Նշված որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետով ուղղակիորեն սահմանվել է, որ օգտագործելով ռիսկի չափանիշների ցանկը՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինները իրավական ակտերով ձևավորում են ռիսկերի չափանիշների սեփական ցանկեր, որոնք օգտագործվում են Մաքսային միության առանձին անդամ պետությունում, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում լրացնում են ռիսկի չափանիշների ցանկը ռիսկի հատուկ ոլորտներով:⁶⁸

Պետք է նկատի ունենալ այն իրողությունը, որ Կոնվենցիան, ըստ էության, նախատեսելով ռիսկերի կառավարումը՝ որպես մաքսային հսկողության իրականացման սկզբունք, միաժամանակ, ամրագրում է նաև աուդիտի վրա հիմնված

⁶⁷ Ուշագրավ է, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի նախագծի 311-րդ հոդվածին համապատասխան մաքսային հսկողության օբյեկտների շարքին են դասվել նաև կառույցները, շինությունները, բաց հրապարակները, մաքսային և այլ փաստաթղթերը:

⁶⁸ Ընդունվել է 13.06.2013թ. ուժի մեջ է մտել 02.01.2015թ.:

լինելը՝ որպես մաքսային հսկողության իրականացման անկյունաքար: Ընդ որում աուդիտի վրա հիմնված հսկողությունը Կոնվենցիայի իմաստով ունի ինքնուրույն առարկայական բովանդակություն: Մասնավորապես, Կոնվենցիայի E3./F4. կետի համաձայն՝ «աուդիտի վրա հիմնված հսկողություն» նշանակում է՝ միջոցներ, որոնք մաքսային ծառայությանը հնարավորություն են տալիս համապատասխան անձանց մոտ առկա համապատասխան գրառումների, գրանցումների, բիզնես համակարգերի և առևտրային տվյալների միջոցով համոզվելու, որ հայտարարագրերը լրացվել են ճիշտ, և հայտարարագրում ներառված տվյալները ստույգ են: Ըստ էության, Միության օրենսդրությամբ աուդիտի վրա հիմնված հսկողությունը ներառվել է ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում:

Այսպիսով, վերը հիշատակված երկու սկզբունքների արդյունավետ կիրառումը, մեր համոզմամբ, հենց մաքսային հսկողության իրականացման անհրաժեշտ վավերապայմանների համախումբն է կազմում: Ակներև է, որ հայեցողական հսկողական լիազորությունները սահմանափակվում և իրականացվում են ռիսկերի կառավարման համակարգի գնահատման հիման վրա, որպեսզի ապահովեն տվյալ իրադրությունում արդյունավետ և անհրաժեշտ հսկողական ձևի (միջոցի) կիրառումը: Մինչդեռ, այդ կառուցակարգերի կիրառման աստիճանն արդեն իսկ որոշում է մաքսային ծառայողը՝ հիմքում դնելով տվյալ ռիսկի օբյեկտի կապակցությամբ առկա ռիսկի պոռֆիլը: Հետևապես, կարող ենք արձանագրել, որ նշված սկզբունքները գտնվում են անխզելի փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ, բխում են մեկը մյուսից և լրացնում միմյանց:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ մոտ ապագայում հատկապես մաքսային իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի ակնկալվող փոփոխությունների արդյունքում մաքսային հսկողության ինստիտուտը կդրվի առավել պատշաճ իրավական հիմքերի վրա, կհստակեցվեն դրան վերաբերող հայեցակարգային պահանջները: Ասվածի արդիականությունը պայմանավորված է հատկապես այն իրողությամբ, որ Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու

մասին⁶⁹ պայմանագրով և Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ հաստատված «Մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցության նպատակով միջոցառումների ծրագրով (ճանապարհային քարտեզ)»⁷⁰ արդեն իսկ սահմանվել են այնպիսի պահանջներ, որոնց իրականացումը ենթադրելու է արմատական փոփոխություններ մաքսային վարչարարության մեջ: Բնականաբար, նման փոփոխություններն ուղղակի և անմիջական կապ ունեն նաև մաքսային հսկողության իրականացման սկզբունքների շրջանակի հետ և դրանց բովանդակության բացահայտման հետ:

⁶⁹ Ընդունվել է 10.10.2014թ. ուժի մեջ է մտել 02.01.2015թ. ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092):

⁷⁰ Ընդունվել է 23.01.2014թ. ուժի մեջ է մտել 06.02.2014թ. ՀՀՊՏ 2014.02.05/5 (1018).1:

ԳԼՈՒԽ II.

ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

§1. Մաքսային հսկողության ձևերի և միջոցների հարաբերակցությունը.

Ինչպես և հսկողության ցանկացած տեսակ, այնպես էլ մաքսային հսկողությունն իրականացվում է կոնկրետ ձևերի և միջոցների կիրառմամբ, որոնց արդյունքում ապահովվում է քննարկվող ինստիտուտով հետապնդվող խնդիրների իրականացումը:

Հարկ է նկատել, որ մաքսային հսկողության ձևերի շուրջ իրավաբանական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են արտահայտվել: Ա.Ա.Կոստինը մաքսային հսկողության ձևը բնորոշում է որպես մաքսային հսկողության կազմակերպման, անցկացման և դրա արդյունքների իրավական ձևակերպման հետ կապված և մաքսային օրենսդրությամբ նախատեսված միջոցների, մեթոդների և հնարավորությունների ամբողջություն, որն իրենից ներկայացնում է մաքսային մարմինների գործառույթների միասնական համակարգ՝ ուղղված մաքսային հսկողության կոնկրետ խնդրի իրականացմանը:⁷¹ Գիտնականների մեկ այլ խումբ մաքսային հսկողության ձևը բնորոշում է որպես մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործունեության ուղղություն, ներառյալ՝ առանձին մեթոդների, միջոցների և գործիքների կիրառում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրության դրույթների պահպանումը ստուգելու նպատակով:⁷²

Հիշարժան է նաև Ս.Վ.Խալիպովի մոտեցումը, ում համոզմամբ մաքսային հսկողության ձևերի հիմքն ու բովանդակությունը կազմում են նաև հսկողական գործողությունների կազմակերպման և անցկացման կոնկրետ միջոցները: Մաքսային հսկողության անցկացման միջոցներն իրենցից ներկայացնում են գործողությունների

⁷¹ Տե՛ս Костин А.А. Форма, метод и способ проведения таможенного контроля: соотношение и дефиниции, Российский внешнеэкономический вестник, 2013, № 6, էջ 76:

⁷² Տե՛ս Шамахова В.А., Кожанкова Ю.А. Таможенное регулирование в Таможенном союзе в рамках ЕврАзЭС. Учебник / М.: СофтИздат, 2012, էջ 259:

համակարգ, որոնք կիրառվում են մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության ընտրված ձևի առավել արդյունավետ կենսագործման համար:⁷³

Հատկանշական է, որ մաքսային հսկողության ձևերը Միության օրենսգրքով շարադրվել են սպառիչ լրիվությամբ, ինչն ուղղակիորեն բացառում է Միության անդամ պետության օրենսդրությամբ հսկողական նոր կառուցակարգերի նախատեսումը: Այսպես, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ուղղակիորեն սահմանված է, որ անդամ պետությունների Մաքսային միության շրջանակներում իրականացվում է միասնական մաքսային կարգավորում: Վկայակոչված իրավադրույթը բնականաբար, ենթադրում է, որ ԵԱՏՄ անդամ բոլոր պետություններում կիրառվում են հսկողության միևնույն ձևերը իրավական նույն բովանդակությամբ:

Ակներև է, որ մաքսային հսկողության ձևերն ու միջոցները գտնվում են սերտ կապի և փոխպայմանավորվածության մեջ: Ընդ որում, մաքսային հսկողության իրականացման համար հիշյալ կառուցակարգերն ամենևին նույնական իրավական նշանակությունը չունեն: Թեպետ միութենական և ներպետական մաքսային օրենսդրությամբ դրանք դեռևս ուղղակիորեն տարբերակված չեն, այսուհանդերձ, նշված տարբերակումն օբյեկտիվ է և պայմանավորված է մաքսային հսկողության իրականացման հարցում դրանց հետապնդած իրավական տարբեր խնդիրներով:

Որպես կանոն, հսկողական մեկ ձևի կիրառումն ուղեկցվում է մեկ կամ մի քանի միջոցներով, որոնց օգնությամբ առարկայացվում են նշված ձևի բովանդակության մեջ ներառվող պահանջները: Ընդ որում, նշված միջոցները կարևոր նշանակություն ունեն հսկողության համապատասխան ձևի կիրառման օրինականության և արդյունավետության ապահովման իմաստով (*օրինակ՝ անձնական մաքսային զննության ժամանակ որպես հսկողության միջոց՝ կիրառվում է նաև բանավոր հարցումը*): Օրինակ, «մաքսային ստուգում» հսկողական ձևի կիրառման ժամանակ կիրառվում են հսկողության բազմաթիվ միջոցներ՝ փաստաթղթերի, տվյալների ստուգում, բանավոր հարցում և այլն: Դրանք ակնհայտորեն նպաստում են մաքսային ստուգման արդյունավետությանը՝ առանձին դեպքերում հանդես գալով որպես

⁷³ Տե՛ս և Халипов С.В. Таможенный контроль (административно-правовой анализ): Учебно-практическое пособие. М.: Издательство «Таможня. РУ», 2005. Էջ 76:

խախտման հայտնաբերման անհրաժեշտ ու անփոխարինելի միջոցներ: Կամ, օրինակ, անձնական մաքսային զննության ժամանակ կարող է կիրառվել նաև բանավոր հարցումը:

Նման պայմաններում պետք է արձանագրել, որ թեպետ մաքսային հսկողության ձևերն ու միջոցները միմյանց հետ սերտորեն կապված են, այսուհանդերձ, չեն նույնանում:

Ընդ որում, թեպետև ոչ ուղղակիորեն, այսուհանդերձ, հենց մաքսային հսկողության ձևերի ու միջոցների տարբերակման մասին է վկայում Օրենքի 120-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ *մաքսային հսկողության ձևերի և մեթոդների ընտրության ժամանակ մաքսային մարմինները կիրառում են մաքսային հսկողության տեսակական միջոցները և նախնական տեղեկատվության վերլուծությունը՝ մաքսային հսկողություն իրականացնելիս հայտարարատուներին, փոխադրողներին և այլ անձանց՝ ապրանքների պահպանման, տրանսպորտային միջոցների պարապորդի, ապրանքների բաց թողնման ժամկետի երկարաձգման պատճառով վնաս չպատճառելու համար, եթե մաքսային գործի բնագավառում լուրջ խախտումներ արտահայտող նշանների և նշված խախտումների բացահայտման և կանխարգելման առումով սպառիչ միջոցների ձեռնարկման անհրաժեշտություն չի ծագել:*

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը կիրառում է «մաքսային հսկողության ձևեր» և «մեթոդներ» եզրերը՝ որոշակիորեն նախանշելով դրանց միջև առկա տարբերությունները:

Նշված վերլուծության դիտանկյունից քննարկման առարկա դարձնելով մաքսային հսկողության ինստիտուտի առկա իրավակարգավորումը՝ կարող ենք փաստել, որ մաքսային հսկողության կառուցակարգերի պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով ուղղակիորեն անհրաժեշտ է, որ օրենսդիրը տարբերակված լինեն դրա ձևերն ու միջոցներն այնքանով, որքանով դրանք մաքսային հսկողության իրականացման համար նույն իրավական նշանակությունն ունենալ չեն կարող:

Ընդ որում, նշված հարցի լուծումն ունի ոչ միայն տեսական, այլ նաև ընդգծված գործնական նշանակություն:

Այսպես, Օրենքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անկախ (...)* սահմանված հսկողության ժամկետներից, ներմուծվող ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման պահից մինչև որևէ մաքսային ընթացակարգով հայտարարագրվելը գտնվում են մաքսային հսկողության տակ: Օրենքը որևէ կերպ չի մանրամասնում ապրանքի՝ մաքսային հսկողության տակ գտնվելու իրավական էությունն ու բովանդակությունը, որն, ըստ էության, ելակետային նշանակություն ունի խնդրո առարկա ինստիտուտի իրավակարգավորման պատշաճությունն ապահովելու տեսակետից:

Պետք է նկատել նաև, որ ներկայումս մաքսային հսկողության իրականացումը կարգավորվում է «Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 24.03.2001թ. թիվ 236 որոշմամբ, որը, սակայն, չի համապատասխանում գործող օրենսդրական կարգավորումներին: Նախ, դրանում ամրագրվել են մաքսային հսկողության ձևերից սուկ մաքսային զննության, ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառման մեթոդիկայի առանձնահատկությունները: Բացի այդ, հիշյալ կարգավորումները նախատեսվել են 2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքի իրավակարգավորման համատեքստում: Բնականաբար, մաքսային օրենսդրության փոփոխություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու մաքսային հսկողության իրականացումը կարգավորող առանձին իրավական ակտ, որով ուղղակիորեն կկարգավորվեն նաև մաքսային հսկողության յուրաքանչյուր ձևի կիրառման ընթացակարգային հարցերը:

Նշված ընթացակարգային հարցերի առանձին իրավակարգավորումը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ միութենական օրենսդրությամբ նախատեսված մաքսային հսկողության կառուցակարգերից մի քանիսն ուղղված են ոչ այնքան խախտման հայտնաբերմանը և վարչական պատասխանատվության ենթարկելուն, որքան դրա կանխարգելմանը, ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրենսդրությամբ սահմանված կարգի մշտական պահպանմանը և ոչ թե առկայության բավարար հիմքեր ներառող խախտումներ հայտնաբերելուն և վարչական պատասխանատվության ենթարկելուն:

Ասվածն առավել ցայտուն դրսևորվում է մաքսային հսկողության գոյություն ունեցող ձևերի իրավակարգավորումների վերլուծությամբ: Մասնավորապես, «Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հաշվառման» և «Ապրանքների հաշվառման համակարգի և հաշվետվությունների ստուգման» մաքսային կառուցակարգերի պարագայում: Թեպետ սրանք երկուսն էլ դիտարկվել են որպես մաքսային հսկողության ձևեր, այսուհանդերձ, գտնում ենք, որ ինքնին «Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հաշվառումը» սուկ մաքսային օրենսդրության խախտումների կանխարգելման նպատակ է հետապնդում, մինչդեռ «Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հաշվառման» և «Ապրանքների հաշվառման համակարգի և հաշվետվությունների ստուգման» մաքսային կառուցակարգերի պարագայում առկա է հավանական ռիսկ, որ կարող են հայտնաբերվել կոնկրետ խախտումներ, և համապատասխան անձինք ենթարկվեն վարչական պատասխանատվության: Ընդ որում, թեպետ, վարչական պատասխանատվության ենթարկելը՝ որպես մաքսային հսկողության նպատակ, ուղղակի օրենսդրական ամրագրում չունի, այսուհանդերձ, այն օբյեկտիվ է և բխեցվում է մաքսային հսկողության վարչարարական բնույթից: Դրա կենսագործմամբ դրսևորվում է մաքսային հսկողության երկակի բնույթը՝ մի կողմից հանդես գալու որպես մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգի մշտական ապահովման գործիք և միջոց, մյուս կողմից, վարչական պատասխանատվության ենթարկելու այն անձանց, որոնց արարքը պարունակում է որևէ իրավախախտման կազմ:

Մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների հաշվառման պարագայում մաքսային մարմինը ձևավորում է տեղեկատվական տիրույթ, որում առկա տվյալների վերլուծությամբ ապահովվում է նաև արդյունավետ և հասցեավորված մաքսային հսկողություն:

Այսպես, Միության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասն արձանագրում է, որ *մաքսային մարմինները վարում են մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների և դրանց նկատմամբ մաքսային գործառնությունների հաշվառում, այդ թվում՝ տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների օգտագործմամբ:* Խնդրո

առարկա հսկողական ձևն ինքնուրույն և մշտական հիմունքներով իրականացվող գործընթաց է, որի արդյունքում տեղեկատվական ռեսուրսներ են հավաքվում մաքսային հսկողության այլ ձևերի կիրառման նպատակով: Առավելա, պետք է նկատի ունենալ, որ դրա արդյունքները որևէ կերպ գրավոր ամրագրում չեն ստանում, այն ուղղակիորեն չի հետապնդում մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգի պահպանման նպատակ: Ուստի, մեր համոզմամբ, նշված գործողությունը նույնպես պետք է առավելապես ամրագրվեր մաքսային հսկողության միջոցների համակարգում:

Ասվածն առավել հիմնավորվում է «Մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների հաշվառման» և «Ապրանքների հաշվառման համակարգի և հաշվետվությունների ստուգման» կառուցակարգերի համեմատական վերլուծության արդյունքում: «Ապրանքների հաշվառման համակարգի և հաշվետվությունների ստուգման» հսկողական կառուցակարգի իրավական հիմքերը նախանշված են Միության օրենսգրքի 121-րդ հոդվածում, որի համաձայն՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող, հատուկ պարզեցված ընթացակարգերով աշխատելու հնարավորություններից օգտվող, ինչպես նաև օտարերկրյա ապրանքներ օգտագործող և (կամ) դրանք տիրապետող անձինք մաքսային մարմինների պահանջով պարտավոր են մաքսային մարմիններ հաշվետվություններ ներկայացնել պահպանվող, փոխադրվող, իրացվող, վերամշակվող և (կամ) օգտագործվող ապրանքների, ինչպես նաև իրականացված մաքսային գործառնությունների վերաբերյալ:

Քննարկվող կառուցակարգի իրացումը, ի համեմատություն մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հաշվառման, ենթադրում է մաքսային մարմնի կողմից կայացվող և սկիզբը, ընթացքն ու արդյունքներն ամփոփող կոնկրետ փաստաթղթի՝ արձանագրության առկայություն: Այն պարբերական հիմունքներով իրականացվող գործընթաց է, որն իրականացվում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց, կոնկրետ որոշակի ապրանքների նկատմամբ, ինչպես նաև պարզեցված ընթացակարգերի կիրառման դեպքերում և նպատակ ունի ապահովելու նշված անձանց կողմից իրականացված մաքսային

գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն: Այսուհանդերձ, գտնում ենք, որ նշված կառուցակարգով պարզվող հանգամանքներն ամբողջապես կարող են ներառվել մաքսային ստուգման շրջանակներում և այս առումով չեն պահանջում դրանց կապակցությամբ մաքսային հսկողության առանձին ձևի նախատեսում: Ուստի, թեպետ բովանդակային առումով քննարկվող հսկողական կառուցակարգը համապատասխանում է մաքսային հսկողության ձևին ներկայացվող պահանջներին, այսուհանդերձ այն չունի ինքնուրույն առարկայական բովանդակություն և բովանդակային առումով ամբողջապես կարող է ներառվել մաքսային ստուգման շրջանակներում:

Հատկանշական է նաև այն իրողությունը, որ «Ապրանքների հաշվառման համակարգի և հաշվետվությունների ստուգումը» մաքսային հսկողության միակ ձևն է, որի պարագայում առկա է դրա բազմակի իրականացման օրենսդրական արգելք: Մասնավորապես, Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միևնույն ժամանակահատվածում կարող է իրականացվել ապրանքների հաշվառման համակարգի միայն մեկ ստուգում: Օրինադրույթի հիշյալ ձևակերպման մեջ առկա է մեկ այլ խնդիր ևս: Օրենքը չի որոշարկում «միևնույն ժամանակահատվածում» բառերի հասկացության բովանդակությունը: Բնականաբար, դրանով պայմանավորված՝ խնդրահարույց է մնում այն հարցը, թե որ ժամանակահատվածն է Օրենքը դիտարկում քննարկվող հսկողության ձևի կիրառման արգելք: Ենթադրվում է, որ այս պարագայում որպես քննարկվող հսկողական ձևի կիրառման առավելագույն ժամանակահատված՝ պետք է նկատի ունենալ Օրենքի 123-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եռամյա ժամկետը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև բանավոր հարցումը՝ որպես մաքսային հսկողության ձև: Թեպետ Միության օրենսգրքով այն նախատեսված է որպես մաքսային հսկողության ձև, այսուհանդերձ, պետք է նկատել, որ այն հսկողության ինքնուրույն ձև դիտարկվել չի կարող:

Այսպես, Միության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ *սույն օրենսգրքին համապատասխան մաքսային գործառնություններ իրականացնելիս մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն անցկացնելու ֆիզիկական*

անձանց, նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև մաքսային սահմանով փեղափոխվող ապրանքների նկատմամբ լիազորություն ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչների բանավոր հարցում առանց նշված անձանց բացատրությունների գրավոր ձևակերպման:

Ինչպես տեսնում ենք, հսկողության նշված ձևը չի ենթադրում իր սկիզբը, ընթացքն ու արդյունքներն ամփոփող և արձանագրող ընթացակարգային կոնկրետ փաստաթղթի առկայություն: Ինչպես արդարացիորեն նշում է Ե.Վ. Սերգենը, փաստաթղթավորման բացակայության դեպքում վերահսկվող սուբյեկտը մշտապես կարող է հրաժարվել ավելի վաղ տրված բացատրություններից:⁷⁴ Ուստի, դրա իրավական իմաստն արդեն իսկ առկա հսկողության ձևի իրականացման հարցում լրացուցիչ գործիքակազմ հանդես գալն է: Այս առումով բոլորովին պատահական չէ, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծով նշված հսկողական կառուցակարգը՝ որպես մաքսային հսկողության ինքնուրույն ձև, նախատեսված չէ: Բացի այդ, պետք է նկատել, որ հիշյալ հսկողական ձևը չունի գործնական նշանակություն ոչ մաքսային հսկողության և ձևակերպման ինստիտուտի, ոչ էլ որևէ իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի համար այնքանով, որքանով բանավոր հարցման արդյունքում ստացված տվյալները որևէ կերպ չեն արձանագրվում ու չեն ստանում առարկայացված ձևակերպում: Ուստի, դրա ապացուցողական նշանակությունը դառնում է խիստ վիճելի:

Միության օրենսգրքի հիշյալ հոդվածների վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ դրանում հսկողության որոշ միջոցներ անհարկի դիտարկվել են որպես հսկողության ձևեր այն դեպքում, երբ վերջիններս չունեն առարկայական բավարար ինքնուրույնություն այդպիսին դիտարկվելու համար: Կարելի է բերել այլ օրինակներ ևս: Օրինակ, բացատրությունների ստացումը, մաքսային դիտարկումը պարզապես մաքսային մարմիններին վերապահված վարչարարության իրականացման լիազորության բաղադրիչներ են, որոնք ինքնին մաքսային հսկողության ձևերի շրջանակներում դիտարկելը, գտնում ենք, ընդունելի չէ: Առավել ևս, երբ նշված միջոցների կենսագործումն չի իրականացվում առարկայացված ձևով և դրանով

⁷⁴ St' u Sergeev E.B. Таможенный контроль: Проблемы правового регулирования, Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2005, էջ 148:

պայմանավորված՝ որևէ փաստաթղթային ձևակերպում չի ենթադրում: Մինչդեռ, մեր համոզմամբ, որևէ կառուցակարգ մաքսային հսկողության ձև դիտարկելու համար անհրաժեշտ է ոչ միայն օրենսդրության դրույթների պահպանման ապահովման նպատակի առկայություն, այլ նաև ձևական որոշակիություն՝ դրա կոնկրետ արդյունքներն արտացոլող փաստաթղթային ձևակերպում:

Ասվածի հաշվառմամբ գտնում ենք, որ ապրանքի՝ մաքսային հսկողության տակ գտնվելն անպայմանորեն ենթադրում է, որ ապրանքը գտնվում է մաքսային հսկողության որևէ կառուցակարգի ազդեցության ներքո այնքանով, որքանով մաքսային հսկողությունն առարկայացվում է հենց հսկողության ձևերի և միջոցների կիրառմամբ: Այլ կերպ ասած՝ մաքսային հսկողության անցկացումը ենթադրում է, որ ապրանքը որոշակի կոնկրետ ժամանակամիջոցում գտնվում է հսկողության որոշակի կառուցակարգի կիրառման ազդեցության ոլորտում: Բայցևայնպես, գտնում ենք, որ այդ կառուցակարգերից բոլորը չեն, որ անպայմանորեն ենթադրում են մաքսային հսկողության ձևի կիրառում: Ապրանքի՝ մաքսային հսկողության տակ գտնվելու հանգամանքն ինքնին դեռևս չի վկայում, որ դրա նկատմամբ կիրառվում է մաքսային հսկողության ձև: Մաքսային հսկողությունն այս պարագայում առարկայացվում է հսկողության միջոցների կիրառմամբ: Մաքսային հսկողության ձևը, մեր համոզմամբ կիրառվում է բացառապես այն պարագայում, երբ կոնկրետ հիմքեր կան ենթադրելու, որ անձի կողմից ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվում են (տեղափոխվել են) Մաքսային Միության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ տեղափոխվող ապրանքներ կամ չեն պահպանվել մաքսային օրենսդրության դրույթները:

Մինչդեռ, առհասարակ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ հնարավոր խախտումները բացառելու նպատակով, մեր համոզմամբ, կիրառվում են մաքսային հսկողության միջոցներ, որոնք իրենց բնույթով ապահովում են մաքսային հսկողության տևականությունը: Այլ կերպ ասած՝ մաքսային հսկողության միջոցները կիրառվում են բոլորովին այլ նպատակով: Դրանց իմաստը Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության՝ որպես պետության կողմից իրականացվող հսկողության ինքնուրույն տեսակի մշտական իրականացման

ապահովումն է: Դրանով է պայմանավորված նաև այն, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի նախագծով տրված մաքսային հսկողության իրավական բնորոշման շրջանակներում սահմանվել է, որ մաքսային հսկողությունը հետապնդում է ոչ միայն օրենսդրության պահանջների ստուգման, այլ նաև դրանց ապահովման նպատակ: Մասնավորապես, նշված օրենսգրքի 2-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ մաքսային հսկողությունը մաքսային մարմինների կողմից կատարվող գործողությունների ամբողջությունն է, որոնք ուղղված են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և (կամ) ակտերի ու մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության պահպանման ստուգմանը և (կամ) ապահովմանը:

Այսպես, մաքսային հսկողության միջոցները նպատակ են հետապնդում առաջին հերթին ապահովելու մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման պատշաճ կարգը, կանխարգելելու մաքսային հսկողության սահմանված կարգի խախտումները: Մինչդեռ, հսկողության ձևն առավելապես ենթադրում է խախտումների վերհանմանը միտված մաքսային մարմնի գործողությունների ամբողջություն: Օրինակ, անձնական մաքսային զննության իրականացման ժամանակ Միության օրենսգրքի 117-րդ հոդվածով ուղղակիորեն պահանջվում է, որ առկա լինեն բավարար հիմքեր ենթադրելու, որ մաքսային սահմանով ուղևորվող և մաքսային հսկողության գոտում կամ միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում գտնվող ֆիզիկական անձն իր մոտ թաքցնում է Մաքսային միության մաքսային օրենսդրության խախտմամբ տեղափոխվող ապրանքներ և կամավոր կերպով դրանք չի հանձնում: Այլ կերպ ասած՝ այս պարագայում գործողությունն ուղղված է առավելապես ենթադրյալ խախտման հայտնաբերմանը: Մինչդեռ, հսկողության միջոցները կիրառվում են՝ նպատակ ունենալով կանխարգելել ապագայում դրսևորվող հնարավոր խախտումները: Օրինակ, մաքսային ապահովումների կիրառմամբ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ժամանած ցանկացած ապրանք ենթարկվում է մաքսային հսկողության որևէ միջոցի կիրառմանը: Կամ, մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների հաշվառմամբ ապահովվում է մաքսային հսկողության տևականությունը՝ ապահովելով մաքսային մարմնի մոտ առկա տեղեկատվությունը իր կողմից տեղափոխվող

ապրանքների բնույթի, քաշի, որակական և քանակական այլ հատկանիշների մասին: Մինչդեռ, մաքսային հսկողության ձևը ենթադրում է խախտման մասին որոշակի ենթադրությունների, հիմքերի առկայության պայմաններում իրականացվող կառուցակարգ: Օրինակ, մաքսային ապահովումների կիրառմամբ ապահովվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների, ինչպես նաև մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների համար նախատեսված տրանսպորտային միջոցների, շենքերի, տարողությունների և այլ վայրերի նույնականացումը⁷⁵ (*ՀՀ Կառավարության 11.02.2016 թվականի N 107-Ն որոշման հավելվածի 3-րդ կետ*): Ակներև է, որ նշված նպատակի կենսագործումն առաջին հերթին ուղղված է մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման ընթացքում խախտումների կանխարգելմանը:

Հետևապես, գտնում ենք, որ մաքսային հսկողության ձևերի և միջոցների հարաբերակցությունը պետք է դիտարկել, առաջին հերթին, դրանցով հետապնդվող խնդիրների և նպատակների տարբերակման համատեքստում:

Բացի այդ, ինչպես նշվեց, հսկողության կոնկրետ կառուցակարգը մաքսային հսկողության ձև դիտարկելու համար անհրաժեշտ է դրա սկիզբը, ընթացքն ու ավարտն արձանագրող կոնկրետ փաստաթղթի առկայություն: Այն պետք է ունենա ընթացակարգային որոշակիություն, սկսվի և ավարտի արդյունքներն արձանագրող կոնկրետ փաստաթղթով: Հետևապես, մեր համոզմամբ, մաքսային սահմանին ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման պատշաճ կարգի ապահովմանը միտված այն կառուցակարգերը, որոնք որևէ կերպ չեն ամրագրվում, չեն կարող ներառվել մաքսային հսկողության ձևի շրջանակներում: Մինչդեռ, Միության գործող օրենսգրքով ներկայումս նախատեսված են մաքսային հսկողության այնպիսի ձևեր, որոնք որևէ գրավոր ամրագրում չեն ենթադրում (*օրինակ՝ բանավոր հարցումը, մաքսային դիտարկումը*): Հետևապես, գտնում ենք, որ նշված կառուցակարգերը պետք է բացառել մաքսային հսկողության ձևերի շարքից՝ դրանց համար նախատեսելով առանձին ընթացակարգեր:

⁷⁵ Ընդունվել է 11.02.2016թ. ուժի մեջ է մտել 20.02.2016թ., ՀՀՊՏ 2016.02.19/13 (1193):

Ընդ որում, մաքսային հսկողության ձևը չպետք է շփոթել որոշակի մաքսային ընթացակարգով ապրանքի մաքսային ձևակերպման ընթացքը կազմող գործառնությունների հետ *(օրինակ՝ փաստաթղթերի և տվյալների ստուգումը)*: Վերջիններիս իրականացումը պարզապես միտված է ապահովելու մաքսային համապատասխան ընթացակարգի կենսագործումը, որպիսին բնականաբար, իրականացվում է նաև փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրմամբ: Այս իմաստով բավական խնդրահարույց է փաստաթղթերի և տվյալների ստուգման՝ որպես մաքսային հսկողության ինքնուրույն ձևի իրավական ամրագրումը: Այսպես, Միության օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *մաքսային մարմինները մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները ստուգում են տեղեկությունների հավաստիությունը, փաստաթղթերի իսկությունը և (կամ) դրանց լրացման և (կամ) ձևակերպման ճշտությունը որոշելու նպատակով*:

Խնդիրն այն է, որ փաստաթղթերի և տվյալների ստուգումը՝ որպես մաքսային հսկողության ձև, որևէ գրավոր ամրագրում չի ստանում և արժևորվում է, մասնավորապես, որոշակի մաքսային ընթացակարգով ապրանքի մաքսային ձևակերպման ինստիտուտի դիրքերից: Բնական է, որ նման պայմաններում այն չունի մաքսային հսկողության ձև դիտարկվելու բավարար ինքնուրույնություն հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ հսկողական ցանկացած ձևի կիրառման պարագայում էլ այս կամ այն չափով ստուգվում են որոշակի փաստաթղթեր և տվյալներ: Հետևապես, գտնում ենք, որ որպես հսկողական առանձին ձև՝ փաստաթղթերի և տվյալների ստուգման նախատեսումը նույնպես նպատակահարմար չէ:

Ավելորդ չէ հիշատակել նաև, որ դրա իրավական ամրագրման հարցում ծագում են որոշակի օրենսդրական հակասություններ: Այսպես, մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են, առաջին հերթին, Միության օրենսգրքի 98-րդ հոդվածով, ինչպես նաև Օրենքի 124-րդ հոդվածով: Բացի այդ, մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ու

տեղեկությունների ցանկերը եվ դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 21.11.2003թ. N 1779-Ն որոշմամբ:⁷⁶

Մասնավորապես, Միության օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսվել է այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն է տալիս մաքսային մարմիններին բանկերից և բանկային գործառնությունների առանձին տեսակներ իրականացնող կազմակերպություններից փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու իրականացվող արտաքին տնտեսական գործարքների դրամական գործառնությունների վերաբերյալ:

Համանման իրավակարգավորում սահմանված է նաև Օրենքի 125-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ մաքսային մարմիններն իրավունք ունեն հարցում կատարելու բանկերին և բանկային գործարքներ իրականացնող կազմակերպություններին մաքսային հսկողության ենթակա անձանց արտաքին տնտեսական գործունեությանը վերաբերող՝ մաքսային հսկողություն իրականացնելու համար դրամական հոսքերի վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու նպատակով: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումն իրականացվում է «Բանկային գաղտնիքի մասին»⁷⁷ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Մեր համոզմամբ, նշված իրավակարգավորումը հակասում է «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին, որում ընդհանուր առմամբ նախատեսված է այն սկզբունքը, որ բանկային գաղտնիքը տրամադրվում է բացառապես դատական համապատասխան ակտի հիման վրա: Ավելին, նույնիսկ քրեական հետապնդման մարմինների գրավոր պահանջի հիման վրա բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրման ենթակա չեն, որի մասին արգելքն ուղղակիորեն սահմանված է «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի շրջանակներում: Հատկանշական է, որ դատարանի որոշմամբ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման պահանջն ամրագրված է նաև նաև այն պարագայում, երբ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պահանջում են հարկային մարմինները: Նշված դատողության

⁷⁶ Ընդունվել է 21.11.2003թ., ստորագրվել է 29.12.2003թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.02.04/7(306):

⁷⁷ Ընդունվել է 07.10.1996թ., ստորագրվել է 14.10.1996թ.: Տե՛ս ՀՀ ԱԺՏ 1996.10.15/19 (1119):

իրավական հիմքը «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածն է, որի համաձայն՝ բանկն իր հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, սույն օրենքին համապատասխան, տրամադրում է Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններին միայն **դատարանի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա, ինչպես նաև իր հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա:**

Մինչդեռ, Միության օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից հարցման դեպքում՝ մաքսային միության բանկերը և մյուս վարկային կազմակերպությունները տրամադրում են մաքսային ստուգում անցկացնելու համար անհրաժեշտ, այդ թվում՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ու փաստաթղթեր կազմակերպության հաշիվներում առկա դրամական միջոցների շարժի վերաբերյալ՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Փաստորեն, Օրենքով և Միության օրենսգրքով, ըստ էության, նախատեսվել է իրավակարգավորում, որն էապես ունահարում է այլ անձանց, սույն պարագայում բանկի հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը: Այն, որ մաքսային մարմինների հարցման առարկա տեղեկատվությունը համարվում է բանկային գաղտնիք, հիմնավորվում է հենց «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, որի համաձայն՝ բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները (...): Ակներև է, որ արտաքին տնտեսական գործարքների դրամական գործառնությունների վերաբերյալ տվյալներն ինքնին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ են, որոնց իրավական պաշտպանությունը պետք է իրականացվի նույն հիմունքներով:

Հետևապես, այս առումով ընդունելի չենք համարում Օրենքով և Միության օրենսգրքով նախատեսված մոտեցումը և գտնում ենք, որն այն ակնհայտորեն ենթակա է վերանայման:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին մաքսային մարմինների կողմից մաքսային օրենսդրության պահպանման նպատակով իրականացվող միջոցառումները մաքսային հսկողության ձև դիտարկելու համար ուղղակիորեն անհրաժեշտ է հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

– *Միջոցառումը պետք է անպայմանորեն ենթադրի դրա սկիզբը, ընթացքն ու ավարտն արձանագրող կոնկրետ փաստաթղթի առկայություն:*

– *Միջոցառումը պետք է ուղղված լինի առկայության մասին բավարար հիմքեր ներառող իրավախախտման փաստի բացահայտմանը.*

Նշված չափանիշների դիտանկյունից գնահատման առարկա դարձնելով մաքսային հսկողության ինստիտուտի առկա իրավակարգավորումները՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է որոշակիորեն փոփոխել մաքսային հսկողության գոյություն ունեցող ձևերը՝ տարբերակելով դրանք հսկողության միջոցներից: Որպես ելակետ ընդունելով վերը հիշատակված չափանիշները՝ առաջարկում ենք մաքսային հսկողության ձևերի հետևյալ համակարգը.

– *Մաքսային տեսազննում.*

– *Մաքսային զննում.*

– *Անձնական զննում.*

– *Մաքսային ստուգում:*

Ընդ որում, ուշագրավ է այն, որ վերը հիշատակված բոլոր դեպքերում էլ մաքսային հսկողության համապատասխան կառուցակարգի արդյունքները ձևակերպվում են համապատասխան փաստաթղթով, որն արտացոլում է դրա արդյունքում խախտումների առկայության կամ բացակայության մասին:

Առհասարակ, Միության օրենսգրքի վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանում հստակորեն և համարժեքորեն արտացոլված չեն մաքսային հսկողության ձևերի կիրառման իրավաչափության վավերապայմանները և դրանցից յուրաքանչյուրի

կիրառման իրավափաստական հիմքերը: Ավելին, ուշագրավ է, որ գոյություն ունեցող մաքսային հսկողության ձևերի կիրառման հարցում որևէ քանակական սահմանափակում օրենսդրորեն նախատեսված չէ: Գործող օրենսդրական կարգավորումից բխում է, որ հսկողության միևնույն ձևը նույն դեպքի կապակցությամբ կարող է կիրառվել մի քանի անգամ, որը, գտնում ենք, սկզբունքորեն անընդունելի է: Այս առումով բոլորովին պատահական չէ, որ 2000թ. մաքսային օրենսգրքի 150.1-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում էր սահմանափակում առ այն, որ եթե առկա են սույն օրենսգրքով սահմանված մաքսային հսկողություն իրականացնելու իրավական հիմքեր, ապա մաքսային մարմինները կարող են իրականացնել կրկնակի հետբացթողումային հսկողություն՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր հանձնարարությամբ:

Մեր համոզմամբ, մաքսային հսկողության ձևերից մի քանիսն էապես սահմանափակում են անձի իրավունքները և դրանց կիրառման պարբերականության հարցում մաքսային մարմիններին բացարձակ հայեցողություն տալն ընդունելի չէ: Դրանց մասով նպատակահարմար կլիներ ամրագրել սահմանափակում առ այն, որ որևէ հաշվետու ժամանակահատվածում դրանք չեն կարող իրականացվել մեկից ավելի անգամ: Ուստիև, առաջարկում ենք մաքսային հսկողության որոշ ձևերի (*արտագնա մաքսային ստուգում, անձնական մաքսային զննություն*) կիրառման հարցում օրենսդրորեն ամրագրել սահմանափակում առ այն, որ դրանք նույն փաստական հանգամանքների առնչությամբ ծագած հիմքերով չեն կարող իրականացվել մեկից ավելի անգամ: Հակառակ դեպքում, մաքսային մարմինն ընձեռնվում է անսահմանափակ հայեցողական ազատություն նախկինում ոչ պատշաճ, թերի իրականացված անձնական զննության կամ օրինակ, արտագնա մաքսային ստուգման բացասական հետևանքները վերացնել հսկողական միևնույն ձևի բազմակի կիրառման ընթացքում:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև մաքսային հսկողության գոյություն ունեցող ձևերի և վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման միջոցների հարաբերակցության հետ կապված հարցերը: Բանն այն է, որ մաքսային հսկողության ձևերից մի քանիսը (*օրինակ՝ անձնական զննումը,*

զննությունը) միաժամանակ հանդես են գալիս նաև որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման միջոցներ, որպիսի պայմաններում օբյեկտիվորեն ծագում է դրանց տարբերակման անհրաժեշտություն: Անվերապահորեն պետք է համաձայնել մասնագիտական գրականության մեջ տեղ գտած այն մոտեցմանը, որ մաքսային կարգավորման կատարելագործումը պահանջում է մի կողմից, դրանց հստակ տարբերակում, մյուս կողմից, դրանց փոխկապակցվածության ապահովում մաքսային վարչարարության անընդհատության ապահովման նպատակով:⁷⁸ Օ.Վ.Գրեչկինայի համոզմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման միջոցները պայմանավորված են ոչ իրավաչափ վարքագծի փաստով, մինչդեռ մաքսային հսկողության ձևերը հանդիսանում են վերահսկողական-նախազգուշական կամ կիրառվում են հասարակության և պետության օրինական շահերի պաշտպանության նպատակով:⁷⁹

Իսնդիրն այն է, որ ի տարբերություն մաքսային հսկողության ձևի՝ մաքսային իրավախախտման վերաբերյալ վարույթի ապահովման միջոցները կիրառվում են վարչական վարույթի առնչությամբ: Արդյունքում, ըստ էության, հնարավոր է, որ անձնական զննությունը՝ որպես մաքսային իրավախախտման վերաբերյալ վարույթի ապահովման միջոց, կիրառվի այն պարագայում, երբ արդեն իսկ այն կիրառվել է որպես մաքսային հսկողության ձև: Ընդ որում, առավել հատկանշական է, որ նշված միջոցները, թեպետ ունեն նույն իրավական բովանդակությունը, այսուհանդերձ, չեն իրականացվում ընթացակարգային միևնույն երաշխիքներով: Օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի⁸⁰ և Միության օրենսգրքի համապատասխանաբար՝ 263-րդ և 117-րդ հոդվածներով սահմանված անձնական զննության ընթացակարգային նորմերը միմյանցից էապես տարբերվում են և ապահովում են անձի համար տարբերվող իրավական երաշխիքներ: Ակներև է, որ որպես մաքսային իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման

⁷⁸ Ст'у Новиков А.Б. Таможенный контроль в системе административных процедур таможенного дела. Ученые записки Санкт-Петербургского имени В.Б.Бобкова филиала Российской таможенной академии, 2005, № 2 (24), էջ 25:

⁷⁹ Ст'у Гречкина О.В. Таможенный контроль как административно-юрисдикционная деятельность, Право и практика. 2010, № 1, էջ 107:

⁸⁰ Ընդունվել է 06.12.1985թ., ուժի մեջ է մտել 01.06.1986թ., (ՀՍՍՀԳՍ 1985/23):

միջոց՝ անձնական զննությունն իրականացվում է արդեն իսկ հարուցված վարչական վարույթի առնչությամբ, ինչը, մեր համոզմամբ, ենթադրում է իրավախախտման մասին ենթադրյալ կասկածի առավել բարձր շեմ: Բնականաբար, դրանով պայմանավորված՝ այն պետք է իրականացվեր իրավական առավել բազմակողմանի երաշխիքներով: Մինչդեռ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 263-րդ հոդվածով առկա իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն համարժեքորեն ապահովված չէ: Մասնավորապես, նշված հոդվածով կարգավորված չեն անձնական զննության իրականացման ընթացքում ելակետային նշանակություն ունեցող ընթացակարգային այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ զննության ենթարկվող անձին իր իրավունքների պարզաբանումը, թաքցված ապրանքների կամավոր հանձնման մասին առաջարկը և այլն: Մինչդեռ, նշված հարցերն ունեն ելակետային նշանակություն խնդրո առարկա կառուցակարգի արդյունավետ կիրառման համար: Հետևապես, գտնում ենք, որ հիշյալ խնդիրը պետք է կարգավորվի օրենսդրությամբ մաքսային զննության և զննության՝ որպես համապատասխանաբար մաքսային հսկողության ձևի և մաքսային իրավախախտման վերաբերյալ վարույթի ապահովման միջոցի տարբերակված կառուցակարգեր նախատեսելով:

Որպես խնդրի լուծում՝ իրավաբանական գրականության մեջ առաջարկվում է մաքսային հսկողության արդյունքները դիտարկել որպես ապացույց քաղաքացիական, քրեական կամ վարչական գործերով:⁸¹ Ավելին, «Մաքսային կարգավորման մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքով նշված մոտեցումը նախատեսվել է նաև օրենսդրորեն: Մասնավորապես, հիշյալ օրենքի 171-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության անցկացման արդյունքները, որոնք ձևակերպվել են [օրենքով] սահմանված կարգով կարող են որպես ապացույց օգտագործվել քրեական, քաղաքացիական և վարչական իրավախախտման վերաբերյալ գործով և դատարանի, արբիտրաժային դատարանի կամ պաշտոնատար անձի կողմից գնահատվել նշված գործերի քննության ընթացքում այլ ապացույցների հետ մեկտեղ քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության, քրեական դատավարության և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով:

⁸¹ Տե՛ս Օ.Վ. Гречкина, Таможенный контроль в системе координат таможенного законодательства Таможенного союза, Вестник. Уральского института экономики, управления и права. 2009, № 4, էջ 25:

Համանման իրավակարգավորում առկա է նաև «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 130-րդ հոդվածում: Մեր համոզմամբ, սակայն, խնդիրը սուկ մաքսային հսկողության արդյունքների՝ որպես ապացույց օգտագործվելու իրավական ամրագրման հարցում չէ: Այսպես թե այնպես, դատավարական իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերն ընդհանուր առմամբ թույլատրելի են համարում գրավոր ապացույցների օգտագործումը: Խնդիրը, սուկ մաքսային հսկողության արդյունքների՝ որպես ապացույց օգտագործվելու պրակտիկ հնարավորության պատշաճ իրացումն է: Ակներև է, որ այդ արդյունքները, իրենց ծանրակշիռ ապացուցողական նշանակությամբ պայմանավորված, կարող են և պետք է արդյունավետորեն օգտագործվեն վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում:

Այսպիսով, մեր համոզմամբ ընթացող մաքսային բարեփոխումների առանցքը, ի թիվս այլնի, պետք է կազմի մաքսային հսկողության ձևերի ու միջոցների համարժեք տարբերակումը: Բնականաբար, խնդրի կարգավորումը, առաջին հերթին, պետք է իրականացվի միութենական մակարդակով, իսկ հետագայում արդեն ներպետական օրենսդրությամբ կնախանշվեն դրանց առանձնահատկությունները:

Միության օրենսգրքով սահմանված մաքսային հսկողության ձևերի շրջանակներում դիտարկվել է նաև մաքսային դիտարկումը: Մասնավորապես, Միության օրենսգրքի 114-րդ հոդվածն արձանագրում է, որ մաքսային դիտարկում է համարվում մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից բաց, նպատակաուղղված, կանոնավոր կամ մեկանգամյա անմիջական կամ միջնորդավորված տեսողական, այդ թվում՝ տեխնիկական միջոցների օգտագործմամբ, դիտարկումը մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների փոխադրման, դրանց հետ կապված բեռնային և այլ գործողությունների իրականացման նկատմամբ: Այն, ըստ էության, մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքի կամ դրա նկատմամբ կատարվող բեռնային գործողությունների նկատմամբ արտաքին տեսողական դիտարկումն է: Ի տարբերություն մաքսային տեսազննման, մաքսային դիտարկման պարագայում չի կազմվում որևէ գրավոր փաստաթուղթ: Մաքսային տեսազննման պարագայում օբյեկտ

է համարվում բացառապես ապրանքը և դրա նկատմամբ կիրառված նույնականացման միջոցը: Մինչդեռ, մաքսային դիտարկման շրջանակներում դիտարկվում են նաև ապրանքի նկատմամբ կատարվող բեռնային գործողությունները, ինչպես նաև տրանսպորտային միջոցի փոխադրման գործընթացը: Ակներև է, որ առանձին դեպքերում մաքսային դիտարկումը կարող է ուղղակիորեն նախորդել մաքսային տեսազննմանը: Ավելին, մաքսային դիտարկումը կարող է իրականացվել անգամ մաքսային տեսազննման ընթացքում: Հետևապես, մեր համոզմամբ, մաքսային հսկողության խնդրո առարկա ձևը նույնպես օժտված չէ առարկայական բավարար ինքնուրույնությամբ մաքսային հսկողության ձև դիտարկվելու իմաստով հատկապես այն իրողությունների հաշվառմամբ, որ դրա արդյունքները որևէ գրավոր ամրագրում չեն ստանում և այն չի իրականացվում մաքսային օրենսդրության խախտման բավարար փաստակազմ ենթադրող իրավիճակներում:

Միության օրենսգրքի 113-րդ հոդվածով որպես մաքսային հսկողության ձև՝ նախատեսվել է նաև բացատրությունների ստացումը: Այսպես, Միության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասն արձանագրում է, որ *բացատրությունների ստացում է համարվում մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից մաքսային գործի բնագավառում անհրաժեշտ տեղեկությունների ստացումը փոխադրողներից, հայտարարատուներից և մաքսային հսկողության իրականացման համար նշանակություն ունեցող հանգամանքներից տեղյակ այլ անձանցից:*

Բանն այն է, որ թեպետ այս պարագայում բացատրությունները ստացվում են գրավոր հիմունքներով, այսուհանդերձ, մաքսային հսկողության նշված նշված ձևի կիրառումը չի ենթադրում մաքսային մարմնի կողմից կայացվող ու սկիզբ, ընթացք և կոնկրետ արդյունքներ ներառող ընթացակարգային փաստաթղթի առկայություն, որում արտահայտվում է նաև վերջինիս կամքը: Այն սուկ արձանագրողական բնույթի տեղեկատվություն է առ այն, թե այս կամ այն հանգամանքի առնչությամբ ինչպիսի տեղեկատվության են տիրապետում մաքսային գործի բնագավառում գործունություն իրականացնող և այլ անձինք: Բացատրությունների ստացումը, բացի մաքսային մարմնի կողմից իրականացվող արձանագրողական բնույթի գործողությունների, չի

ենթադրում որևէ այլ ակտիվ և կամային գործողություն ուղղված մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանմանը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ապրանքների՝ հատուկ դրոշմանիշներով դրոշմավորման, դրանց վրա նույնականացման նշանների առկայության ստուգման՝ որպես մաքսային հսկողության ինքնուրույն ձևի նախատեսումը: Դրա իրավական հիմքերն առաջին հերթին մատնանշված են Միության օրենսգրքի 118-րդ հոդվածով: Մասնավորապես, հիշյալ հոդվածի 1-ին մասն արձանագրում է, որ մաքսային մարմինների կողմից իրականացվում է ապրանքների կամ դրանց փաթեթվածքի վրա հատուկ դրոշմանիշների, նույնականացման նշանների առկայության կամ ապրանքների այլ կերպ նշագրման ստուգումը, որոնք կիրառվում են Մաքսային միության մաքսային տարածք դրանց ներմուծման օրինականության հաստատման նպատակով այն դեպքերում, որոնք նախատեսված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Ապրանքների պարտադիր դրոշմավորման դեպքեր ներպետական օրենսդրությամբ նախատեսված են մի շարք իրավական ակտերում: Մասնավորապես, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածում ուղղակիորեն սահմանվել է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների այն պարտադիր ցանկը, որոնք օրենքի համաձայն ենթակա են պարտադիր դրոշմավորման օտարման ցանկացած փուլում:⁸² Նմանատիպ կարգավորումներ են նախատեսված նաև «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով:⁸³

Ըստ էության, չնայած հիշյալ նորմի ոչ պատշաճ ձևակերպված խմբագրությանը, ակներև է, որ մաքսային հսկողության քննարկվող ձևի շրջանակներում ներառվում է մեկ փաստ՝ պարզել ապրանքի նկատմամբ առկա է արդյոք դրոշմ, նույնականացման նշան կամ ապրանքի այլ կերպ նշագրում այն դեպքում, երբ օրենսդրությամբ նշված ապրանքների դրոշմավորման պահանջը պարտադիր է: Բանն այն է, որ մաքսային հսկողության հիշյալ ձևով հետապնդվող խնդիրներն ամբողջապես ներառվում են

⁸² Ընդունվել է 24.11.2004թ. ուժի մեջ է մտել 21.12.2004թ. ՀՀՊՏ 2004.12.28/72 (371):

⁸³ Ընդունվել է 07.07.2000թ. ուժի մեջ է մտել 27.07.2000թ. ՀՀՊՏ 2000.08.01/17 (115):

մաքսային հսկողություն գոյություն ունեցող այլ ձևերի բովանդակության մեջ, օրինակ՝ մաքսային զննում, տեսազննում, մաքսային դիտարկում: Հետևապես, մեր համոզմամբ, արդյունավետ և նպատակահարմար չէ մաքսային հսկողության այլ ձևերի շրջանակներում արդեն իսկ ներառված հետազոտության ենթակա օբյեկտներից առանձնացնել սուկ մի քանիսը և դրանց համար սահմանել մաքսային հսկողության առանձին ձև: Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ Միության օրենսգիրքը մաքսային հսկողության այս ձևի պարագայում չի նախատեսում որևէ տարբերակված ընթացակարգ և առանձնահատուկ իրավակարգավորում: Նշված հսկողության ձևի շրջանակներում չի կայացվում որևէ առանձին որոշում:

Ավելին, Միության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասն արձանագրում է որ *ապրանքների կամ դրանց փաթեթվածքի վրա հատուկ դրոշմանիշների, նույնականացման նշանների կամ ապրանքների այլ կերպ նշագրման բացակայությունը դիտվում է որպես Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ներմուծում, որն իրականացվել է առանց մաքսային գործառնությունների իրականացման և ապրանքների բացթողման, եթե այն անձը, որի մոտ հայտնաբերվել են այդպիսի ապրանքներ, հայտարարատու կամ շահագրգիռ այլ անձը հակառակը չի ապացուցում:*

Փաստորեն, օրենսդիրը քննարկվող հսկողական ձևի շրջանակներում, ըստ էության, նախատեսում է ապացուցողական կանխավարկած, որի ամրագրման էությունը, թերևս խիստ վիճելի է: Փաստորեն, ստացվում է այնպես, որ ի սկզբանե դրոշմավորման կամ այլ նշագրման բացակայության դեպքում հայտարարատուն կամ այլ շահագրգիռ անձը պետական մարմնի հետ հայտնվում է անհավասար իրավիճակում: Բանն այն է, որ այսպես թե այնպես, նշված հարաբերություններում ապացուցման տեսակետից շատ ավելի կարողունակ սուբյեկտ է հանդիսանում մաքսային մարմինը: Փաստորեն, առանց այն էլ ավելի թույլ սուբյեկտի վրա դնելով ապացուցման պարտականությունը՝ օրենքը, բնականաբար, հենց նրա վրա էլ դնում է դրա չկատարման բացասական հետևանքները:

Այսպիսով, մեր համոզմամբ, մաքսային հսկողության կառուցակարգերը պետք է շարադրվեն՝ հիմքում ունենալով որոշակի գաղափարական ելակետ ու մեթոդ:

Հակառակ դեպքում գործող իրավակարգավորման պայմաններում մեկ միասնական համակարգի շրջանակներում կարգավորվել են այնպիսի հսկողական ձևեր, որոնք ակնհայտորեն մաքսային հսկողության իրականացման համար չունեն նույն իրավական նշանակությունը կամ արդեն իսկ առկա, մեկ այլ հսկողական ձևի բաղադրիչ են: Ուստի, իրավակարգավորման հստակության, իրավական որոշակիության ապահովման տեսակետից նպատակահարմար կլինի դրանց համար սահմանել տարբերակված իրավակարգավորում: Առաջարկվող իրավակարգավորումը հնարավորություն կտա մաքսային ծառայողին հստակորեն կողմնորոշվելու մաքսային հսկողության ձևերի և միջոցների ընտրության հարցում: Բացի այդ, նախանշելով նաև առանձին հսկողական ձևերի՝ կոնկրետ ժամանակամիջոցում բազմակի անգամ կիրառվելու մասին սահմանափակող դրույթներ՝ կապահովվի նաև խնդրո առարկա ոլորտում հանրային և մասնավոր շահի հարաբերակցությունը:

§2. Անձնական զննումը՝ որպես մաքսային հսկողության առանձնահատուկ ձև

Մաքսային հսկողության իրականացման ձևերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում անձի անձնական զննման ինստիտուտը, որը հանդես է գալիս որպես մաքսային հսկողության բացառիկ, առանձնահատուկ ձև: Դրա առանձնահատուկ բնույթը պայմանավորված է այն իրողությամբ, որ հիմնականում հենց այս ոլորտում կարող են դրսևորվել մաքսային իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտումները: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, նշված հսկողական կառուցակարգը կիրառելիս անհրաժեշտ է խստորեն ապահովել ընթացակարգային կարգապահություն, որպեսզի չխախտվեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:⁸⁴

Ակներև է, որ անձնական զննման իրականացումը ենթադրում է անձանց իրավական կարգավիճակի էական սահմանափակումներ, որպիսի իրավիճակը

⁸⁴ Ст'у Гатаулина О.А. Дуалистическая природа личного таможенного досмотра, Вестник Бурятского государственного университета. 2014, № 2, էջ 184:

ողջամտորեն պահանջում է առավել հստակ և որոշարկված իրավակարգավորում: Պետք է համաձայնել Դ.Ա. Գազիզովի այն պնդմանը, որ քննարկվող կառուցակարգն էապես շոշափում է քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը, ենթադրում է ուժեղ հոգեբանական ներգործություն, ինչը պայմանավորում է դրա իրականացման հստակ իրավակարգավորման անհրաժեշտությունը:⁸⁵ Իհարկե, ասվածն ամենևին չի նվազեցնում մաքսային հսկողության մյուս ձևերի շրջանակներում ծագող հարաբերությունների կարգավորման գործնական նշանակությունը: Պետության կողմից վարվող մաքսային քաղաքականության արդյունավետ իրականացումը պայմանավորված է մաքսային հսկողության բոլոր բաղադրիչների համակարգված և ներդաշնակ կենսագործմամբ: Պարզապես, հաշվի առնելով մաքսային օրենսդրության խախտումների բացահայտման ու կանխարգելման գործում նշված միջոցառման բացառիկ կարևորությունը՝ գտնում ենք, որ դրա կարգավորումն ուղղակիորեն պահանջում է ընթացակարգային կարգավորման առավել հստակ ուղենիշներ: Առավելևս, որ Միության օրենսգրքի 117-րդ հոդվածը, փաստորեն, թույլատրելի է համարում անձնական զննման իրականացումը ոչ միայն մաքսային մարմնի ղեկավարի (տեղակալի), այլ նաև նրանց փոխարինող անձանց գրավոր որոշմամբ: Այս տեսակետից արդիականություն չի կորցրել Բ.Ն.Գաբրիչիձեի այն պնդումը, որ անձնական զննության կիրառումը պայմանավորված է կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների, զենքի և պատմամշակութային արժեքների մաքսանենգության դեմ պայքարի անհրաժեշտությամբ, որոնք մեծ մասամբ ձեռք են բերում անդրազգային բնույթ:⁸⁶

Անձնական մաքսային զննման բացառիկ բնույթը դրսևորվում է նաև նրանում, որ դրան պետք է դիմել բացառապես այն պարագայում, երբ մաքսային հսկողական այլ կառուցակարգերի կիրառմամբ հնարավոր չէ հայտնաբերել մաքսային օրենսդրության դրույթի խախտման փաստը: Այս իմաստով, գտնում ենք, որ որպես ընթացակարգային ուղենիշ համարվող նորմ՝ պետք է օրենսդրորեն ուղղակիորեն ամրագրվեր նշված

⁸⁵ Ст'у Газизов Д.А. Досмотр, как мера административного принуждения применяемая полицией для противодействия правонарушениям в сфере оборота наркотических средств /Административное право и процесс., 2012, № 2 էջ 51:

⁸⁶ Ст'у Российское таможенное право. Учебник для вузов. Руководитель авторского коллектива и ответственный редактор д.ю.н., проф. Б.Н. Габричидзе. М.: Издательская группа НОРМА-ИНФРА-М, 1998, էջ 259:

դրույթը, ինչը մաքսային մարմնի պաշտոնատար անձի մոտ զգալիորեն կբարձրացնեք անձնական զննման իրականացման պատասխանատվությունը:

Առհասարակ, անձնական զննման՝ որպես մաքսային հսկողության բաղադրիչի խնդիրների շուրջ արտահայտված մոտեցումները միասնական չեն: Հեղինակների մի խումբ գտնում է, որ անձնական զննումը նպատակ է հետապնդում սուկ հայտնաբերելու իրավախախտման գործիքները կամ առարկաները:⁸⁷ Տեսաբանների մեկ այլ խմբի համոզմամբ՝ անձնական զննումն իրականացվում է ոչ միայն հայտնաբերելու, այլ նաև զննության արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի համար նշանակություն ունեցող առարկաներն ու փաստաթղթերն առգրավելու նպատակով:⁸⁸ Ե. Կ. Չերկասովայի համոզմամբ՝ անձնական մաքսային զննության նպատակը վարչական իրավախախտման գործիքների ու առարկաների, ինչպես նաև քաղաքացիական շրջանառությունում արգելված առարկաների հայտնաբերումն ու առգրավումն է:⁸⁹

Մեր համոզմամբ, մաքսային հսկողության բաղադրիչների շրջանակում խնդրո առարկա ինստիտուտի էությունը պարզելու համար անհրաժեշտ է նախևառաջ հասկանալ՝ ինչ տեղ է այն գրավում վարչաիրավական ներգործության միջոցների շարքում: Ասվածը հիմնավորվում է այն հայտնի իրողության հաշվառմամբ, որ իրավունքի տարբեր ճյուղերում գործող և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացմանը լուրջ սպառնալիք ենթադրող միջոցառումներն իրենց բնույթով և իրավական էությամբ ողջամտորեն պետք է տարբերակված լինեն: Հակառակ դեպքում կստացվի, որ էությամբ նույն կամ գրեթե նույն իրավակարգավորումն ունեցող ինստիտուտը, որը քաղաքացու սուբյեկտիվ ընկալման տիրույթում առաջացնում է նույն փաստական և հոգեբանական դրությունը, գործառում է իրավունքի տարբեր ճյուղերում:

⁸⁷ Տե՛ս Карагодин А.В. Применение органами внутренних дел мер обеспечения производства по делам об административных правонарушениях. канд. юр. наук.- М., 2006.- էջ 158:

⁸⁸ Տե՛ս Пивоваров Д.В. Меры обеспечения производства по делам об административных правонарушениях, применяемые сотрудниками полиции, Вестник Кыргызского-Российского славянского университета, 2013, № 9, էջ 55:

⁸⁹ Տե՛ս Черкасова Е. К. Вестник правового регулирования и производства личного досмотра Вестник Уральского юридического института МВД России. 2015. № 1, էջ 57:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածով նախատեսված են անձնական խուզարկությունը և քննումը՝ որպես քննչական գործողություններ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով գործում է անձնական զննումը՝ որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման միջոց, իսկ Միության օրենսգրքով նաև որպես մաքսային հսկողության ձև: Նման պայմաններում գիտագործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում նշված ինստիտուտների հարաբերակցության հարցը:

Մեր համոզմամբ, անձի մարմնի (հագուստի) հետազոտումն անհրաժեշտ գործիքակազմ է ինչպես քրեական դատավարության ոլորտում, այնպես էլ վարչաիրավական հարաբերություններում: Այն համարժեք գործիք է կանխելու անձի հակաիրավական վարքագիծը և ապահովելու իրավունքի տվյալ ճյուղի խնդիրների կենսագործումը: Բայցևայնպես, կարծում ենք, որ վարչաիրավական զննության և անձնական խուզարկության սահմանները պետք է զատորոշվեն կոնկրետ ելակետային կողմնորոշիչներով: Ակներև է, որ անձնական մաքսային զննությունը չի հանդիսանում ոչ անձնական խուզարկություն, ոչ էլ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման միջոց: Այլ կերպ ասած՝ պետք է ուղղակիորեն հստակեցվի, թե ինչ չափորոշիչներով է տարբերվում անձնական զննությունը քրեադատավարական խուզարկությունից:

Ըստ էության, խնդրո առարկա իրավակարգավորումների տարբերակման հիմքում, մեր համոզմամբ, պետք է դրված լիներ քաղաքացու անձնական անձեռնմխելիությանն առավել նվազ չափով միջամտելու գաղափարը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ անձնական մաքսային զննության ընթացակարգը բովանդակային առումով որևէ կերպ չի տարբերվում անձնական խուզարկությունից: Ավելին, դրա համար սահմանված ընթացակարգը ենթադրում է նաև անձի մերկացում և նրա մարմնի ամբողջական մանրազնին հետազոտում: Նման պայմաններում ստացվում է այնպես, որ վարչաիրավական հարաբերություններում անձի անձնական կյանքը ենթարկվում է քրեադատավարական հարաբերություններում նման միջամտությանը համարժեք ներգործության:

Հետևապես, գտնում ենք, որ կամ պետք է նախատեսել այլ իրավակարգավորում, որի պարագայում անձի անձնական անձեռնմխելիությանը միջամտելու ծավալն անհամեմատ ավելի փոքր կլինի կամ պետք է նախատեսել այդպիսի միջամտության իրականացման լրացուցիչ իրավական երաշխիքներ: Օրինակ, Բելառուսի Հանրապետությունում անձնական զննումը բաժանվում է փուլերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացվում է կոնկրետ որոշակի նպատակով և բացառապես նախորդի անարդյունավետ լինելու պարագայում: Այսպես, օրինակ, անձի մարմնի անմիջական հետազոտմանը՝ որպես անձնական զննության հատուկ փուլի, կարելի է դիմել այն պարագայում, երբ անձի մարմնի (հագուստի) ընդհանրական տեսողական դիտարկմամբ հնարավոր չէ հասնել հետապնդվող խնդիրների լուծմանը:⁹⁰

Որպես այդպիսի չափանիշ՝ առաջարկում ենք անձնական մաքսային զննությունը սահմանափակել սուկ անձի մարմնի (հագուստի) ընդհանուր արտաքին դիտարկմամբ, իսկ նշված միջոցն անբավարար համարվելու դեպքում միայն սահմանել անձնական զննության իրականացման առանձին ընթացակարգ լրացուցիչ իրավական երաշխիքներով:

Պետք է նկատել, որ անձնական զննության մասին որոշման կայացման իրավաչափության վավերապայմանները ընդհանուր առմամբ շարադրված են Միության օրենսգրքի 117-րդ հոդվածում:

Մասնավորապես, Միության օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի զննումը մաքսային հսկողության բացառիկ ձև է, որը իրականացվում է մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի) տեղակալի կամ նրանց փոխարինող անձանց գրավոր որոշմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մաքսային սահմանով ուղևորվող և մաքսային հսկողության գոտում կամ միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում գտնվող ֆիզիկական անձն իր մոտ թաքցնում է մաքսային միության մաքսային օրենսդրության խախտմամբ տեղափոխվող ապրանքներ և կամավոր կերպով դրանք չի հանձնում:

⁹⁰ Տե՛ս «Անձնական մաքսային զննության մեթոդիկական սահմանելու մասին» հրաման, ընդունվել է Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի նախագահի կողմից 12.07.1997թ. թիվ 227-ՕԺ: www.pravo.levonevsky.org.

Անձնական զննման իրականացումը կարգավորող օրինադրույթների վերլուծությունից բխում է, որ, ըստ էության, որպես մաքսային հսկողության ձև՝ այն իրականացվում է չորս փուլերով.

- անձնական զննության իրականացման մասին որոշման կայացում.
- անձնական զննության իրականացման մասին որոշման իրազեկում.
- անձնական զննության ենթակա օբյեկտի անմիջական հետազոտում.
- անձնական զննության իրականացման մասին ակտի կազմում:

Ընդ որում, անձի մարմնի անմիջական հետազոտման փուլն ինքնին կարող է չկենսագործվել այնքանով, որքանով անձնական զննության մասին որոշման մասին իրազեկվելուց հետո զննման ենթարկվող անձը կարող է կամավոր տրամադրել օրենսդրության խախտմամբ տեղափոխվող և իր մոտ թաքցված առարկաները: Հետևապես, նշված փուլն ունի ֆակուլտատիվ նշանակություն անձնական զննության իրականացման համար:

Վկայակոչված իրավադրույթով, ըստ էության, որպես անձնական զննության իրականացման իրավաչափության վավերապայման՝ դիտարկվում է «բավարար հիմքերի» առկայությունը, որն այսուհանդերձ, գործող մաքսային օրենսդրության շրջանակներում չի բացահայտվում: Ստեղծված իրավիճակում ստացվում է այնպես, որ անձնական զննության իրականացումն ամբողջապես վերապահված է մաքսային մարմինների հայեցողական իրավասությանը, որը որևէ որոշակի ուղենիշով սահմանափակված չէ: Հատկանշական է, որ «բավարար հիմքեր» արտահայտության առարկայացումը խորթ չէ ներպետական օրենսդրությանը: Մասնավորապես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ կոնկրետացվել են «բավարար հիմքեր» արտահայտության շրջանակները:⁹¹

Այս տեսակետից պետք է միանշանակորեն համաձայնել ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012թ. ՍԴՈ-1038 որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում արձանագրված այն դիրքորոշմանը, որի համաձայն՝ օրենքով այս կամ այն իրավահարաբերության ծագման համար անհրաժեշտ և բավարար հիմքերի

⁹¹ Ընդունվել է 16.04.2001թ., ուժի մեջ է մտել 10.06.2001թ., ՀՀՊՏ 2001.05.31/15 (147):

սահմանումը (...) հետապնդում է իրավական կարգավորման ոլորտում որոշակիություն և կանխատեսելիություն ապահովելու իրավաչափ նպատակ:⁹²

Նման պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում հանգամանորեն հետազոտելու ոչ միայն անձնական զննության իրականացման կարգը, այլ նաև այն կոնկրետ հարցերը, որոնք վերաբերում են անձնական զննման իրականացման հիմքերին և ժամկետներին, որոնք ներպետական օրենսդրությամբ բավարար չափով կանոնակարգված չեն:

Մեր համոզմամբ, «բավարար հիմքեր» արտահայտությունն ինքնին չի կարող գնահատողական բնույթ կրել և բացարձակ հայեցողական ազատության հիմք լինել: Իրավական կատեգորիան չի կարող իրավակիրառողին վերապահել որևէ կերպ չհիմնավորված կերպով լիազորություն իրականացնելու իրավասություն: Նման մոտեցումն ամբողջապես կխաթարի վարչարարության ելակետային սկզբունքները: Իհարկե, հնարավոր չէ սպառնալ թվարկել բոլոր այն հիմքերը, որոնց առկայության պարագայում մաքսային մարմինը կարող է ձեռնամուխ լինել իրականացնելու անձնական զննություն: Բայցևայնպես, դրա չափանիշների առարկայացումը, կարծում ենք, կարող է նպաստել մաքսային հսկողության նշված կառուցակարգի կենսագործման և քաղաքացու իրավունքների և ազատությունների համակողմանի ապահովման միջև անհրաժեշտ ողջամիտ հարաբերակցության ապահովմանը: Հենց այդ մտահոգությունը հաշվի առնելով՝ առաջարկում ենք օրենսդրորեն առարկայացնել «բավարար հիմքեր» արտահայտությունը՝ դրան շնորհելով առավել կոնկրետ բովանդակային ծավալ: Մասնավորապես, գտնում ենք, որ անձնական զննում իրականացնելու հիմքերի համակցությունը կարող է գնահատվել բավարար հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

– դրա իրականացումը հիմնվում է ռիսկերի կառավարման համակարգի գնահատման վրա.

– առկա է ֆիզիկական անձի կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրության խախտմամբ ապրանքներ տեղափոխելու մասին փաստարկված ենթադրություն:

⁹² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012թ. ՍԴՈ-1038 թվակիր որոշումը:

Ինչ վերաբերում է անձնական զննում իրականացնելու փաստարկված ենթադրության ծագման իրավական հիմքերին, ապա այս պարագայում նույնպես գտնում ենք, որ դրանց շրջանակը նույնպես պետք է կոնկրետացվի: Մաքսային հսկողության նշված կառուցակարգն ակնհայտորեն չի կարող կենսագործվել կամայականորեն, օբյեկտիվ իրողություններից անջատ: Այս առումով գտնում ենք, որ փաստարկված ենթադրությունը կարող է ծագել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

– *Ֆիզիկական անձի կողմից իրավախախտման կամ դրա հիմնավոր կասկածի հատկանիշներ բովանդակող արարքի ենթադրյալ կատարումը.*

– *սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը, որը թույլ է տալիս ենթադրելու, որ ֆիզիկական անձը թաքցնում է մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ տեղափոխվող ապրանքներ:*

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում թաքցված ապրանքների կամավոր հանձնման իրավական հետևանքների հարցը, որը նույնպես ներպետական օրենսդրությամբ բավարար պարզորոշությամբ կանոնակարգված չէ: Այսպես, Միության օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անձնական զննումը սկսելուց առաջ մաքսային մարմնի պաշտոնատար անձը պարտավոր է ֆիզիկական անձին ներկայացնել անձնական զննում անցկացնելու մասին որոշումը, ֆիզիկական անձին ծանոթացնել զննման իրականացման ընթացքում իր իրավունքներին ու պարտականություններին և առաջարկել կամավոր հանձնել թաքցրած ապրանքները:* Օրենսդիրը որևէ կերպ չի կարգավորում այն հարցը, թե ապրանքների կամավոր հանձնման մասին պետք է նշվի անձնական զննության ակտի մեջ, թե այս դեպքում պետք է կազմվի անձնական զննում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշում:

Ընդ որում, խնդիրը կանոնակարգված չէ նաև «Անձի քննման մեթոդիկան» հաստատելու մասին ՀՀ մաքսային վարչության պետի 03.03.1997թ. թիվ 21 որոշմամբ:⁹³ Նախ, նշված որոշումն ընդունվել է ի կատարումն 27.08.1993թ. ՀՀ մաքսային օրենսգրքի 34-րդ հոդվածի և չի համապատասխանում անձնական զննության իրականացման գործող պահանջներին: Բացի այդ, նշված որոշման 1-ին

⁹³ Ընդունվել է 03.03.1997թ., ուժի մեջ է մտել 29.11.1997թ., ՀՀԳՏ 1997.11.19/4:

հավելվածում նշված քննման իրականացման մասին ակտով նախատեսված չէ կամավոր հանձնման փաստի հաստատման մասին որևէ պահանջ:⁹⁴

Ուշագրավ է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 147.1-րդ հոդվածն այս իմաստով առավել համակողմանի իրավակարգավորում էր սահմանում: Մասնավորապես, դրա 147.1-րդ հոդվածի 8-րդ մասն ուղղակիորեն ամրագրում էր, որ անձին քննման ենթարկելու ընթացքում հայտնաբերված կամ կամավոր հանձնված ապրանքների, առարկաների կամ իրերի նկարագրության, փաթեթավորման և կնքման համար կազմվում է առանձին արձանագրություն, որը կցվում է անձին քննման ենթարկելու մասին արձանագրությանը:

Իրավաբանական գրականության մեջ նշված հարցի շուրջ արտահայտված կարծիքներից մեկի համաձայն՝ թաքցված ապրանքների կամավոր հանձնման դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը: Որոշումներից մեկի պարագայում անձնական մաքսային զննության ակտում հաստատվում է նշված փաստը և մաքսային մարմնի պաշտոնատար անձը որոշում է ընդունում սահմանափակվել վերցված ապրանքների առգրավմամբ: Երկրորդ դեպքում դարձյալ արձանագրվում է այդ փաստը և մաքսային մարմնի պաշտոնատար անձը որոշում է ընդունում օրենքով սահմանված կարգով մաքսային հսկողության նշված ձևի անցկացման մասին, եթե վերջինս ունի բավարար հիմքեր ենթադրելու, որ ֆիզիկական անձը կամավոր կերպով դրանք ամբողջությամբ չի հանձնում:⁹⁵

Մեր համոզմամբ, անձի մարմնի անմիջական հետազոտման փուլը կարող է չիրականացվել այն պարագայում, երբ անձնական զննման ենթարկվող անձը կամավոր հանձնում է իր մոտ թաքցված առարկաները: Դրանով պայմանավորված՝ ապրանքների կամավոր հանձնման փաստն ամբողջովին ներառվում է անձնական զննության կառուցակարգի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ թաքցված ապրանքների կամովին հանձնումն ամենևին չի նշանակում, որ անձնական զննում չի իրականացվում: Պարզապես, այս պարագայում անձնական մաքսային զննումն

⁹⁴ Հարկ է նկատի ունենալ, որ նշված հարաբերությունները կարգավորող «Անձի քննման մեթոդիկան հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 05.02.2001թ. № 81 որոշումն ուժը կորցրել է 28.06.2007թ. ՀՀՊՏ 2001.02.23/5 (137):

⁹⁵ Տե՛ս Григорян Т.В. Реализация принципа гуманизма в исключительной форме таможенного контроля, Вестник Забайкальского государственного университета, 2014. № 7, էջ 144:

ավարտվում է ապրանքները կամովին հանձնելով, որպիսի փաստը, բնականաբար, ենթակա է առանձին իրավական ձևակերպման: Հետևապես, նշված փաստն ինքնին պետք է արձանագրվի անձնական մաքսային զննության մասին ակտով: Ընդ որում, ասվածն ունի ոչ միայն արձանագրողական արժեք, այլ նաև գործնական նշանակություն: Խնդիրն այն է, որ մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողությունների իրավաչափությունը վիճարկելիս նշված ակտն ունի ծանրակշիռ ապացուցողական նշանակություն: Դրանում ամրագրված են անձնական զննության իրականացման համար իրավական նշանակություն ունեցող ցանկացած հանգամանքի մասին տեղեկություններ, որոնք, բնականաբար, ունեն առաջնային նշանակություն խնդրո առարկա միջոցառման իրականացման օրինականությունը գնահատելիս:

Հետևապես, գտնում ենք, որ ապրանքների կամավոր հանձնման դեպքում բացակայում է անձնական զննում իրականացնելուց հրաժարվելու անհրաժեշտությունը: Ուստիև, անհրաժեշտ է ընդունել անձնական մաքսային զննության իրականացման ընթացակարգը կարգավորող ՀՀ Կառավարության նոր որոշում, որով ուղղակիորեն կկարգավորվեն քննարկվող հսկողության ձևի մեթոդիկայի հետ կապված խնդիրները: Նշված որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Միության մաքսային օրենսդրությունից բխող նոր պահանջներին ներպետական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության ապահովման անհրաժեշտությամբ:

Հատկանշական է, որ խնդրի մեր կողմից առաջարկվող լուծումը համահունչ է նաև Մաքսային միության շրջանակներում գործող «Մաքսային փաստաթղթերի ձևերի մասին» որոշման պահանջներին⁹⁶, որով ուղղակիորեն նախանշվել է, որ անձնական մաքսային զննության ակտի մեջ անպայմանորեն ներառվում են ապրանքների կամավոր հանձնման փաստը և ապրանքների ցանկը:

Ուշագրավ է, որ նշված որոշմամբ նախատեսված անձնական մաքսային զննության արձանագրության մեջ չի ամրագրվել զննության սկզբի և ավարտի մասին տեղեկություններ ներառելու մասին պահանջ, ինչը, գտնում ենք, նույնպես

⁹⁶ Տե՛ս Մաքսային միության հանձնաժողովի որոշումը 20.05.2010 N° 260 (խմբ. 18.10.2014) Մաքսային փաստաթղթերի ձևի մասին: www.eaeunion.org

խնդրահարույց է անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության իմաստով:

Միության օրենսգրքով կանոնակարգված չէ նաև անձի կողմից անձնական մաքսային զննության ակտը չստորագրելու դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողությունների հաջորդականությունը: Գտնում ենք, որ այս պարագայում նույնպես պետք է նախատեսված լիներ առավել որոշակի իրավական ընթացակարգ: Մասնավորապես, նպատակահարմար կլիներ ամրագրել մաքսային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից անձնական զննության ակտը չստորագրելու մասին համապատասխան գրառում կատարելը, որը կարող է փաստել ընթերականների ստորագրությամբ:

Այս իմաստով գիտագործնական առանձին հետաքրքրություն է ներկայացնում անձնական մաքսային զննության անցկացման օրինականությունն ապահովող իրավական երաշխիքների հարցը: Այսպես, Միության օրենսգրքի 117-րդ հոդվածի 6-րդ մասն արձանագրում է, որ *անձնական զննումը իրականացվում է մաքսային մարմնի՝ զննման ենթարկվողի հետ նույն սեռի պաշտոնատար անձի կողմից, նույն սեռի 2 (երկու) ընթերականների ներկայությամբ սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող մեկուսացված սենյակում:*

Օրենսդիրը, ըստ էության, պարտադիր է համարում անձնական զննության անցկացումը բացառապես ընթերականների ներկայության պայմաններում՝ չնախատեսելով նշված կանոնից որևէ բացառություն: Բանն այն է, որ առանձին դեպքերում ընթերականների ներկայությամբ նշված գործողությունների իրականացումը կարող է էական վնաս պատճառել այլ անձանց կյանքին, առողջությանն ու օրենքով պաշտպանվող շահերին: Օրինակ, ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության դեպքում ակնհայտ է, որ դրանց գտնվելը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի մոտ արդեն իսկ լուրջ սպառնալիք է հանրության համար: Նման դեպքերում ընթերականների մասնակցության հարցը թեպետ ապահովում է զննության ենթարկվող անձանց և առհասարակ անձնական մաքսային զննության իրականացման օրինականությունը, այսուհանդերձ, նաև ստեղծում է իրական վտանգ նշված անձանց համար: Առավելևս, երբ քննարկվող դեպքերում մաքսային հսկողության

իրականացման հրատապությամբ պայմանավորված, անհրաժեշտ է օպերատիվ լուծում: Իհարկե, ասվածը չի նշանակում, որ նշված դեպքերում անձնական զննումը պետք է իրականացվի առանց որևէ ամրագրման: Կարծում ենք, այս պարագայում լիարժեքորեն արդյունավետ կարող է լինել տեսաձայնագրման առկայությամբ մաքսային հսկողության նշված ձևի կիրառումը: Նման լուծման դեպքում կապահովվի նաև մաքսային հսկողության ձևի արդյունավետ և անվտանգ կիրառումը՝ առավել առարկայացնելով Միության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ մաքսային հսկողության իրականացման ժամանակ չի թույլատրվում ոչ իրավաչափ վնաս հասցնել փոխադրողին, այդ թվում՝ մաքսային փոխադրողին, հայտարարատուին, նրանց ներկայացուցիչներին, ժամանակավոր պահպանման պահեստներ, մաքսային պահեստներ, անմաքս առևտրի խանութներ տիրապետողներին և այլ շահագրգիռ անձանց, որոնց շահերի հետ են առնչվում մաքսային հսկողության իրականացման ժամանակ մաքսային մարմինների գործողությունները (անգործությունը) և որոշումները, ինչպես նաև ապրանքներին և տրանսպորտային միջոցներին: Ուստի, գտնում ենք, որ ընթերակաների ներկայությամբ և տեսաձայնագրմամբ անձնական մաքսային զննություն իրականացնելու դեպքերը պետք է համարժեքորեն հավասարակշռել:

Միության օրենսգրքի՝ մաքսային հսկողությանը վերաբերող այլ նորմերի, մասնավորապես, 133-րդ հոդվածի 4-րդ մասի, 119-րդ հոդվածի 6-րդ մասի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ օրենսդրորեն անձանց իրավունքների խախտման լուրջ ռիսկեր ենթադրող իրավիճակներում օրենսդրական հրամայական է դառնում նաև դատախազին ծանուցելու մաքսային մարմնի պարտավորությունը: Նշված կարգավորումը խնդրո առարկա ասպարեզում օրինականության ապահովման լրացուցիչ իրավական երաշխիք է, որը կոչված է էլ ավելի բարձրացնելու առանձին հսկողական ձևերի ընթացքում ընթացքում կատարվող գործողությունների կատարման պատասխանատվությունը: Այս առումով գտնում ենք, որ նույն կարգավորումը Միության օրենսգրքով պետք է նախատեսվեր այն դեպքերի համար, երբ անձնական մաքսային զննումն ուղեկցվում է անձի մարմնի հետազոտմամբ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև անձնական մաքսային զննության օբյեկտների հարցը: Օրենսդրական ձևակերպումից ուղղակիորեն բխում է, որ անձնական մաքսային զննության օբյեկտ է համարվում բացառապես ապրանքը: Մինչդեռ, մեր համոզմամբ, անհրաժեշտ է ընդլայնել անձնական մաքսային զննության օբյեկտների շրջանակը: Այսպես, խնդիրն այն է, որ մաքսային սահմանով ֆիզիկական անձանց հակահրավական գործունեությունը կարող է դրսևորվել նաև փաստաթղթերի ապօրինի տեղափոխման ձևով: Մինչդեռ, Միության մաքսային օրենսդրությամբ փաստաթղթերը ներառված չեն «ապրանք» եզրույթի հասկացության բովանդակության մեջ: Թեպետ Օրենքով «ապրանք» են համարվում Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այսուհանդերձ, կարծում ենք, օրենսգրքով նպատակահարմար կլիներ ուղղակիորեն մատնանշել փաստաթուղթը՝ որպես անձնական մաքսային զննության առարկա: Առավելևս, ասվածը հիմնավորվում է նրանով, որ Միության օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով տարբերակված մոտեցում է դրսևորվել մաքսային հսկողության օբյեկտների սահմանման հարցում՝ առանձին մատնանշելով նաև ապրանքը, տրանսպորտային միջոցը, ինչպես նաև փաստաթուղթը: Հետևապես, գտնում ենք, որ անհրաժեշտ է անձնական մաքսային զննության իրականացումը թույլատրելի համարել նաև օրենքով արգելված փաստաթղթերի ապօրինի տեղափոխման պարագայում:

Հարկ է նկատել նաև, որ Միության օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետն ընդհանուր առմամբ իրավունք է վերապահում անձնական զննության ենթարկվող ֆիզիկական անձին բողոքարկելու մաքսային մարմնի՝ անձնական զննումն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները օրենքին համապատասխան: Բանն այն է, որ օրենսդրորեն որևէ կերպ կարգավորված չէ նշված բողոքարկման ընթացակարգը և դրա շրջանակներում կայացվող որոշումների տեսակները: Հիշյալ ընթացակարգի իրավական կարգավորումն առավել քան անհրաժեշտ է՝ պայմանավորված անձնական զննության իրականացման հրատապ բնույթով և օպերատիվ որոշումների կայացման անհրաժեշտությամբ: Հետևապես, կարծում ենք, նպատակահարմար կլիներ ուղղակիորեն ամրագրել բողոքարկման

կարգը և դրա շրջանակներում կոնկրետ որոշումների տեսակներն ու կայացման ժամկետները:

Այսպիսով, գտնում ենք, որ պետք է օրենսդրորեն կատարելագործել անձնական զննության կառուցակարգի կիրառումը՝ համապատասխանեցնելով այն նշված ինստիտուտի իրավակարգավորման սահմանադրաիրավական հիմունքներին: Ասվածը հիմնավորվում է հատկապես նշված հսկողական միջոցառման առանձնահատուկ բնույթով և իրականացման բարդությամբ, ինչը, բնականաբար, պահանջում է առավել հստակ և որոշակի իրավակարգավորում:

§3. Մաքսային տեսազննման և զննման իրավակարգավորման հիմնախնդիրները Մաքսային Միության մաքսային օրենսգրքի համատեքստում

Մաքսային հսկողության իրականացումը ընտրողականության մեթոդի կիրառմամբ մաքսային մարմիններին ընձեռում է հայեցողական իրավասություն՝ մաքսային օրենսդրությամբ արժևորվող նպատակին հասնելու համար կիրառել էությամբ համապատասխան գործիքակազմեր: Համարժեքության պահանջի խախտման դեպքում ուղղակիորեն կխաթարվի նպատակի և դրա կենսագործմանը միտված միջոցի միջև անհրաժեշտ ողջամիտ համամասնությունը: Հենց նշված գաղափարական ելակետով է պայմանավորված Մաքսային Միության մաքսային օրենսդրությամբ մաքսային զննման և մաքսային տեսազննման (ներառյալ՝ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման) առանձին իրավակարգավորումը:

Սույն պարագրաֆի շրջանակներում «Մաքսային տեսազննում» և «Մաքսային զննում» հսկողության ձևերի միաժամանակյա վերլուծությունը պայմանավորված է, առաջին հերթին, դրանց միջև առկա մի շարք օբյեկտիվ ընդհանրություններով: Մասնավորապես, հիշյալ ձևերի պարագայում նույնական է իրականացման նպատակը՝ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ապահովումը: Ավելին, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, ընդհանրություն է նաև օբյեկտը՝ ապրանքներն ու

տրանսպորտային միջոցները, մաքսային մարմնի կողմից իրականացվող գործողությունների վարչաիրավական բնույթը:⁹⁷ Հսկողության նշված երկու ձևերի միջև փոխկապակցվածությունը դրսևորվում է նաև նրանում, որ ապրանքի արտաքին տեսողական դիտարկումը հաճախ կարող է բավարար չլինել դրա այս կամ այն հատկանիշի առկայությունը ստուգելու համար և այս պարագայում մաքսային մարմինը կարող է ձեռնամուխ լինել մաքսային զննության իրականացմանը, որին Միության օրենսգրքով ներկայացվում են մի շարք օրենսդրական պահանջներ: Հարկ է նկատել, որ մաքսային տեսազննումը, որպես կանոն, նախորդում է հենց մաքսային զննմանը: Հաշվի առնելով դրանց հաջորդական ժամանակային կապը, թերևս, առաջին հերթին քննության առարկա դարձնենք Միության օրենսգրքի՝ մաքսային տեսազննմանը վերաբերող իրավադրույթները:

Առհասարակ, իրավաբանական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են արտահայտվել մաքսային տեսազննման էության և դրա խնդիրների շուրջ: Այսպես, Ն.Ա.Պոգոդինան որպես շինությունների և տարածքների մաքսային տեսազննման նպատակ՝ առանձնացնում է

- մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների առկայության ստուգումը.

- ներմուծվող ապրանքների մեծածախ ու մանրածախ առևտրի գործունեություն իրականացնող անձանց մոտ Մաքսային օրենսգրքով սահմանված կարգի խախտմամբ մաքսային տարածք ներմուծված ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտնաբերումը:⁹⁸

Մաքսային տեսազննումը մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, իսկ բացառիկ դեպքերում նաև ֆիզիկական անձի ուղղակի կամ անուղղակի տեսողական հետազոտությունն է: Ապրանքների մաքսային տեսազննման ներքո ընդունված է հասկանալ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից տրանսպորտային միջոցների կամ դրանց մեջ գտնվող ապրանքների ներքին տեսքը ստուգող վարչաիրավական գործողությունները առանց բացելու

⁹⁷ Ст'я Козырина А.Н. Комментарий к таможенному кодексу Российской Федерации- М.: Изд-во Проспект, 2004, էջ 859:

⁹⁸ Ст'я Погодина Н. А. Таможенный досмотр товаров и транспортных средств как форма таможенного контроля. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2010, էջ 88:

բեռնային զետեղարանները, տարաները կամ ապրանքի փաթեթվածքները:⁹⁹ Ակներև է, որ հիշյալ ձևակերպումների միջև առկա է մեկ ընդհանուր բնորոշիչ. տեսազննման ճանապարհով ապրանքի մաքսային-իրավական կարգավիճակը ճշգրտվում է դրա տեսողական ընկալման ճանապարհով՝ ի տարբերություն մաքսային հսկողության մնացյալ ձևերի: Հենց սա է այն բնորոշիչը, որով այն առանձնանում է Միության օրենսգրքով սահմանված մաքսային հսկողության ձևերի համակարգում:

Այսպես, Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մաքսային տեսազննումը ապրանքների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների, ֆիզիկական անձանց ուղեբեռի, ինչպես նաև բեռնային տարողությունների, մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների արտաքին տեսողական զննումն է առանց տրանսպորտային միջոցները, ապրանքների փաթեթվածքը բացելու, առանց ստուգվող օբյեկտի և դրա այլ մասերի ապամոնտաժման և այլ կերպ ամբողջականության խախտման:*

Վկայակոչված իրավադրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ մաքսային տեսազննման պարագայում գնահատման առարկա է դառնում բացառապես մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքին ներկայացվող պահանջների, ինչպես նաև դրանց նկատմամբ կիրառված մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների պահպանումը: Այլ կերպ ասած՝ մաքսային մարմնի խնդիրն է այս պարագայում պարզել ապրանքի քանակական ու որակական հատկանիշները, ինչպես նաև ստուգել մաքսային հսկողության իրականացմամբ պայմանավորված՝ ապրանքի նկատմամբ կիրառված նույնականացման միջոցների պահպանվածության հարցը:

Հիշյալ իրավակարգավորման վերլուծությամբ կարելի է փաստել, որ մաքսային հսկողության ձևերի համակարգում մաքսային տեսազննմանը վերապահված է էական դեր: Այն հանդես է գալիս որպես ինքնուրույն կառուցակարգ, որի ուժով մաքսային մարմնին իրավական հնարավորություն է ընձեռնվում սուկ ապրանքի արտաքին տեսողական դիտարկմամբ պարզել՝ անձի կողմից պահպանվել են արդյոք Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջները:

⁹⁹ Ст' у Круглов А.С. Основы таможенного дела: учеб. пособие. Вып. II. Организация и технология таможенного контроля, М., 1995, էջ 8:

ինչպես արդեն նշվեց, «Մաքսային տեսազննում» հսկողական ձևի հետ օրգանական փոխկապակցվածության մեջ է գտնվում մաքսային զննումը՝ հանդես գալով որպես հրնթացս իրականացվող մաքսային հսկողության անկյունաքարը, որի դերը մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ապահովման գործում բավական ծանրակշիռ է:

Անդրադառնալով մաքսային հսկողության այս ձևի էությանը՝ Ի.Վ. Տիմոշենկոն այն բնութագրում է որպես մաքսային մարմնի աշխատակցի կողմից իրականացվող ապրանքների, տրանսպորտային միջոցների, միջազգային փոստային առաքանու, ֆիզիկական անձանց ուղեբեռի փաստական ստուգում մաքսային սահմանով դրանց տեղափոխման օրինականության ապահովման, մաքսային հայտարարագրում և մաքսային մարմին ներկայացված այլ փաստաթղթերում նշված տվյալների համապատասխանության ապահովման, մաքսային սահմանով տեղափոխվող թաքցված ապրանքների հայտնաբերման, ինչպես նաև մաքսային օրենսդրության խախտումների կանխման նպատակով:¹⁰⁰

Մեկ այլ բնորոշման համաձայն՝ մաքսային զննումը հարկադրաբար իրականացվող որոնողական-ստուգողական պետաիշխանական բնույթի գործողություն է, որը լիազորված անձանց կողմից իրականացվում է օրենսդրությամբ սահմանված որոշակի օբյեկտների կապակցությամբ առանց խախտելու դրանց կառուցվածքային ամբողջականությունը զենքի կամ վարչական իրավախախտման առարկաների հայտնաբերման, ինչպես նաև վարչական և քրեական իրավանորմների խախտման կանխարգելման նպատակով:¹⁰¹

Այսպես, Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մաքսային զննումը մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործողություններն են, որոնք կապված են ապրանքների փաթեթվածքի կամ տրանսպորտային միջոցի բեռնային զեպեղարանի կամ տարողությունների, կոնտեյներների և այլ վայրերի բացման հետ, որտեղ գտնվում են կամ կարող են գտնվել ապրանքները՝ դրանց վրա դրված մաքսային կապարակնիքների կամ նույնականացման այլ միջոցների խախտմամբ,*

¹⁰⁰ Տե՛ս Թիմոշենկո Ի.Վ. Таможенное регулирование внешнеэкономической деятельности. Учебно-практические пособие, Бератор-Пресс, М., 2003, էջ 194:

¹⁰¹ Տե՛ս Мягков А.В. Досмотр как мера административного принуждения, применяемая милицией. Дисс. ... канд. юрид. наук. Омск, 2004 էջ 9:

ստուգվող օբյեկտների և դրանց այլ մասերի կազմադրմամբ, ապամոնտաժմամբ կամ այլ կերպ ամբողջականության խախտմամբ:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն մաքսային տեսազննման, մաքսային զննման պարագայում մաքսային մարմնի գործողություններով ուղղակիորեն խախտվում է զննման ենթակա ապրանքների ամբողջականությունը: Այլ կերպ ասած՝ այս պարագայում մաքսային մարմինը չի բավարարվում սոսկ ապրանքների տեսողական արտաքին դիտարկմամբ և ապրանքին ներկայացվող քանակական և որակական բնութագրիչների առկայությունը գնահատման առարկա է դարձնում դրանց ամբողջականության խախտման միջոցով: Այլ կերպ ասած՝ մաքսային զննման պարագայում ստուգվում են ապրանքները, որոնց կապակցությամբ մաքսային մարմնի պաշտոնատար անձի մոտ առկա է հիմնավոր կասկած մաքսային կապարակնիքների կամ նույնականացման այլ միջոցների խախտման կամ դրանց ամբողջականության խաթարման վերաբերյալ: Պետք է նկատել, որ ի տարբերություն մաքսային հսկողության մյուս ձևերի, մաքսային զննման իրականացման մեթոդիկան որոշակիորեն կարգավորված է «Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան» սահմանելու մասին ՀՀ Կառավարության 24.03.2001թ. թիվ 236 որոշման շրջանակներում, որն այսուհանդերձ, ընդունվել է 2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքի գործողության պայմաններում և ակնհայտորեն ենթակա է փոփոխության:

Հարկ է նկատել, որ ի տարբերություն գործող մաքսային օրենսդրության, 1993թ. ՀՀ մաքսային օրենսգիրքն ուղղակիորեն ամրագրում էր մաքսային զննության իրականացման նպատակը: Մասնավորապես, դրա 32-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և այլ առարկաների տեղափոխման օրինականության ստուգման, հաշվառման, մաքսատուրքերով ու մաքսավճարներով հարկման նպատակով մաքսատունը կամ մաքսային կետն իրավունք ունեն կատարելու փոխադրամիջոցների, ապրանքների և այլ առարկաների զննում: Ինչպես և մաքսային հսկողության մնացած ձևերի պարագայում, այնպես էլ այս ձևի դեպքում, գտնում ենք, նպատակահարմար կլիներ, որ օրենսդրորեն սահմանվեր նաև դրա նպատակը, ինչն արդեն իսկ արվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծով: Հիշյալ

նախագծով կարգավորվել են ինչպես մաքսային զննության նպատակը, այնպես էլ դրա անցկացման փաստական հիմքերը, ինչը, բնականաբար, հնարավորինս բացառում է խնդրո առարկա ոլորտում անհարկի վարչական հայեցողությունը:

Ասվածը հիմնավորվում է, նախևառաջ, այն հանգամանքի հաշվառմամբ, որ օրինակ, մաքսային տեսազննման պարագայում նպատակն ուղղակիորեն ամրագրված է նաև օրենսդրորեն: Մասնավորապես, Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն ամրագրում է, որ *մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ապրանքների, այդ թվում՝ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների, միջազգային փոստային առաքանիների և ֆիզիկական անձանց ուղեբեռի մաքսային տեսազննումն իրականացվում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների բնույթի, ծագման, վիճակի և քանակի վերաբերյալ տեղեկությունների, ապրանքների, տրանսպորտային միջոցների և դրանց բեռնային զեպտեղարանների վրա մաքսային կապարակների, կնիքների և նույնականացման այլ կիրառված միջոցների առկայության վերաբերյալ տեղեկությունների հաստատումը ստանալու նպատակով:*

Ընդ որում, ուշագրավ է, որ մաքսային զննման իրականացմանը որոշակի ուղենիշային պահանջներ են առաջադրվում նաև Կոնվենցիայի շրջանակներում: Մասնավորապես, դրա 3-րդ գլխի **3.33. ստանդարտի համաձայն՝** երբ մաքսային ծառայությունը որոշում է ընդունում, որ հայտարարագրում նշված ապրանքները ենթակա են զննման, ապա այդպիսի զննումը իրականացվում է ապրանքների հայտարարագիրը գրանցելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում: Հիշյալ հսկողական կառուցակարգի պատշաճ իրավակարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև դրա կիրառման բարձր աստիճանով: Մասնավորապես, միայն 2016թ. առաջին եռամսյակի տվյալներով քննարկվող հսկողական ձևը կիրառվել է շուրջ 6200 անգամ, ինչը կազմում է ընդհանուր տեսակարար կշռի 24.4 տոկոսը:¹⁰²

Ակներև է, որ քննարկվող հսկողական կառուցակարգի դեպքում ստուգման առարկա են ապրանքները՝ իրենց քանակական և որակական հատկանիշների ողջ համալիրով, ներառյալ՝ կիրառված նույնականացման միջոցների առկայության փաստի

¹⁰² Տե՛ս ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայք: www.customs.am

գնահատումը: Այլ կերպ ասած՝ մեր համոզմամբ, թե՛ մաքսային զննության, թե՛ մաքսային տեսազննման պարագայում գնահատման առարկա են դառնում սկզբունքորեն նույն հանգամանքները, ապրանքը՝ իրեն ներկայացվող հատկանիշների համալիրով, ինչպես նաև դրա պահպանվածությանը ներկայացվող այլ պահանջները (կապարակնքում, նույնականացման միջոց և այլն): Մինչդեռ, գտնում ենք, որ ստուգման նպատակի մասով մաքսային հսկողության նշված երկու ձևերի միջև օրենսդրորեն չպետք է լիներ որևէ տարբերակում: Բանն այն է, որ Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է մաքսային զննության իրականացումը բացառապես այն պարագայում, երբ առկա է ստուգման ենթակա ապրանքների նկատմամբ կիրառված նույնականացման միջոցների կամ դրանց ամբողջականության խախտում: Դրան հակառակ, մաքսային տեսազննման պարագայում կարևորվում է նաև ապրանքների բնույթի, ծագման, վիճակի և քանակի վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերման նպատակը: Փաստորեն, ստացվում է այնպես, որ այս առումով մաքսային տեսազննման և զննման միջև օրենսդրորեն դրվել է անհարկի տարբերություն, որը որևէ հիմնավորմամբ առարկայացված չէ: Մեր համոզմամբ, մաքսային զննման և տեսազննման տարանջատման հիմքում պետք է դրվեր ոչ թե հետազոտության օբյեկտների տարբերությունը, այլ սուսկ հետազոտության իրականացման մեթոդը: Եթե տեսազննման դեպքում դա սուսկ ապրանքի արտաքին տեսողական դիտարկումն է, ապա զննման պարագայում ապրանքի հետազոտությունն է, որն ուղեկցվում է դրա փաթեթվածքների կամ տրանսպորտային միջոցի բեռնային զետեղարանի կամ տարողությունների, կոնտեյնների և այլ վայրերի բացմամբ: Ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել համակողմանի սահմանել մաքսային զննման նպատակները՝ դրանում ուղղակիորեն ներառելով նաև այն դեպքերը, երբ զննումն իրականացվում է ապրանքի քանակական և որակական հատկանիշների, դրա բնույթի, ծագման և այլ հատկանիշների որոշման նպատակով:

Մաքսային տեսազննումից զատ, օրենսդիրը մաքսային հսկողության ձևերի համակարգում է դիտարկում նաև շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը՝ դրա իրականացման մասով սահմանելով առանձին իրավակարգավորում: Մասնավորապես, Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին

մասն ամրագրում է, որ *շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն իրականացվում է ստուգելու համար մաքսային հսկողության տակ գտնվող, այդ թվում՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առկայությունը ժամանակավոր պահպանման պահեստներում, մաքսային պահեստներում, անմաքս առևտրի խանութի շինություններում և այլ վայրերում, որտեղ կարող են լինել մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներ, ինչպես նաև այն անձանց մոտ, որոնց մոտ պետք է գտնվեն ապրանքներ՝ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերին համապատասխան: Համանման ձևակերպում է առկա նաև ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի նախագծի 330-րդ հոդվածում:*

Վերը հիշատակված օրենսդրական բնորոշումից բխում է, որ անկախ տարբերակված ձևով դրանց օրենսդրական ամրագրումից, «Մաքսային տեսազննում» և «Շինությունների ու տարածքների մաքսային տեսազննում» հսկողական ձևերի միջև առկա են մի շարք ընդհանրություններ: Դրանք օրգանական փոխկապակցվածության մեջ են գտնվում այն իմաստով, որ դրանց էությանը բնորոշ մի շարք հատկանիշներ ուղղակիորեն համընկնում են: Մասնավորապես, հիշյալ ընդհանրությունները հանգում են հետևյալին.

- *Մաքսային օրենսդրության դրույթի պահպանվածության փաստի ստուգումը բացառապես տեսողական դիտարկման ճանապարհով.*

- *Հսկողության արդյունքների գրավոր արձանագրում.*

- *Հայտարարատուների, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց և նրանց ներկայացուցիչների մասնակցության հնարավորություն.*

- *Մաքսային հսկողության օբյեկտների մասնակի համընկնումը:*

Հարկ է նկատել նաև, որ մաքսային հսկողության ձևերի համակարգում նշված երկու հսկողական կառուցակարգերը տարբերակված ձևով ամրագրվել են նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծում, ինչը հիմքեր է տալիս ենթադրելու, որ այս հարցում միութենական մակարդակով փոփոխություններ դեռևս չեն սպասվում:

Ինչպես տեսնում ենք, մաքսային հսկողության ձևերի համակարգում մաքսային տեսազննումն ու շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն ամրագրվել

են առանձին և տարբերակված: Ի տարբերություն մաքսային տեսազննման, շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում մաքսային մարմնի կողմից գնահատման առարկա է դառնում հիմնականում մաքսային հսկողության համապատասխան տարածքներում ապրանքների առկայության փաստը, ինչպես նաև օրենքով սահմանված պահանջներին ու պայմաններին շինությունների և տարածքների համապատասխանության հետ կապված հարցերը (*Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մաս*): Այլ կերպ ասած՝ նշված երկու հսկողական կառուցակարգերն իրարից տարբերվում են հսկողության օբյեկտների մասով: Եթե մաքսային տեսազննումը միտված է առհասարակ ապրանքի մասին տեղեկատվության ստացմանն ու դրա վրա նույնականացման միջոցի առկայության փաստի հավաստմանը, ապա շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում, առաջին հերթին, կարևորվում է հսկողության ենթակա տարածքում ապրանքների առկայության հանգամանքը:

Մեր համոզմամբ, սակայն, հսկողության օբյեկտում մասնակի տարբերության առկայությունն ինքնին դեռևս բավարար հիմք չէ շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը մաքսային հսկողության ձևերի համակարգում մաքսային տեսազննումից առանձնացնելու համար: Բանն այն է, որ գործող իրավակարգավորման շրջանակներում մաքսային տեսազննման իրավական իմաստն ու բովանդակությունն ամբողջապես ներառում է շինությունների և տարածքների մաքսային տեսազննմամբ հետապնդվող խնդիրները:

Ասվածը հիմնավորվում է հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *մաքսային հսկողության գոտում մաքսային տեսազննումը կարող է իրականացվել հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց և նրանց ներկայացուցիչների բացակայության պայմաններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք ցանկություն են հայտնում ներկա գտնվել մաքսային տեսազննման ժամանակ*: Ինքնին հասկանալի է, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման էությունը կարգավորող Միության օրենսգրքի 119-րդ հոդվածում մատնանշված տարածքների բոլոր տեսակները (*անմաքս առևտրի*

խանութի շինություններ, ժամանակավոր պահպանման պահեստներ և այլն), ըստ էության, մաքսային հսկողության գոտիներ են, որոնցում իրականացվող տեսազննումը կարգավորվում է «մաքսային տեսազննում» հսկողական ընդհանուր ձևի կիրառման շրջանակներում: Ստացվում է, մաքսային տեսազննումն իրականացվում է նաև մաքսային հսկողության գոտում, որը մասնակի ներառվում է շինությունների և տարածքների մաքսային տեսազննման հսկողական կառուցակարգի օբյեկտում: Հետևապես, գտնում ենք, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը կարող էր կարգավորվել մաքսային տեսազննման շրջանակներում, ինչը կապահովեր բովանդակությամբ գրեթե նույնական հսկողության ձևերի միասնական իրավակարգավորումը: Հակառակ դեպքում, ստացվում է, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը, ըստ էության, հանդես գալով որպես մաքսային տեսազննման տարատեսակ, որևէ կերպ չի կարգավորվում վերջինիս իրականացումը մանրամասնող ընդհանուր իրավադրույթներով: Առավելևս, երբ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում, առաջին հերթին, ստուգվում է ապրանքի առկայությունը մաքսային հսկողության գոտի հանդիսացող տարածքում: Այլ կերպ ասած՝ չնայած իր անվանմանը, մաքսային հսկողության այս ձևի պարագայում առաջնային հետազոտման առարկան ապրանքների առկայությունն է նշված տարածքներում և այս առումով մաքսային հսկողության նշված երկու ձևերը ընդհանուր առմամբ նույնանում են:

Այս առումով պատահական չէ, որ օրինակ, «Մաքսային կարգավորման մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքի 257-րդ հոդվածի *(ապրանքների և տրանսպորտային միջոցների տեսազննումը)* 5-6-րդ մասերով շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն ուղղակիորեն կարգավորման է ենթարկվում հենց ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային տեսազննման հսկողական ձևի շրջանակներում:¹⁰³

Ընդ որում, անհրաժեշտ է արձանագրել, որ հիշյալ հարաբերությունների միասնական իրավակարգավորումն ակնհայտորեն ունի նաև լուրջ գործնական նշանակություն: Բանն այն է, որ տարբերակված օրենսդրական կանոնակարգումների

¹⁰³ «Մաքսային կարգավորման մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 31.12.2014թ. ուժի մեջ է մտել 12.08.2015թ. www.base.spinform.ru

բացակայության պատճառով մաքսային տեսազննման և շինությունների և տարածքների մաքսային տեսազննման օրենսդրական կանոնակարգումները, մեր համոզմամբ, անհարկի տարբերվում են, ներառյալ դրանց ընթացքի օրինականությունն ապահովելուն միտված օրենսդրական երաշխիքների նախատեսման հարցում:

Այսպես, մաքսային հսկողության նշված երկու ձևերին վերաբերող իրավակարգավորումների համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ մաքսային տեսազննման պարագայում ստուգման ենթակա օբյեկտների շրջանակն անհամեմատ ավելի լայն է: Այս իմաստով ակներև է, որ դրա ընթացքում ծագող իրավահարաբերությունների բարդությամբ պայմանավորված՝ մաքսային տեսազննման իրականացումը պետք է առավել համակողմանի իրավակարգավորում ստանար: Մինչդեռ, օրենսդրական գործող կարգավորման շրջանակներում չեն նախատեսվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ մաքսային տեսազննմանը ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց մասնակցությունը, այդ ընթացքում դիտողությունների և առարկությունների ներկայացումը և այլն: Եվ սա այն պայմաններում, երբ Միության օրենսգիրքը շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում առավել ակնառու երաշխիքներ (*հրահանգչական ցուցումի առկայություն, ընթերականների ներկայություն և այլն*) է նախատեսում: Ակներև է, որ հսկողական հիշյալ ձևի կիրառման պարագայում անձանց իրավունքների խախտման հավանականությունը բավականաչափ մեծ է: Հետևապես, մեր համոզմամբ, նշված սկզբունքային հարցերը պետք է առանձին և համակողմանի կարգավորում ստանալին Միության օրենսգրքով:

Ընդ որում, ուշագրավ է, որ ի տարբերություն մաքսային տեսազննման, մաքսային զննման պարագայում Միության օրենսգիրքն առավել մանրամասն կարգավորում է դրա ընթացակարգը: Մասնավորապես, Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասն արձանագրում է, որ *մաքսային մարմնի՝ մաքսային զննում իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձը մաքսային զննման անցկացման վայրի և ժամանակի մասին տեղեկացնում է հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձին, եթե այդ անձինք հայտնի են: Մաքսային զննումը*

սկսելու ժամանակը որոշելիս պետք է հաշվի առնվեն այդ անձանց ժամանման ողջամիտ ժամկետները:

Հայտարարատուն, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձինք և նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն սեփական նախաձեռնությամբ ներկա գտնվելու մաքսային զննմանը՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքի:

Ըստ էության, մաքսային զննման պարագայում Միության օրենսգիրքն ուղղակիորեն ամրագրում է հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձին մաքսային զննման անցկացման ժամանակի և վայրի մասին մաքսային մարմնի տեղեկացնելու պարտականությունը: Նշված ընթացակարգի պարտադիրությունն ամրագրված է նաև Կոնվենցիայի 3.36. ստանդարտով, որի համաձայն՝ մաքսային ծառայությունը քննության է առնում հայտարարատուի դիմումը՝ ներկա գտնվելու կամ ներկայացված լինելու ապրանքների զննության ժամանակ: Այդ դիմումները բավարարվում են, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ: Միաժամանակ, նույն Կոնվենցիայի 3.37. ստանդարտի համաձայն՝ եթե մաքսային ծառայությունը նպատակահարմար է գտնում, ապա ապրանքների զննում իրականացնելու ժամանակ նա կարող է պահանջել հայտարարատուի կամ նրա ներկայացուցչի ներկայությունը ցանկացած օգնություն ցուցաբերելու նպատակով, որն անհրաժեշտ է զննումը դյուրացնելու համար:

Մինչդեռ, մաքսային տեսազննման պարագայում Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասն արձանագրում է, որ մաքսային հսկողության գոտում մաքսային տեսազննումը կարող է իրականացվել հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց և նրանց ներկայացուցիչների բացակայության պայմաններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք ցանկություն են հայտնում ներկա գտնվել մաքսային տեսազննման ժամանակ:

Հարց է ծագում՝ ինչպես պետք է հայտարարատուն կամ նրա կողմից լիազորված անձը մասնակցի մաքսային տեսազննմանը, երբ օրենսդրորեն որևէ կերպ սահմանված չէ դրա իրականացման մասին վերջիններիս նախնական ծանուցման ընթացակարգը: Այլ կերպ ասած՝ անձի մասնակցության ապահովման համար նախևառաջ, անհրաժեշտ

է, որ տվյալ անձը որևէ կերպ իրազեկ լինի նշված հսկողական միջոցառման մասին: Հակառակ դեպքում, վերջինս չի կարող արտահայտել իր ուղղակի և անմիջական կամքը: Բնականաբար, դրանով պայմանավորված՝ հիշյալ իրավակարգավորումը սկզբունքորեն չի կարող համարժեք կենսագործվել մաքսային իրավահարաբերություններում: Ուստիև, առաջարկում ենք մաքսային տեսազննման պարագայում նույնպես նախատեսել անձանց նախնական ծանուցման պարտադիր կարգ, որի առկայությամբ կարող է լիարժեքորեն ապահովվել նաև անձանց մասնակցության հնարավորությունը:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև շինություններ և տարածքներ մուտք գործելու ընթացակարգային հարցերը: Դրանց կարգավորումն ունի չափազանց կարևոր նշանակություն մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանության առումով: Այսպես, Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *շինություններ և տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման դեպքում մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն մուտք գործելու շինություններ և տարածքներ՝ 2 (երկու) ընթերակաների ներկայությամբ՝ ճնշելով դիմադրությունը և բացելով փակ շինությունները և տարածքները: Դիմադրությունը ճնշելու և փակ շինությունները բացելու միջոցով շինություններ մուտք գործելու բոլոր դեպքերի մասին մաքսային մարմինները ծանուցում են դատարանին 24 (քսանչորս) ժամվա ընթացքում: Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մուտքը շինություններ և տարածքներ խոչընդոտող անձինք պատասխանատվություն են կրում Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:*

Միաժամանակ, նույն հոդվածի 7-րդ մասն ամրագրում է, որ *եթե Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ պետական մարմինների պաշտոնատար անձանց կողմից առանձին օբյեկտներ մուտքի համար նախատեսված է հատուկ կարգ, ապա մուտքի հնարավորությունն ապահովվում է այդ օրենսդրությամբ սահմանված կարգով:*

Վերը հիշատակված իրավադրույթների միջև առաջանում է որոշակի հակասություն այն իմաստով, որ հստակ չէ փակ շինությունները բացելու և

դիմադրությունը ճնշելու կառուցակարգն ի՞նչ հարաբերակցության մեջ է գտնվում առանձին օբյեկտներ մուտքի համար նախատեսված հատուկ կարգի հետ: Ասվածը հիմնավորվում է հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մուտքը շինություններ և տարածքներ խոչընդոտող անձինք պատասխանատվություն են կրում Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Մեր համոզմամբ, նշված նորմից պետք է արվեր բացառություն այն դեպքերի համար, երբ պաշտոնատար անձանց կողմից մաքսային մարմնի աշխատակիցներին շինություններ մուտք գործելու հնարավորությունը խոչընդոտելը պայմանավորված է առանձին օբյեկտներ մուտքի համար նախատեսված հատուկ կարգի պահպանմամբ: Հակառակ դեպքում կստացվի, որ բոլոր դեպքերում մաքսային մարմնի պաշտոնատար անձանց մուտքը խոչընդոտելը պետք է առաջացնի պատասխանատվություն, ինչը գտնում ենք, անընդունելի է:*

Բացի այդ, դիմադրությունը ճնշելու նշված ընթացակարգն իրականացնելիս ակնհայտ է, որ էական նշանակություն ունի դրա օրինականության ապահովման նկատմամբ հսկողության իրականացումը: Ըստ էության, որպես դրա երաշխավորման գործիք՝ Միության օրենսգրքով նախատեսվել է այդպիսի յուրաքանչյուր դեպքի մասին դատախազին ծանուցելու պարտականությունը: Մինչդեռ, նշված ծանուցման իրականացման կարգը և ժամկետները Միության օրենսգրքով կանոնակարգված չեն, ինչը, ըստ էության, էապես նվազեցնում է նշված իրավական գործիքի արդյունավետությունը: Ակներև է, որ անարդյունավետ է այն գործիքի կիրառումը, որի գործնական նշանակությունը որևէ կերպ չի առարկայացվում:

Առավելևս, երբ մաքսային հսկողության իրականացման օրինականության նկատմամբ հսկողությունը դուրս է դատախազության սահմանադրաիրավական լիազորությունների շրջանակից: Այլ կերպ ասած՝ այսպես, թե այնպես, նշված ծանուցումը որևէ գործնական խնդիր լուծել չի կարող հատկապես այն պայմաններում, երբ դատախազին տրամադրվում են ոչ թե տեսազննման մասին ակտը, այլ պարզապես ծանուցվում է դեպքի մասին: Իրավակարգավորման նման պայմաններում, մեր համոզմամբ, առկա է լուծման իրավական երկու ելակետ: Կամ, անհրաժեշտ է

առավել մանրամասն կարգավորել շինություններ և տարածքներ մուտք գործելու բոլոր դեպքերի մասին դատախազին ծանուցելու և դրա արդյունքում համապատասխան որոշումների կայացման ընթացակարգերը, կամ էլ, պարզապես, ճիշտ կլիներ առհասարակ հրաժարվել այս գործիքից: Այսպես թե այնպես, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ ուղղակիորեն երաշխավորված է մաքսային ծառայողների բոլոր գործողությունների ազատ բողոքարկման հնարավորությունը թե՛ վարչական, թե՛ դատական կարգով:¹⁰⁴ Մասնավորապես, հիշյալ իրավադրույթի համաձայն՝ *մաքսային մարմնի կամ մաքսային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են գանգադարկվել վերադաս մաքսային մարմնի գանգադարկման հանձնաժողովին կամ բողոքարկվել դատարան:* Ուստի, այս պարագայում դատախազին ծանուցելու իրավադրույթի գաղափարը խիստ վիճելի է ու բովանդակային առումով խոցելի:

Ավելորդ չէ հիշատակել նաև այն իրողությունը, որ Միության օրենսգրքով կարգավորված չէ շինությունները և տարածքները փակ լինելու դեպքում մաքսային մարմնի գործողությունների ընթացակարգը: Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորման առարկայի շրջանակում ներառվում են բացառապես շինություններ և տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման կապակցությամբ մաքսային մարմնի կողմից հարկադրաբար նշված տարածքներ մուտք գործելու ընթացակարգային հարցերը: Գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ նման դեպքերը կարգավորել նշված հոդվածի առանձին մասով՝ նախատեսելով այս դեպքում նույնպես ընթերականների ներկայությամբ նշված տարածքներ մուտք գործելու ընթացակարգ:

Ընդ որում, հատկանշական է, որ Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը հայտարարատուի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձանց, նրանց ներկայացուցիչների բացակայության պայմաններում նախատեսում է մաքսային զննության իրականացման հնարավորություն այն պարագայում, երբ առկա են հետաձգում չհանդուրժող հանգամանքներ: Միաժամանակ, այս դեպքերի համար նույնպես, որպես ընդհանուր կանոն՝

¹⁰⁴ Ընդունվել է 03.07.2002թ., ուժի մեջ է մտել 30.07.2002թ., ՀՀՊՏ 2002.08/32 (207):

ամրագրված է ընթերակաների պարտադիր ներկայությունը: Հետևապես, հետաձգում չհանդուրժող դեպքերում մաքսային մարմնի ջանքերը ժամանակի հաշվին ընթերականեր ներգրավելու, մեր համոզմամբ, անհարկի ծանրաբեռնում է մաքսային վարչարարությանը: Հենց այդ պատճառով առաջարկում ենք նախանշել դրույթ, որի համաձայն՝ Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում ընթերակաների ներկայությունը չլինի պարտադիր օրենսդրական պահանջ: Փոխարենը, որպես նշված դեպքերում մաքսային հսկողության իրականացման օրինականության ապահովման գործիք՝ նպատակահարմար կլիներ ամրագրել տեսաձայնագրմամբ դրա արդյունքների իրավական ամրագրումը:

Որպես մաքսային հսկողության ձև՝ արդյունավետորեն կենսագործվելու համար էական նշանակություն ունի նաև հսկողության արդյունքների պատշաճ արձանագրումը: Այսպես, Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *մաքսային տեսազննման արդյունքներով մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից կազմվում է ակտ՝ Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ սահմանված ձևով, եթե այդ տեսազննման արդյունքներն օգտագործվելու են մաքսային նպատակներով:*

Հիշյալ իրավակարգավորումից, ըստ էության, բխում է, որ մաքսային տեսազննման ակտի կայացումը Միության օրենսգիրքը կապում է բացառապես մաքսային նպատակների հետ՝ որևէ կերպ չբացահայտելով դրա հասկացության թվանդակությունը: Այսպես թե այնպես, մաքսային տեսազննումն իրականացվում է՝ հիմքում դնելով մաքսային օրենսդրությամբ արժևորվող որոշակի նպատակներ: Ստացվում է, որ անգամ տեսազննման արդյունքում խախտման հայտնաբերման դեպքում նման ձևակերպումը հնարավորություն չի տալիս միարժեքորեն որոշել՝ արդյոք պետք է կազմվի տեսազննման ակտ, թե ոչ: Քննարկվող իրավակարգավորումը խնդրահարույց է նաև այն իմաստով, որ վերջին հաշվով, հսկողական յուրաքանչյուր ձև պետք է, անկախ դրա արդյունքից, ենթադրի դրա սկիզբը, ընթացքն ու ավարտը արձանագրող կոնկրետ փաստաթղթի առկայություն: Ուստիև, նույնիսկ այն դեպքերում, երբ տեսազննման արդյունքում չի հայտնաբերվում որևէ խախտում,

գտնում ենք, որ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց շահերից է բխում բոլոր դեպքերում տեսազննման արդյունքների արձանագրման պարտադիր պահանջը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում Միության օրենսգիրքը նույն մոտեցումը չի որդեգրել՝ նախատեսելով տեսազննման արդյունքների իմպերատիվ ամրագրման պահանջ: Մասնավորապես, Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *շինությունների և տարածքների մաքսային տեսազննման արդյունքներով կազմվում է ակտ՝ Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ սահմանված ձևով:*

Եթե անգամ մի պահ որպես ելակետ ընդունենք այն իրողությունը, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման կապակցությամբ դրսևորված մոտեցումը պայմանավորված է դրա իրականացման բարդությամբ և ընթացքում անձանց իրավունքների խախտման առավել մեծ հավանականությամբ, ապա պետք է նկատել, որ մաքսային տեսազննման պարագայում օրենսդրորեն տրված է հնարավորություն այն իրականացնելու հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց և նրանց ներկայացուցիչների բացակայության պայմաններում: Բնականաբար, իրավակարգավորման նման պայմաններում խախտումների առկայության հավանականությունն էապես աճում է: Ակներև է, որ այս պարագայում տեսազննման արդյունքների ձևակերպումն առավել հրատապ բնույթ է կրում: Հետևապես, բոլոր դեպքերում տեսազննման ակտի կայացումն առավել ընդունելի լուծում է:

Ուշագրավ է նաև Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասով նախանշված պահանջն առ այն, որ բնակելի շինություններում մաքսային տեսազննման իրականացում չի թույլատրվում: Պետք է նկատել, սակայն, որ «Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 24.03.2001թ. թիվ 236 որոշման 46-րդ կետն ընդհանուր առմամբ մաքսային մարմիններին ընձեռում է իրավասություն մաքսային հսկողության իրականացման նպատակով մուտք գործելու ֆիզիկական անձանց բնակարաններ: Մասնավորապես, հիշյալ կետի համաձայն՝ *մաքսային մարմինների պաշտոնատար անձինք մաքսային*

հսկողության իրականացման նպատակով կարող են մուտք գործել ֆիզիկական անձանց բնակարաններ՝ օրենքով սահմանված կարգով: Այս և այլ բազմաթիվ այլ հակասություններն ու տարընթերցումները բացառելու համար, ինչպես նշել ենք, նպատակահարմար կլիներ Միության օրենսգրքով սահմանված մաքսային հսկողության ձևերին համահունչ, ընդունել դրա իրականացման մեթոդիկան կարգավորող առանձին իրավական ակտ:

Գործնական առումով բավական խնդրահարույց են նաև Միության օրենսգրքով շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ժամկետներին վերաբերող հարցերը: Այսպես, Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը պետք է իրականացվի հնարավորինս նվազագույն ժամկետում, որն անհրաժեշտ է դրա իրականացման համար, և որը չի կարող շարունակվել 1 (մեկ) աշխատանքային օրից ավելի, եթե այլ բան սահմանված չէ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Խնդիրն այն է, որ առանձին դեպքերում մեկ աշխատանքային օրը ողջամտորեն բավարար չի լինում տեսազննման իրականացման համար՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ գործոններով: Առավել ևս, ներպետական օրենսդրության շրջանակներում դեռևս առկա չէ մաքսային տեսազննման իրականացման մեթոդիկան կարգավորող որևէ նորմատիվ իրավական ակտ: Բանն այն է, որ առանձին դեպքերում շինություններ և տարածքներ մաքսային մարմնի աշխատակցի մուտք գործելը խաթարվում է՝ պայմանավորված դրա մերժմամբ, ինչը, բնականաբար, պահանջում է լրացուցիչ միջոցների ներգրավում: Կամ, առանձին դեպքերում մաքսային հսկողության տարածքների ընդարձակ լինելու հիմքով հնարավոր չի լինում տեսազննման ողջ գործընթացն ավարտել մեկ աշխատանքային օրվա շրջանակներում: Մինչդեռ, Օրենքն այս առումով չի նախանշում որևէ բացառություն, որի արդյունքում խնդիրը մնում է չկարգավորված: Ուստիև, այս պարագայում, գտնում ենք՝ անհրաժեշտ է Օրենքով նախատեսել իրավադրույթ, որի համաձայն՝ մաքսային տեսազննումը պետք է իրականացվի Մաքսային միության մաքսային օրենսգրքի 119-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետներում, բացառությամբ՝

- մաքսային տեսազննման նպատակով շինություններ և տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման կամ ապրանքների կամավոր ներկայացումից հրաժարվելու պարագայում.

- երբ ապրանքների նույնականացման համար պահանջվում է շինություններում և տարածքներում այնպիսի գործողությունների իրականացում, որոնք չեն կարող ավարտվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

- երբ մաքսային տեսազննման ենթակա շինությունների և տարածքների չափերը գերազանցում են 1000 քմ²:

Ընդ որում, պետք է նկատել, որ ներպետական օրենսդրությամբ նման բացառություններ սահմանելու հնարավորությունը նախանշված է հենց Միության օրենսգրքով: Դրան համապատասխան, նշված բացառություններն ամրագրված են նաև «Մաքսային կարգավորման մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքում և «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենքում: Ավելին, «Մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենսգրքի 208-րդ հոդվածի 8-րդ մասն ամրագրում է, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը պետք է իրականացվի դրա անցկացման համար նվազագույն ժամանակահատվածում: Մաքսային տեսազննման ընթացքն կարող է երկարացվել ոչ ավելի, քան հինգ աշխատանքային օրով:¹⁰⁵ Մինչդեռ, Օրենքի 130-րդ հոդվածի 3-րդ մասը սուկ ամրագրում է, որ տարածքների և շինությունների մաքսային զննումն իրականացվում է նվազագույն բավարար ժամանակահատվածում: Դրա շրջանակներում որևէ բացառություն կամ առանձնահատուկ կարգավորում նախատեսված չէ: Ավելին, հիշյալ հոդվածում թեպետ հղում է արվում Միության օրենսգրքի 119-րդ հոդվածին (շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը), այսուհանդերձ, որպես մաքսային հսկողության ձև՝ Օրենքում այն թյուրիմացաբար ամրագրվել է «շինությունների և տարածքների մաքսային զննում» բառերով, որպիսի իրավիճակն ակնհայտորեն ենթակա է շտկման:

¹⁰⁵ «Մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենսգրքը, ընդունվել է 30.06.2010թ. № 296 IV (փոփոխություններն ու լրացումները՝ 09.04.2016 թ.) www.online.zakon.kz

Այս համատեքստում տեղին է հիշատակել, որ Միության օրենսգրքով չեն կարգավորվել նաև մաքսային տեսազննման ընթացքում մաքսային զննություն իրականացնելու ընթացակարգային հարցերը: Բանն այն է, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ընթացքում կարող է ուղղակիորեն ծագել մաքսային զննման իրականացման անհրաժեշտություն: Նման պարագայում հարց է առաջանում՝ մաքսային հսկողության որ ձևի կիրառման իրավական ուղենիշներով պետք է առաջնորդվի մաքսային մարմնի համապատասխան պաշտոնատար անձը: Այլ կերպ ասած՝ այս պարագայում հսկողական որ ձևի կանոններին համապատասխան պետք է կայացվի մաքսային զննման ակտ:

Իսնդիրն այն է, որ Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ժամանակ և (կամ) արտագնա մաքսային ստուգման ժամանակ մաքսային զննումը կարող է իրականացվել առանց մաքսային հսկողության գոտու ստեղծման: Ինչպես տեսնում ենք, այս պարագայում նախատեսվում է նաև առանց մաքսային հսկողության գոտու ստեղծման մաքսային զննման իրականացման հնարավորություն: Մինչդեռ, դրանով բաց է մնում այն հարցի լուծումը, թե այս պարագայում հսկողության որ ձևին վերաբերող իրավական վավերապայմաններն են կիրառելի: Բնականաբար, մաքսային զննման ժամանակ օբյեկտն ինքնին ապրանքն է, ոչ թե դրա գտնվելը մաքսային հսկողության գոտի հանդիսացող տարածքում: Դրանով պայմանավորված՝ Միության օրենսգրքին իրավաչափորեն թույլատրելի է համարում, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ժամանակ իրականացվող մաքսային զննման ժամանակ առկա չլինի մաքսային հսկողության գոտի: Պարզապես, մեր համոզմամբ, այս պարագայում շինությունների և տարածքների մաքսային տեսազննման փաստը չի կարող իր իրավական նշանակությամբ նույնական լինել արտագնա մաքսային ստուգման իրականացմանը, որի դեպքում Միության օրենսգրքը նախատեսում է մաքսային հսկողության ցանկացած ձևի կիրառման հնարավորություն: Մինչդեռ, հիշյալ դեպքում մաքսային զննումն իրականացվում է ոչ թե արտագնա մաքսային ստուգման, այլ մաքսային տեսազննման շրջանակներում:

Մեր համոզմամբ, մաքսային զննումն այս պարագայում պետք է իրականացվի հենց մաքսային զննումը կարգավորող օրենսդրության պահանջների պահպանմամբ: Հակառակ դեպքում, կբախվենք այն իրողությանը, որ տեսազննման ժամանակ ծագած մաքսային զննման հսկողության ձևի կիրառման անհրաժեշտության դեպքում մաքսային մարմինը ստիպված պետք է սահմանափակված լինի մեկ աշխատանքային օրվա ժամկետով, ինչը, բնականաբար, առանձին դեպքերում ողջամիտ համարվել չի կարող մաքսային հսկողության պատշաճ իրականացման համար: Իրավական անորոշությունը բացառելու նպատակով, գտնում ենք, որ անհրաժեշտ է Միության օրենսգրքով նշված հարցերը կարգավորել առանձին, ինչը հնարավորություն կտա խնդիրները լուծել ոչ թե պրակտիկ հարթությունում, այլ օրենսդրական դաշտում:

Այսպիսով, ակներև է, որ հսկողական յուրաքանչյուր ձև պետք է ունենա հստակորեն կանխորոշված նպատակ և խնդիր: Հենց այս տրամաբանությունը պետք է ներդրված լինի մաքսային հսկողության ձևերի իրավական ամրագրման հիմքում: Մաքսային տեսազննման (զննման) ինստիտուտի շարունակական կատարելագործումն ուղղակիորեն պայմանավորված է մաքսային հսկողության ինստիտուտի զարգացման հրամայականով: Ուստիև, գտնում ենք, որ Օրենքով հիշյալ հսկողական ձևը պետք է առավել համակողմանի կարգավորում ստանա արդյունավետ և միասնական կիրարկում ապահովելու նպատակով:

ԳԼՈՒԽ III.

ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՐԱՆՔԻ ԲԱՑԹՈՂՈՒՄԻՑ ՀԵՏՈ

§1. Կամերալ մաքսային ստուգման իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգի օրինականության ապահովման համար ելակետային նշանակություն ունի ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողությունը: Այն հնարավորություն է տալիս դյուրինացնել մաքսային վարչարարությունը՝ ապահովելով սահուն անցումը ընթացիկ մաքսային հսկողությունից դեպի հետագա մաքսային հսկողության: Ակներև է, որ յուրաքանչյուր այդպիսի հիմնավորված անցում երաշխավորում է այս գործընթացում կիրառման ենթակա կոնվենցիոնալ և օրենսդրական պահանջների կենսագործումը, մաքսային ընթացակարգերի պարզեցումը: Բացի այդ, հսկողության այս տեսակի արդյունավետ իրականացման պարագայում առարկայացվում է նաև «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» 1973 թվականի Կիոտոյի միջազգային կոնվենցիայի 6-րդ գլխի 6.6-րդ ստանդարտում ամրագրված պահանջն առ այն, որ մաքսային հսկողությունը ներառում է աուդիտի վրա հիմնած հսկողությունը, որը կոնվենցիայի իմաստով ընկալվում է որպես մաքսային մարմնի կողմից կենսագործվող միջոցների համակցություն, որոնք մաքսային ծառայությանը հնարավորություն են տալիս անձանց մոտ առկա համապատասխան գրառումների, գրանցումների, բիզնես համակարգերի և առևտրային տվյալների ստուգման միջոցով համոզվելու, որ հայտարարագրերը լրացվել են ճիշտ, և հայտարարագրում ներառված տվյալները ստույգ են (*Կոնվենցիայի 2-րդ գլուխ E3./F4. ստանդարտ*): Բնական է, որ նման հետազոտումն, իր ամբողջականությամբ պայմանավորված, ընդգրկում է նաև ապրանքի բացթողումից հետո իրականացվող հսկողության դեպքերը: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, արդյունավետ մաքսային հսկողությունը օրենքը պետք է երաշխավորի մինչև ապրանքի ժամանումը դրա վերաբերյալ

տվյալների մշակումը, նախքան պաշտոնական բոլոր ընթացակարգերը ապրանքի բացթողնման հնարավորությունը, ներառյալ՝ դրան վերաբերող բոլոր փաստաթղթերի բացակայության դեպքում և աուդիտի վրա հիմնված հսկողական միջոցների կիրառումը:¹⁰⁶

Ըստ էության, ապրանքի բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության իրավական հիմքերը նախատեսված են առաջին հերթին, Միության օրենսգրքի 99-րդ հոդվածով, որի համաձայն՝ *ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողությունն իրականացվում է սույն Օրենսգրքի 16-րդ և (կամ) 19-րդ գլուխներով սահմանված ձևերով և կարգով*: Օրենսգրքի 19-րդ գլխով նախատեսված այդպիսի ձևերն են կամերալ և արտագնա մաքսային ստուգումները: Ըստ էության, ապրանքի նկատմամբ հետբացթողումային հսկողությունն իրականացվում է հենց հիշյալ հիմնական ձևերի միջոցով:

Այսպես, Միության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կամերալ մաքսային ստուգումն իրականացվում է ստուգման ենթակա անձի կողմից ներկայացվող մաքսային հայտարարագրերում, առևտրային, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում և այլ փաստաթղթերում ներառված տեղեկությունների, Մաքսային միության անդամ պետությունների պետական հսկիչ մարմինների տեղեկությունների, ինչպես նաև նշված անձանց գործունեության մասին՝ մաքսային մարմինների տրամադրության տակ եղած այլ փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրության և վերլուծության միջոցով*:

Վկայակոչված հոդվածի բովանդակային վերլուծությունից բխում է, որ կամերալ մաքսային ստուգումը հանդես է գալիս որպես մաքսային հսկողական ուրույն կառուցակարգ, որի շրջանակներում ստուգման առարկան բացառապես մաքսային և այլ փաստաթղթերում ներառված տեղեկությունների բովանդակության ճշգրտումն է:

Առհասարակ, պետք է նկատի ունենալ, որի ի տարբերություն արտագնա մաքսային ստուգման, որի իրականացման ընթացակարգն առավել մանրամասն է կարգավորվել Միության օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով, կամերալ մաքսային ստուգման էությունը և կիրառման ընթացակարգային

¹⁰⁶ St ' u Best Practices Report on Modernisation of the Customs Code, BizClim. էջ 19:

հարցերը չեն կանոնակարգվել իրավական բավարար որոշակիությամբ: Մասնավորապես, գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում, ըստ էության, չեն սահմանվել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են կամերալ մաքսային ստուգմանը: «Մաքսային ստուգում» հսկողության ձևի նշված երկու տարատեսակներն ընդհանուր են սուկ նրանով, որ կիրառվում են բացառապես ապրանքի բացթողումից հետո և կոչված են ստուգելու անձանց կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը: Մինչդեռ, ընթացակարգային առումով կամերալ մաքսային ստուգումը ենթադրում է օրենսդրական որոշակիորեն տարբերակված մոտեցման առկայություն, որը պայմանավորված է, առաջին հերթին, դրա էությամբ: Եթե արտագնա մաքսային ստուգումը ենթադրում է մաքսային մարմին-ստուգման ենթակա անձ ակտիվ փոխգործակցություն, ապա կամերալ մաքսային ստուգման պարագայում նման ուղղակի կապ գոյություն չունի այնքանով, որքանով մաքսային մարմինը ստուգումն իրականացնում է բացառապես իր մոտ առկա մաքսային փաստաթղթերի հետազոտման միջոցով: Մաքսային ստուգման նշված երկու տարատեսակների միջև առկա մյուս տարբերությունները հանգում են հետևյալին.

Մասնավորապես, նման տարբերակումն առաջին հերթին առկա է կամերալ մաքսային ստուգման կազմակերպման փուլում: Միության օրենսգիրքը, ամրագրելով առանց համապատասխան գրավոր հանձնարարականի կամերալ մաքսային ստուգում իրականացնելու իրավաչափությունը, ըստ էության, որևէ կերպ չի սահմանում, թե որ պահից է սկսում հաշվարկվել կամերալ մաքսային ստուգման ժամկետը: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 133-րդ հոդվածի 1-ին մասն արձանագրում է, որ *կամերալ մաքսային ստուգումն իրականացվում է Միության մաքսային օրենսգրքին, սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ առանց ստուգում սկսելու մասին գրավոր հանձնարարականի՝ մաքսային մարմինների աշխատատեղերում, առանց ստուգվող անձին այցելության:* Համանման դրույթ է բովանդակում նաև Մաքսային Միության մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ *կամերալ մաքսային ստուգումն իրականացվում է մաքսային*

մարմինների կողմից մաքսային մարմնի գտնվելու վայրում՝ առանց ստուգման ենթակա անձին այցելության և առանց կարգադրագրի (ստուգում նշանակելու մասին ակտի):

Նույն հոդվածի 3-րդ մասն արձանագրում է, որ կամերալ մաքսային ստուգումներն իրականացվում են առանց դրանք անցկացնելու պարբերականության սահմանափակումների:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակային վերլուծությունից բխում է, որ ի տարբերություն արտագնա մաքսային ստուգման, կամերալ մաքսային ստուգման պարագայում չի կազմվում ստուգում իրականացնելու մասին որևէ գրավոր հանձնարարական: Ստացվում է, որ անձի նկատմամբ իրականացվում է մաքսային հսկողություն առանց դրա սկիզբն ազդարարող կոնկրետ ընթացակարգային փաստաթղթի, որպիսի մոտեցումը, մեր համոզմամբ, չի կարող իրավաչափ համարվել: Բանն այն է, որ գործող օրենսդրությամբ կամերալ մաքսային ստուգման ժամկետի չկարգավորվածության պայմաններում կամերալ մաքսային ստուգման իրականացման գրավոր հանձնարարականի բացակայությունը մաքսային մարմնին վերապահում է անսահմանափակ հայեցողություն իրականացնելու ստուգողական գործողություններ առանց որևէ ժամկետային սահմանափակման: Մինչդեռ, ակներև է, որ մաքսային հսկողության ձև կարող է համարվել բացառապես այն կառուցակարգը, որն ենթադրում է դրա սկիզբը, ընթացքն ու ավարտն արձանագրող կոնկրետ փաստաթղթի առկայություն: Այս առումով պետք է համաձայնել Գ.Վ.Մատվիենկոյի այն պնդմանը, որ կամերալ մաքսային ստուգման իրականացման մասին որոշումն անհրաժեշտ է ուղարկել ստուգվող անձին, օրինակ, էլեկտրոնային եղանակով և օրենսդրորեն ամրագրել մաքսային մարմինների պարտավորությունը ծանուցել անձին դրա անցկացման սկզբի մասին:¹⁰⁷

Ասվածը հիմնավորվում է նաև Միության օրենսգրքի 98-րդ և Օրենքի 124-րդ հոդվածների իրավակարգավորման պայմաններում, որոնք ընդհանուր առմամբ ամրագրում են մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց պարտավորությունը մաքսային մարմնին տրամադրելու մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ:

¹⁰⁷ Տե՛ս Матвиенко Г.В. Таможенная проверка: Правовые вопросы регулирования и применения, Государственный аудит. Право. Экономика. 2012, № 3, էջ 99:

Հետևում է, որ ստուգվող անձը պետք է տեղեկացվի, որ իր նկատմամբ կիրառվում է մաքսային հսկողության որևէ ձև և դրա շրջանակներում են իրենից պահանջվում փաստաթղթեր և տեղեկություններ:

Ավելին, առկա իրավակարգավորման պայմաններում ստացվում է, որ կամերալ մաքսային ստուգման արդյունքներով թե՛ խախտումների հայտնաբերման, թե՛ դրանց բացակայության պայմաններում կամերալ մաքսային ստուգման ակտ կազմելն ամբողջապես վերապահված է մաքսային մարմնի հայեցողությանն այնքանով, որքանով ստուգվող անձն այս պարագայում որևէ կերպ չի տեղեկացվում դրա սկզբի մասին: Հետևապես, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել կամերալ մաքսային ստուգման անցկացումը բացառապես համապատասխան գրավոր հանձնարարականի առկայության պայմաններում նշված գործընթացում իրավական հստակությունն ապահովելու նպատակով: Նման իրավակարգավորումը հիմքեր կստեղծի նաև մաքսային մարմնի համար յուրաքանչյուր դեպքում ստուգման արդյունքներն ավարտել կոնկրետ-որոշակի փաստաթղթով՝ կամերալ մաքսային ստուգման ակտով:

Բացի այդ, Մաքսային Միության իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված 21.05.2010թ. «Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ վարչական օգնության մասին» համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունն ուղղակիորեն ամրագրում է անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների իրավունքն իրականացնելու նաև այնպիսի տեղեկատվության փոխանակում, որոնք նպաստում են մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմանը: Մեր համոզմամբ, այս դիտանկյունից նույնպես կամերալ մաքսային ստուգման անցկացման գրավոր հանձնարարականի առկայությունը հնարավորություն կտար Միության շրջանակներում խնայել և արդյունավետորեն իրացնել հսկողական միջոցները: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, ստուգման սկզբի մասին ծանուցումը նպատակահարմար կլիներ ուղարկել նաև այն մաքսային մարմնին, որն ապահովում է տրանսպորտային միջոցի ժամանման (մեկնման) գրանցումը: Միության այլ անդամ պետություններում ապրանքների միևնույն խմբաքանակի կապակցությամբ

իրականացվող համանման ստուգումների սկզբի մասին ծանուցումը հնարավորություն կտար բացառելու հսկողական միջոցառումների կրկնությունը կամ ընդհակառակը, ընդունելու համատեղ մաքսային հսկողություն իրականացնելու մասին որոշում:¹⁰⁸ Առավելևս, երբ նշված համաձայնագրի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Մաքսային միության մաքսային տարածքում փոխադարձաբար ճանաչվում են և հավասար իրավաբանական ուժ ունեն մաքսային մարմինների այն որոշումները, որոնք՝ (...) ընդունվել են Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային հսկողություն իրականացնելիս:*¹⁰⁹

Ընդ որում, հատկանշական է, որ ի տարբերություն սկզբի, օրենսդրորեն բավական մանրամասն կարգավորվում է մաքսային ստուգման ավարտի արձանագրման հետ կապված հարցերը: Մասնավորապես, Միության օրենսգրքի 122-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ *մաքսային ստուգման արդյունքները ձևակերպվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան փաստաթղթով:*

Միաժամանակ, Օրենքի 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ամրագրում է, որ *մաքսային մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները ձևակերպվում են՝*

- 1) *կամերալ մաքսային ստուգման ակտով՝ կամերալ մաքսային ստուգում իրականացնելու դեպքում (...):*

Ինչպես տեսնում ենք, մանրամասնորեն կարգավորելով մաքսային ստուգման ավարտի, ներառյալ մաքսային ստուգման ակտում ներառվող տեղեկությունների հետ կապված հարցերը՝ օրենսդիրը որևէ կերպ պարտադիր չի համարում նաև կամերալ մաքսային ստուգման սկիզբն ազդարարող փաստաթղթի կազմումը: Այլ կերպ ասած՝ ներպետական օրենսդրությամբ ընդհանուր առմամբ նախանշված է մաքսային ստուգման արդյունքների ձևակերպման պահանջ, որը, անկախ թերությունների հայտնաբերման փաստից, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 140-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ առարկայացվում է կամերալ մաքսային ստուգման ակտով: Մինչդեռ, ստուգման ենթակա անձն այդպես էլ որևէ կերպ չի

¹⁰⁸ Տե՛ս Матвиенко Г.В. նշվ. աշխատ., էջ 99-100:

¹⁰⁹ Ընդունվել է 21.05.2010թ. ուժի մեջ է մտել 02.01.2015թ. ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092):

տեղեկացվում նման ստուգման ձև սկսելու մասին, ինչը, փաստորեն, կամերալ մաքսային ստուգման արդյունքների ամփոփումը կամերալ մաքսային ստուգման ակտի ձևով իրականացնելու օրենսդրական պահանջն ամբողջապես թողնում է մաքսային մարմնի հայեցողությանը՝ պայմանավորված այն հանգամանքի հաշվառմամբ, որ ստուգման ենթակա անձը որևէ կերպ չի ծանուցվում դրա սկզբի մասին: Ակներև է, որ նշված իրավիճակը որևէ կերպ համադրելի չէ ելակետային նշանակություն ունեցող այն գաղափարին, որ չի կարող անձի նկատմամբ իրականացվել մաքսային հսկողություն դրա շրջանակում ներառվող բոլոր սահմանափակող միջոցներ հանդերձ: Ուստիև, գտնում ենք՝ անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել ոչ միայն կամերալ մաքսային ստուգման ակտի կայացման ընթացակարգ, այլ նաև դրա սկզբի մասի ստուգման ենթակա անձին ծանուցելու կառուցակարգ, որի պարագայում կապահովվի անձանց իրավունքների առավել համակողմանի պաշտպանություն:

Ասվածը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ անձը պետք է ողջամտորեն հնարավորություն ունենա կամերալ մաքսային ստուգման ընթացքում դիրքորոշում հայտնելու ստուգմամբ ներառվող փաստական հանգամանքների շուրջ:

Պետք է նկատել, որ մինչև կամերալ մաքսային ստուգման ակտի կայացումը ստուգման ենթակա անձի կողմից կամերալ մաքսային ստուգման ընթացքում ի հայտ եկած թերությունների կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունն ամրագրված է, օրինակ, Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգրքով: Մասնավորապես, նշված օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն՝ եթե կամերալ մաքսային ստուգման ընթացքում հայտնաբերվում են մաքսային փաստաթղթերի լրացման խախտումներ կամ դրանց միջև առկա հակասություններ, հարկային մարմինը հայտնում է այդ մասին հարկ վճարողին սահմանված ժամկետում համապատասխան ճշգրտումներ իրականացնելու պահանջով:¹¹⁰

Ինչպես տեսնում ենք, նշված օրենսգրքով ուղղակիորեն նախանշված է մինչև կամերալ մաքսային ստուգման ակտի կայացումը ստուգման ենթակա անձի դիրքորոշումը ներկայացնելու իրավական հնարավորություն: Մեր համոզմամբ, հենց նշված տարբերակումը պետք է դրվեր կամերալ մաքսային ստուգման անցկացման

¹¹⁰ Ընդունվել է 16.07.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ. № 146-Փ3: www.consultant.ru

հիմքում: Ի վերջո, միայն առկա փաստաթղթերի բովանդակության հետազոտմամբ իրավախախտման առկայության մասին արված հետևությունները խիստ նախնական են և խոցելի: Առավել ևս, երբ մաքսային հսկողության ձև համարվող մաքսային ստուգման հիմնական նպատակը սոսկ իրավախախտման փաստի հայտնաբերման հիման վրա անձին վարչական պատասխանատվության ենթարկելը չէ: Դրանով նպատակ է հետապնդվում նաև ստուգման ենթակա անձին հնարավորություն տալ կատարելու համապատասխան ճշգրտումներ նախկինում ներկայացված մաքսային փաստաթղթերում և իր իրավական դիրքորոշման առարկայացման միջոցով կանխել իր նկատմամբ իրականացվող ոչ իրավաչափ վարչարարությունը: Ստացվում է սակայն, որ առկա իրավակարգավորմամբ ապահովվում է դրա հակառակ պատկերը, երբ մաքսային մարմնին ընձեռնված է անհարկի հայեցողություն՝ կամ բարեխղճորեն օգտվել լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու իր իրավունքից, ամբողջականորեն բացահայտել մաքսային փաստաթղթերի բովանդակության մեջ ներառվող տվյալների հավաստիությունը և ապա նոր միայն ձեռնամուխ լինել կամերալ մաքսային ստուգման ակտի կայացմանը, կամ առանց որևէ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման պահանջի ապահովել կամերալ մաքսային ստուգման ակտի կազմումը և դրա հիման վրա համապատասխան որոշման կայացումը, ինչը գտնում ենք, ընդունելի իրավական լուծում համարվել չի կարող:

Այս առումով բնորոշ է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 12.07.2006թ. № 267-Օ որոշման 2.4. կետի իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ օրենքով չարգելված միջոցներով իր իրավունքների և ազատությունների պաշտպանության յուրաքանչյուրի իրավունքը ենթադրում է երաշխիքների առկայություն, որոնք թույլ են տալիս դրանք իրականացնել ամբողջ ծավալով և ապահովել իրավունքների արդյունավետ վերականգնում ոչ միայն դատավարության, այլ նաև իրավաբանական պատասխանատվության ենթարկելու բոլոր դեպքերում: Հարկային պատասխանատվության կիրառման հարցում այդպիսի երաշխիքներից մեկը հանդիսանում է ՌԴ Սահմանադրության 24-րդ հոդվածի 2-րդ մասը, որը հարկ վճարողին իրավունք է վերապահում իմանալու՝ ինչում են իրեն մեղադրում և ներկայացնելու առարկություններ դրա կապակցությամբ: Դրա համար հարկային

մարմնում գործի քննության ընթացքում հարկ վճարողների ընթացակարգային իրավունքների սահմանման պարագայում օրենսդիրը չի կարող վերջինիս չվերապահել իրավունք իմանալու հարկային մարմնի առաջադրած պահանջների մասին, ներկայացնել առարկություններ և ապացույցներ ընդունված որոշումների օրինականության և հիմնավորվածության կապակցությամբ:

Առավել ուշագրավ է, որ այս դեպքում անդրադառնալով հարկային մարմնի կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի իրավական բնույթին՝ ՌԴ Սահմանադրական դատարանը հիշյալ որոշման 2.5. կետում արտահայտել է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որ կամերալ հարկային ստուգման ընթացքում հարկային իրավախախտման հայտնաբերման դեպքում հարկային մարմինները ոչ միայն իրավունք ունեն, այլ նաև պարտավոր են հարկ վճարողից պահանջել բացատրություններ և փաստաթղթեր, որոնք հաստատում են հարկերի ժամանակին և ճիշտ վճարումը, ինչպես նաև նախապես ծանուցել նրան հարկային մարմնի ղեկավարի նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից կամերալ մաքսային ստուգման նյութերի քննության տեղի և ժամանակի մասին:¹¹¹

Հատկանշական է նաև այն, որ ըստ էության, ինչպես Օրենսգրքով, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ կարգավորված չէ կամերալ մաքսային ստուգման ընթացքում լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման պահանջի և դրանց չներկայացման դեպքում իրավական համապատասխան հետևանքների հետ կապված հարցերը: Այս առումով հատկանշական է այն, որ Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը մաքսային մարմնի պաշտոնատար անձին իրավունք է վերապահում, ի թիվս այլնի, *ստուգման ենթակա անձից պահանջելու ու նրանից ստանալու առևտրային, տրանսպորտային փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև այլ տեղեկություններ, այդ թվում՝ էլեկտրոնային կրիչներով, որոնք վերաբերում են ստուգվող ապրանքներին:*

Միաժամանակ, նույն օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության իրականացման նպատակներով մաքսային մարմիններն իրավունք ունեն պահանջելու և ստանալու*

¹¹¹ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 12.07.2006թ. № 267-Օ որոշումը www.ksrf.ru

առևտրային և հաշվապահական փաստաթղթեր, այլ տեղեկություններ, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, որոնք վերաբերում են մաքսային սահմանով ապրանքների տեղափոխմանը, դրանց բացթողմանը և օգտագործմանը Մաքսային միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս): Այսուհանդերձ, կամերալ մաքսային ստուգման պարագայում դրա իրականացման կարգը սահմանված չէ:

Ստացվում է, որ որևէ կերպ կարգավորված չէ այն հարցը, թե կամերալ մաքսային ստուգման ընթացքում լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտության դեպքում մաքսային մարմինն ինչպես պետք է վարվի: Թվում է, թե հարցի լուծումը արտագնա մաքսային ստուգման անցկացումն է: Մինչդեռ, մեր համոզմամբ, մաքսային ստուգման երկու՝ կամերալ ու արտագնա ստուգումների տարբերությունը մաքսային մարմնի գտնվելու վայրում ստուգման իրականացման հնարավորության առկայությունն է մաքսային մարմնի մոտ գտնվող կամ նրան ներկայացված տեղեկությունների հիման վրա:

Հարկ է նկատել, որ կամերալ մաքսային ստուգումն իրականացնելիս լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման պահանջի և դրա չկատարման իրավական հետևանքները Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից առավել մանրամասն կարգավորվել են «Ղազախստանի Հանրապետությունում մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենսգրքով: Մասնավորապես, նշված օրենսգրքի 220-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *եթե կամերալ մաքսային ստուգման ընթացքում մաքսային մարմնի կողմից գրավոր պահանջված փաստաթղթերը, որոնք ներառվել էին էլեկտրոնային ձևով ներկայացված հայտարարագրում, չեն ներկայացվում գրությամբ սահմանված ժամկետներում, ապա մաքսային հայտարարագրում նշված փաստաթղթերի վրա հիմնված տեղեկությունները համարվում են անարժանահավաստ լրացված:*¹¹² Կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ նաև ՀՀ ներպետական օրենսդրությամբ կարգավորել կամերալ մաքսային ստուգման ընթացքում լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման մասով ծագող իրավահարաբերությունները:

¹¹² Ընդունվել է 30.06.2010թ. 29.03.2016թ. խմբագրությամբ, № 296-IV www.online.zakon.kz

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հանգամանքի պարզաբանումը, թե ինչպիսի իրավական հետևանքներ կարող են առաջացնել կամերալ մաքսային ստուգման արդյունքները մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համար:

Այսպես, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 140-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *մաքսային վճարների և Հայաստանի Հանրապետության օրենքներով մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների չվճարման կամ ոչ լրիվ վճարման բացահայտման դեպքում՝ մաքսային ստուգման ակտի հիման վրա, ստուգումն իրականացրած մաքսային մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձն ընդունում է համապատասխան որոշում (որոշումներ):*

Նույն հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, որ *սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում ստուգվող անձը մաքսային ստուգման ակտը և սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը (որոշումները) ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, պարտավոր է իրականացնել նշված ակտով և որոշմամբ (որոշումներով) առաջադրված գումարների վճարումը և օրենսդրությամբ սահմանված այլ պահանջներ: Սույն մասով սահմանված ժամկետում նշված գումարները վճարելու դեպքում օրենքով սահմանված տույժերն այդ ժամկետի համար չեն հաշվարկվում:*

Մեր համոզմամբ, այնքանով, որքանով կամերալ մաքսային ստուգումը նախատեսված է որպես մաքսային հսկողության ձև, դրա արդյունքում հայտնաբերված իրավախախտումներն ինքնին դեռևս անմիջականորեն չեն ենթադրում ստուգվող անձի համար պարտադիր համարվող վարչական ակտի կայացում: Մաքսային հսկողական յուրաքանչյուր ձև, առհասարակ, որպես հիմնական նպատակ, ունի ոչ թե պատասխանատվության ենթարկելու, այլ հայտնաբերված իրավախախտումը կանխելու, վերացնելու միտում: Հակառակ պարագայում, կստացվի այնպես, որ մաքսային հսկողության իրականացումը որևէ կերպ չի տարբերվի վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթից, ինչը, բնականաբար, անընդունելի է: Կամերալ մաքսային ստուգումն անձի փաստաթղթերի բովանդակային որոշակիության ճշգրտման միջոցով ենթադրաբար թույլ տրված իրավախախտումների վերհանումն է: Ինչպես նշում է Օ.Վ.Գրեչկինան, այն վարչական քննության հատուկ

տեսակ է, բայց վարչական քննություն չէ իր բովանդակության նորմատիվ իմաստով՝ պետական մարմնին վերապահված լիազորությունների ողջ ցանկով, որոնք տրվում են նրան վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հարուցումից հետո:¹¹³ Ընդ որում, մաքսային հսկողությունը նշված վարույթներից տարբերակելու հիմնարար գաղափարն ունի նաև օրենսդրական ամրագրում: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 140-րդ հոդվածի 6-րդ մասով, որի համաձայն՝ *մաքսային ստուգման արդյունքներով վարչական կամ քրեական իրավախախտման փաստեր հայտնաբերելու դեպքում դրանց հետագա ընթացքն ապահովվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*

Այլ կերպ ասած՝ մեր համոզմամբ, կամերալ մաքսային ստուգման արդյունքը չպետք է անմիջականորեն հանգի վարչական ակտի կայացմանը: Կամերալ մաքսային ստուգումը չի իրականացվում կոնկրետ իրավախախտման կապակցությամբ: Այն անընդհատ և պարբերաբար իրականացվող գործընթաց է, որը նպատակ է հետապնդում մաքսային մարմինների տիրապետության տակ գտնվող փաստաթղթերի ուսումնասիրմամբ գնահատման առարկա դարձնել անձի՝ մաքսային իրավունքի դիրքերից արժևորվող գործառնությունների իրավականությունը: Հետևապես, կարծում ենք՝ կամերալ մաքսային ստուգման արդյունքներով անմիջական անցումը դեպի վարչական ակտ համարվող կամերալ մաքսային ստուգման ակտի կայացում թույլատրելի իրավական կառուցակարգ համարվել չի կարող: Ասվածը հիմնավորվում է, ի թիվս այլնի, նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ գործող օրենսդրության շրջանակներում որևէ տարբերակված ընթացակարգ սահմանված չէ կամերալ մաքսային ստուգման ակտի կայացման և դրա հիման որոշման կայացման միջև: Վերջին հաշվով, եթե արտագնա մաքսային ստուգման իրականացման ժամանակ նշված կարգավորումն արդյունավետ է և որևէ գործնական խնդիր չի առաջացնում՝ պայմանավորված դրա ընթացքում ստուգման ենթակա անձի կողմից առարկությունների ներկայացման լիարժեք հնարավորությամբ, ապա նույն կարգավորումը կամերալ ստուգումների պարագայում դառնում է խնդրահարույց:

¹¹³ Տե՛ս Օ.Յ. Гречкина, Проблемы административного производства по делам о нарушении таможенных правил, Южно-Уральский государственный университет, 2010, էջ 354:

Մինչդեռ, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթների բովանդակային-համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսդիրն ըստ էության, նույնացրել է կամերալ մաքսային ստուգման ակտի կազմման և դրա հիման վրա համապատասխան որոշման կայացման գործառույթները առանց հնարավորություն տալու ստուգվող անձին կամերալ մաքսային ստուգման առնչությամբ ներկայացնելու իր դիրքորոշումը և դրանով իսկ ներազդելու կայացվող որոշումների վրա: Մեր համոզմամբ, սակայն, նշված երկու գործողություններն իրարից էապես տարբերվում են և չեն կարող նույնացվել: Բոլոր դեպքերում ակներև է, որ կամերալ մաքսային ստուգումը չի իրականացվում կոնկրետ իրավախախտման կապակցությամբ, ուստիև պետք է համարժեք օրենսդրական տարբերակում դրվեր կամերալ մաքսայի ստուգման ակտի և դրա արդյունքում համապատասխան որոշման կայացման միջև:

Ասվածն առավել հիմնավորվում է նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ մաքսային ստուգման ակտի՝ վարչական ակտ հանդիսանալու հանգամանքը հաստատվել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման շրջանակներում: Մասնավորապես, թիվ ՎԴ/4538/05/09 վարչական գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը 29.10.2010թ. որոշմամբ արձանագրել է, որ հետբաղթողումային հսկողության արդյունքներով կայացվող որոշումն իրենից ներկայացնում է վարչական ակտ՝ անկախ դրանում պարունակվող ձևակերպումներից, իսկ այդ պարտավորության կատարման՝ վճարման ձևի՝ կամավոր կամ ոչ կամավոր, վերաբերյալ առկա ձևակերպումները որևէ կերպ չեն կարող փոփոխել դրա՝ որպես վարչական ակտի էությունը:¹¹⁴

Մինչդեռ, առկա իրավակարգավորման պայմաններում ստացվում է, որ կամերալ մաքսային ստուգման արդյունքներով անմիջապես կազմվում է համապատասխան վարչական ակտ համարվող որոշում, որի արդյունքում ստուգվող անձն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենում հայտնելու իր դիրքորոշումը դրա կապակցությամբ: Հետևապես, գտնում ենք, որ հատկապես այս փուլում անհրաժեշտ էր տարբերակել կամերալ մաքսային ստուգման արդյունքների ամփոփումը դրանց հիման վրա

¹¹⁴ Տե՛ս թիվ ՎԴ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010թ. որոշումը:

վարչական համապատասխան ակտի կայացումից: Նշված դիրքորոշումը համահունչ է նաև թիվ S-2421/2007 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008թ. արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ կամերալ ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկային մարմնի հայտնաբերած խախտումներն ընդունելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում:¹¹⁵ Հետևապես, պետք է օրենսդրորեն հնարավորություն տրվեր անձին նախքան կամերալ մաքսային ստուգման ակտի հիման վրա համապատասխան որոշման կայացումը հայտնելու դիրքորոշում դրա կապակցությամբ:

Հատկանշական է, որ իրավական համանման կառուցակարգեր նախատեսված են նաև ՀՀ օրենսդրությամբ:

Այսպես, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 5-րդ պարբերության համաձայն՝ *կամերալ ուսումնասիրության (...) արդյունքում հաշվետվություններում խախտումներ, անճշտություններ, անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում դրա վերաբերյալ կազմվում է արձանագրություն (երկու օրինակից), որը ուսումնասիրություն անցկացնող հարկային մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում փոստով կամ առձեռն տրամադրում է տնտեսավարող սուբյեկտին: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (ներան փոխարինող պաշտոնատար անձը) հինգ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված խախտումների հետ համաձայնելու դեպքում հարկային մարմին է ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ճշտված (ճշգրտված) հաշվետվությունը կամ հաշվետվությունները: Արձանագրված խախտումների հետ համաձայն չլինելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (ներան փոխարինող պաշտոնատար անձը) հարկային մարմին է ներկայացնում իր գրավոր առարկությունները:¹¹⁶*

Նույն օրենքի այլ դրույթներում կարգավորվում է նաև կամերալ ուսումնասիրության արդյունքներով ստուգման ակտի կայացման ընթացակարգը:

¹¹⁵ Տե՛ս թիվ S-2421/2007 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008թ. որոշումը:

¹¹⁶ Ընդունվել է 17.05.2000թ., ուժի մեջ է մտել 01.07.2000թ., ՀՀՊՏ 2000.06.23/14 (112):

Ավելին, նման տարբերակված ընթացակարգը Եվրասիական տնտեսական միության օրենսդրությանը խորթ չէ: Այսպես, «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ մասերի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ օրենսդրորեն սահմանված են իրավական երկու տարբեր ընթացակարգեր կամերալ մաքսային ստուգման դեպքում մաքսային հսկողության արդյունքներն ամփոփելու համար: Նախ, կազմվում է կամերալ մաքսային ստուգման ակտ, որի օրինակը հանձնվում է ստուգման ենթակա անձին: Այնուհետև, վերջինիս կողմից նշված ակտը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում համապատասխան առարկությունների առկայության դեպքում կազմվում է եզրակացություն նշված առարկությունների վերաբերյալ: Կամերալ մաքսային ստուգման ակտի հիման վրա համապատասխան որոշումը կայացվում է ստուգվող անձին ստուգման ակտն ուղարկելու պահից քսան, իսկ առարկությունների առկայության դեպքում դրանք անձին ուղարկելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Համանման իրավակարգավորում է նախատեսված նաև «Ղազախստանի Հանրապետությունում մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենսգրքի 220-220.1-րդ հոդվածներով:

Այսպիսով, գտնում ենք, որ կամերալ մաքսային ստուգման ակտի և դրա հիման վրա համապատասխան որոշման կայացման միջև անհրաժեշտ էր օրենսդրորեն նախատեսել որոշակի միջանկյալ օղակ, որի պայմաններում վարչական համապատասխան ակտի կայացման ժամանակ հնարավոր կլիներ համակողմանի հաշվի առնել նաև ստուգվող անձի դիրքորոշումը:

Ուշագրավ է նաև այն, որ գործող իրավակարգավորումը, ի տարբերություն արտագնա մաքսային ստուգման, չի սահմանում կամերալ մաքսային ստուգման ժամկետը, ինչը փաստորեն, մաքսային մարմնին ընձեռում է անսահմանափակ հայեցողություն մաքսային հսկողության ներքո ապրանքի գտնվելու պահից երեք տարվա ընթացքում իրականացնելու կամերալ մաքսային ստուգում:

Այսպես, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 123-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապրանքները բաց թողնելուց հետո մաքսային մարմինների

կողմից մաքսային հսկողությունը կարող է իրականացվել մաքսային հսկողության ներքո գտնվելու ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում:

Միաժամանակ, Օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ կամերալ մաքսային ստուգումներն իրականացվում են առանց դրանք անցկացնելու պարբերականության սահմանափակումների:

Նշված դրույթների վերլուծությունից սուկ բխում է, որ մաքսային հսկողության ներքո ապրանքի գտնվելու ավարտից հետո երեք տարվա ընթացքում մաքսային մարմինը կարող է իրականացնել կամերալ մաքսային ստուգում ըստ անհրաժեշտության, առանց դրանց անցկացման պարբերականության որևէ սահմանափակման: Մինչդեռ, օրենսդրորեն սահմանված չէ, թե որքան կարող է տևել ստուգվող սուբյեկտի մոտ մեկ անգամ իրականացվող կամերալ մաքսային ստուգումը:

Մեր համոզմամբ, նման իրավիճակը լուրջ խնդիրներ կարող է հարուցել հատկապես վարչական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետների համատեքստում: Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ *մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական փուլը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 3 տարվա ընթացքում:*

Եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կատարելու, ապա վարչական փուլը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Ինքնին հասկանալի է, որ կամերալ մաքսային ստուգման ժամկետի իրավակարգավորման բացակայության պայմաններում ողջամտորեն հնարավոր է, որ ավարտվեն նաև կոնկրետ մաքսային իրավախախտման նկատմամբ հաշվարկվող վաղեմության ժամկետները: Բնականաբար, օրենքի ուժով այդ դեպքում ստուգման ենթակա անձն այլևս չի ենթարկվի վարչական պատասխանատվության: Հետևապես, առաջարկում ենք «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 133-րդ հոդվածը լրացնել դրույթով առ այն, որ կամերալ մաքսային ստուգման ժամկետը չպետք է

գերազանցի երկու ամիսը: Նման կարգավորման պարագայում կապահովվի նաև Օրենքի և վերը հիշատակված օրենսգրքի միջև անհրաժեշտ ներքին համապատասխանությունը:

Այսպիսով, գտնում ենք, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում իրականացվող օրենսդրական բարեփոխումների առանցքը պետք է կազմի նաև խնդրո առարկա հսկողության ձևի իրավական բովանդակության և ընթացակարգի վերանայումն ու կատարելագործումը, որի պարագայում էականորեն կշահի մաքսային վարչարարության որակն ու արդյունավետությունը: Առավելևս, երբ խնդրո առարկա հսկողական ձևը մաքսային հսկողության իրականացման պատշաճության ապահովման համար ունի ծանրակշիռ նշանակություն:

§2. Արտագնա մաքսային ստուգումը՝ որպես մաքսային հսկողության համընդգրկուն ձև

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունն էական փոփոխություններ ներմուծեց նաև մաքսային հսկողության ձևերի համակցության մեջ: Ավելացվեցին հսկողական նոր ձևեր (*օրինակ՝ մաքսային դիտարկումը, բացատրությունների ստացումը*), իսկ գործող հսկողական ձևերի իրավական բովանդակությունն արդեն իսկ էական փոփոխությունների ենթարկվեց: Նշված իրավիճակը, իհարկե, պահանջում է լրացուցիչ գիտագործնական վերլուծությունների իրականացում առկա իրավակարգավորման բացերը կամ թերությունները վերհանելու և կարգավորման առավել ընդունելի տարբերակներ առաջադրելու իմաստով:

Միության օրենսգրքով սահմանված փոփոխություններից մեկն էլ վերաբերում էր ստուգման ինքնուրույն տեսակի՝ մաքսային ստուգման՝ որպես հսկողության առանձին ձևի նախատեսմանը, որը, ըստ էության, իր երկու՝ կամերալ և արտագնա ստուգման տարատեսակներով կոչված էր փոխարինելու Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 150.1-րդ հոդվածով (*այլևս չգործող*) նախատեսված

ապրանքների և տրանսպորտային միջոցների հետբացթողումային հսկողության ինստիտուտին:

Գոյություն ունեցող հսկողության ձևերի համակարգում մաքսային ստուգման կարևորությունը դժվար է գերազնահատել: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, մաքսային ստուգման հնարավորության ամրագրմամբ օրենսդիրն ընդլայնում է մաքսային հսկողության շրջանակներն այնքանով, որքանով այն ներկայումս չի սահմանափակվում սուկ մաքսային ձևակերպման ընթացքում ապրանքների և տրանսպորտային միջոցների ստուգմամբ, այլ ներառում է փաստաթղթերի և տվյալների արժանահավատության ստուգումը նաև ապրանքի բացթողումից հետո:¹¹⁷ Ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողությունը հանդիսանում է մաքսային օրենսդրության պահպանումն ապահովող ամենահեռանկարային ձևերից ու մաքսային վարչարարության իրականացման առաջնայնություններից մեկը¹¹⁸: Ապրանքներ տեղափոխող անձանց մոտ հետբացթողումային հսկողություն անցկացնելու հնարավորությունն իր մեջ կրում է նաև կանխարգելիչ և տարհամոզիչ բնույթ: Կանխարգելիչ՝ այն տեսակետից, որ այն հետ է պահում հայտարարագրում անարժանահավատ տեղեկություններ ներկայացնելուց, տարհամոզիչ՝ որ դրա շնորհիվ հայտարարատուները նախընտրում են չխուսափել սահմանված հարկային պարտավորություններից, քանի որ տեղյակ են հետբացթողումային հսկողության իրականացման հնարավորության մասին և այդպիսով հրաժարվում են մաքսային օրենսդրության հնարավոր խախտումներից:¹¹⁹ Ուշագրավ է նաև Գ.Վ.Մատվիենկոյի պնդումն առ այն, որ չնայած մաքսային ստուգման իրականացման համակարգվածությանը, ստուգման ենթակա անձանց նախնական իրազեկվածությունը, ստուգման ընթացքում կիրառվող առանձին

¹¹⁷ Տե՛ս Голубь А.А. Таможенная ревизия в системе форм таможенного контроля. Вестник АГТУ, 2006, № 5 (34), էջ 246:

¹¹⁸ Տե՛ս Милухова Н.К., Полежаева Н.В., Логистические системы в глобальной экономике. 2015, № 5, էջեր 538-540:

¹¹⁹ Տե՛ս Ապրանքների և տրանսպորտային միջոցների հետբացթողումային հսկողության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009 էջ 7: www.customs.am

միջոցները վկայում են այն մասին, որ մաքսային ստուգումն ուղղված է ոչ միայն խախտումների հայտնաբերմանը, այլ նաև դրանց կանխարգելմանը:¹²⁰

Իրականացվելով մաքսային ձևակերպումից և ապրանքի բացթողումից հետո՝ այն հնարավորություն է տալիս արդյունավետորեն կենսագործել մաքսային մարմինների հնարավորությունները, խնայել ժամանակը, նպաստում է վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարմանը: Այս իմաստով պետք է համաձայնել մասնագիտական գրականության մեջ տեղ գտած այն մոտեցմանը, որ մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակման, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության կարգավորման միջոցների արդյունավետության ապահովման համար պետք է ստուգումների իրականացման հիմնական ծանրությունը ընթացիկ մաքսային հսկողության շրջանակներից տեղափոխել դեպի ապրանքի բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողություն:¹²¹ Տեղին է հիշատակել նաև Ե.Յու.Գրաչեվայի պնդումն առ այն, որ հետագա հսկողությունը տարբերվում է տնտեսական և ֆինանսական գործունեության բոլոր կողմերի ուսումնասիրման խորությամբ, թույլ է տալիս բացահայտել նախնական և ընթացիկ հսկողության թերությունները:¹²²

Ընդ որում, Եվրասիական տնտեսական միությունում նույնպես մաքսային հսկողության ինստիտուտի հետագա զարգացման ուղղվածությունը հանգում է մաքսային հսկողությունը հնարավորության սահմաններում ընթացիկ փուլից հետագա փուլ տեղափոխելուն և դրա կառուցակարգերը կատարելագործելուն: Մասնավորապես, այդ մասին է վկայում 2015-2020 թթ. «Մաքսային Միության անդամ պետություններում մաքսային հսկողության շեշտադրումը հայտարարագրման և ապրանքների բացթողման փուլից ապրանքների հետբացթողման փուլ փոխադրելու սկզբունքի իրականացմանն ուղղված աշխատանքների հիմնական ուղղությունները հաստատելու մասին» Մաքսային Միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 17.09.2014թ. թիվ 12/3 որոշումը, որում ուղղակիորեն

¹²⁰ Տե՛ս Матвиенко Г.В. Государственный аудит. Право. Экономика. 2012. № 3, էջ 102:

¹²¹ Տե՛ս Агапова А.В. Таможенный аудит: государственный контроль или предпринимательская деятельность: Ученые записки Санкт-Петербургского имени В.Б.Бобкова филиала Российской таможенной академии. 2011, № 2 (39), էջ 18:

¹²² Տե՛ս Грачева Е.Ю. Проблемы правового регулирования государственного финансового контроля. ... Доктор юрид. наук. Москва, 2000, էջ 123:

շեշտադրվել է մաքսային հսկողության իրականացումը հայտարարագրման և ապրանքների բացթողման փուլից ապրանքների հետբացթողումային փուլ տեղափոխելու սկզբունքի իրացման ուղղությունները:¹²³

Ապրանքի բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության շրջանակներում, ըստ էության, քննարկման ու գնահատման առարկա են դառնում ստուգման ենթարկվող անձի՝ մաքսային հսկողության դիրքերից արժևորվող վարքագծի բոլոր դրսևորումները: Այս իմաստով կարելի է պնդել, որ ի տարբերություն հսկողության մյուս ձևերի՝ մաքսային ստուգումն իր կիրառման համընդգրկուն բնույթով ներառում է պարզաբանման ենթակա հարցադրումների անհամեմատ ավելի լայն համակցություն այնքանով, որքանով դրա շրջանակներում գնահատման առարկա է դառնում մի շարք իրավաբանական փաստերի առկայության հարցը: Բնականաբար, պայմանավորված արդյունքում առաջացող իրավական հետևանքներով՝ դրա իրականացումը ենթադրում է իրավակարգավորման որոշակիություն և կանխատեսելիություն, ինչը Մաքսային միության մաքսային օրենսդրության վերլուծության արդյունքներով կարելի է փաստել, որ համակողմանիորեն ապահովված չէ: Եվ սա այն պայմաններում, երբ քննարկվող հսկողական կառուցակարգով անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման իմաստով բավական ռիսկային կարգավորումներ են նախատեսված: Օրինակ, Միության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը մաքսային մարմիններին լիազորում է, *inter alia*, Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով արգելանք դնելու ապրանքների վրա կամ առգրավել ապրանքներ արտագնա մաքսային ստուգում անցկացնելու ժամկետի ընթացքում՝ այնպիսի գործողությունների կանխարգելման համար, որոնք ուղղված են այն ապրանքների օտարմանը կամ այլ միջոցով տնօրինմանը, որոնց նկատմամբ անցկացվում է արտագնա մաքսային ստուգում: Հետևապես, որպես խախտումների կանխարգելման գործիք՝ դրա իրականացման իրավական հիմքերն ակնհայտորեն պետք է առավել համակողմանի ապահովեն իրավական որոշակիության պահանջների կենսագործումը մաքսային մարմին-ստուգման ենթակա անձ հարաբերություններում:

¹²³ Ընդունվել է 17.09.2014թ. ուժի մեջ է մտել 02.01.2015թ.:

Մեր համոզմամբ, հսկողության իրականացման ցանկացած ձև ուղղակիորեն ենթադրում է դրա միջոցով պարզաբանման ենթակա հարցերի խիստ որոշակի շրջանակ, որոնք երբևիցե չեն կարող տարածական բնույթ կրել: Այլ կերպ ասած՝ պետք է օրենսդրորեն հստակ կարգավորված լինի, թե կոնկրետ ինչ հանգամանքներ պարզելու, բացահայտելու համար է իրականացվում հսկողության կոնկրետ ձևը: Այլապես կստացվի, որ հսկողության ձևերն իրենց առարկայական բովանդակությամբ և հետապնդած նպատակներով հստակորեն չեն տարբերակվի իրարից: Միաժամանակ, ակներև է, որ պարզաբանման ենթակա հարցերի այդ շրջանակը պետք է նախատեսվի սպառիչ լրիվությամբ, որպիսի կարգավորումը հնարավորինս համահունչ կլինի նաև նորմատիվ-իրավական ակտերի հակակոռուպցիայի գաղափարին: Իհարկե, հայեցողական լիազորությունն ինքնին բացասական երևույթ չէ հատկապես, երբ այն իրականացվում է օրենքով սահմանված ուղենիշային պահանջների պահպանմամբ: Բայցևայնպես, կարծում ենք, որ շատ ավելի նախընտրելի է հնարավորության սահմաններում ունենալ հստակ իրավակարգավորում՝ կարգավորման օբյեկտների սպառիչ ցանկով, ինչը հնարավորություն կտա ապահովել նաև ակնկալվող իրավական հետևանքների կանխատեսելիությունը:

Այս համատեքստում պետք է նկատի ունենալ, որ Միության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *արտագնա մաքսային ստուգումը մաքսային մարմնի կողմից իրականացվում է իրավաբանական անձի գտնվելու վայր, անհատ ձեռնարկատերի գործունեության իրականացման վայր և (կամ) նրանց գործունեության փաստացի իրականացման վայր այցելության ձևով (այսուհետ՝ ստուգման ենթակա անձի օբյեկտներ):*

Միաժամանակ, Միության օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասը ընդհանուր առմամբ մատնանշում է իրավաբանական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնց պարզաբանման կապակցությամբ իրականացվում է մաքսային ստուգում: Մասնավորապես, դրանք են՝

- 1) *ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու փաստը:*

2) ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված մաքսային հայտարարագրում և այլ փաստաթղթերում ներկայացված այն տեղեկությունների հավաստիությունը, որոնք ազդեցություն են ունեցել ապրանքների բացթողման մասին որոշում կայացնելու վրա.

3) պայմանականորեն բաց թողնված ապրանքների օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումների պահպանումը.

4) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համար Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը.

5) լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ պայմաններին անձանց համապատասխանությունը.

6) Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ մաքսային ընթացակարգերի պայմանների պահպանումը, որոնցով ձևակերպման դեպքում ապրանքները չեն ստանում Մաքսային միության ապրանքների կարգավիճակ.

7) այլ պահանջների կատարումը, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ¹²⁴.

Ինչպես տեսնում ենք, մաքսային ստուգմամբ ներառվող գնահատման ենթակա հանգամանքների ցանկը բավական տարողունակ է: Ընդ որում, վկայակոչված հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ դրա 3-րդ մասի 7-րդ կետը մաքսային մարմնի պաշտոնատար անձին, ըստ էության, ընձեռում է լիազորություն ստուգելու ինչպես Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ, այնպես էլ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ցանկացած պահանջի կատարումը: Մինչդեռ, մեր համոզմամբ, մաքսային ստուգմամբ պետք է գնահատական տրվի ստուգման ենթարկվող անձի գործունեությանը բացառապես մաքսային իրավունքի դիտանկյունից, ինչի իրականացումը կարգավորման նման պայմաններում կասկածի տակ է դրվում: Ստացվում է, որ մաքսային ստուգումը դառնում է իրավական լծակ

¹²⁴ Հատկանշական է, որ նշված նորմը նույն խմբագրությամբ ամրագրված է նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծում www.eaeunion.org:

գնահատման առարկա դարձնելու անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ցանկացած պահանջի պահպանվածության հարցը:

Ակներև է, որ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պահանջը, *inter alia*, ներառում է նաև հարկային օրենսդրությամբ սահմանված կարգադրագրերը, որոնք բնականաբար, պետք է ստուգվեն հարկային մարմնի կողմից և մաքսային ստուգման շրջանակներում արժևորվել չեն կարող: Նման պայմաններում գտնում ենք, որ օրենսդրությամբ պետք է ապահովվի առավել համակողմանի և տարբերակված իրավակարգավորում մաքսային և հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների միջև, ինչը ողջամտորեն պահանջում է սպառիչ լրիվությամբ սահմանել մաքսային ստուգման առարկա համարվող իրավաբանական փաստերը՝ դրանց շրջանակում ներառելով բացառապես մաքսային հսկողության դիրքերից արժևորվող հանգամանքները:

Ասվածն առավել հիմնավորվում է հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միության օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն ուղղակիորեն սահմանում է, որ մաքսային մարմինների կողմից, ի թիվս այլնի, ստուգվում է նաև մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համար Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը: Թեպետև, նշված դրույթի շրջանակներում նույնպես չի շեշտադրվել մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջի պահպանման գաղափարը, այսուհանդերձ, դրա առկայության պայմաններում 7-րդ կետով սահմանված պահանջը (*այլ պահանջների կատարումը, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ*) դառնում է ավելորդ:

Բացի այդ, օրինադրույթի վկայակոչված ձևակերպումն, ըստ էության, որևէ տարբերակում չի դնում կամերալ և արտագնա մաքսային ստուգումներով պարզման ենթակա հանգամանքների միջև, որպիսի մոտեցումը, նույնպես, գտնում ենք, չի կարող թույլատրելի համարվել: Մաքսային ստուգման երկու տեսակների բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք չեն կարող ողջամտորեն միտված լինել միևնույն պահանջների վերհանմանը: Հակառակ դեպքում դրանցից որևէ մեկի

ընտրությունը մաքսային մարմնի համար կկրի խիստ կամայական, սուբյեկտիվ-հայեցողական բնույթ այնքանով, որքանով առարկայացված չի լինի որևէ բովանդակային ելակետով: Ուստի, որպես մաքսային ստուգման նշված երկու տեսակների միջև տարբերական ցուցիչ՝ առաջարկում ենք դիտարկել բացառապես մաքսային փաստաթղթերի բովանդակային վերլուծության և մաքսային օրենսդրության նորմերի պահանջների հետ դրանց համադրման արդյունքում խախտման առկայության մասին եզրահանգման գալու հնարավորությունը: Նման իրավիճակում մաքսային մարմնի համար ակնհայտ կլինի, թե մաքսային ստուգման որ տեսակն է անհրաժեշտ կոնկրետ խնդիրը կենսագործելու համար, որով կապահովվի նաև կոնկրետ խնդրի լուծման համար մաքսային հսկողության համարժեք ձև կիրառելու գաղափարը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև Միության օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված դրույթն առ այն, որ մաքսային ստուգման ժամանակ կարող են կիրառվել նաև հսկողության այլ ձևեր: Ինչպես արդեն նշվեց, մաքսային հսկողության իրականացման յուրաքանչյուր ձև ենթադրում է դրանով հետապնդվող կոնկրետ որոշակի նպատակ և ակնկալվող արդյունքներ՝ բնականաբար ունենալով նաև հարաբերական ինքնուրույնության հատկանիշներ: Հսկողության մեկ ձևի կիրառումն ինքնին չի կարող ենթադրել նաև այլ ձևերի կիրառման հնարավորություն առանց վերջիններիս վերաբերող օրենսդրական պահանջների պահպանման: Թերևս այս պատճառով է, որ 2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքի 150.1-րդ հոդվածով խնդրո առարկա ինստիտուտն անվանվում էր հետբացթողումային հսկողություն, որի շրջանակներում, բնականաբար, հնարավոր էր հսկողական մի քանի ձևերի կիրառում:

Այլ կերպ ասած՝ ինքնին մաքսային ստուգման անցկացման փաստը դեռևս չի նշանակում, որ դրա շրջանակներում կարող են ազատորեն կիրառվել հսկողության այլ ձևեր առանց վերջիններիս իրականացման օրենսդրական վավերապայմանների պահպանման: Օրինակ՝ անձնական մաքսային զննության համար ուղղակիորեն պահանջվում է նաև համապատասխան որոշման առկայություն մաքսային մարմնի ղեկավարի (տեղակալի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից:

Բնական է, որ ստուգման ընթացքում անձնական մաքսային զննությունը՝ որպես հսկողության ձև, կիրառելու համար անհրաժեշտ է պահպանել նաև դրա ընթացակարգը: Մինչդեռ, Միության օրենսգիրքը որևէ կերպ չի կարգավորում այն հարցը, թե մաքսային ստուգման ընթացքում հսկողության այլ ձևերի կիրառումն ինչպիսի ընթացակարգով է իրականացվում: Նշված հարցադրումն ունի ելակետային նշանակություն այն իմաստով, որ օրինակ, անձնական մաքսային զննության կամ, ասենք, շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում Միության օրենսգրքով սահմանվում են դրա օրինականությունն ու անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովող առավել գործուն երաշխիքներ: Բնականաբար, ակներև է, որ նշված երաշխիքներն ամբողջապես պետք է պահպանվեն նաև մաքսային ստուգում իրականացնելիս: Բայցևայնպես, գտնում ենք, որ նշված հանգամանքը պետք է ստանար ուղղակի իրավական ամրագրում:

Միության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում արդյունավետորեն կարգավորված չեն նաև մաքսային ստուգման ժամկետի երկարաձգման հետ կապված հարցերը, որպիսի իրավիճակը, մեր համոզմամբ, խնդրահարույց է ստուգման ենթարկվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իմաստով: Բանն այն է, որ Միության օրենսգիրքը չի մատնանշում մաքսային ստուգման ժամկետի երկարացման իրավական հիմքերը: Այսպես, Օրենսգրքի 132-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ պարբերությունն ուղղակիորեն ամրագրում է, որ արտագնա մաքսային ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել 1 (մեկ) ամսով՝ ստուգումն իրականացնող մաքսային մարմնի որոշմամբ: Մինչդեռ, դրա իրավական հիմքերի ու հիմնավորման մասով որևէ այլ իրավակարգավորում Միության օրենսդրությամբ սահմանված չէ:

Հիշյալ հանգամանքն ունի ելակետային նշանակություն ստուգման ենթակա անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսակետից: Խնդիրն այն է, որ հսկողական կոնկրետ ձևի իրականացման վավերապայմաններն ակնհայտորեն պետք է որոշակի լինեն և չեն կարող թողնվել մաքսային մարմնի բացարձակ հայեցողությանը: Այլապես, մեծ է մտավախությունը, որ յուրաքանչյուր դեպքում մաքսային ստուգման ժամկետն անհարկի, առանց անհրաժեշտության կարող է

երկարաձգվել, ինչը ստուգման ենթակա անձանց մոտ կարող է ուղղակիորեն հանգեցնելով բնականոն առևտրային գործունեության խաթարմանը: Ասվածը հիմնավորվում է հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ արտագնա մաքսային ստուգման ժամկետի ընթացքում թույլատրվում է նաև արգելանք դնել ապրանքների վրա կամ առգրավել դրանք: Բնականաբար, նման երկարաձգման պարագայում նշված ապրանքները շարունակում են մնալ առգրավված:

Քննարկվող տեսանկյունից իրավական լուծման շատ ավելի բազմակողմանի մոտեցում է նախատեսվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, որով ստուգման ժամկետի երկարաձգմանն առաջադրվում են կոնկրետ որոշակի պահանջներ:¹²⁵

Այսպես, նշված օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր (...):

Ինքնին հասկանալի է, որ նշված իրավակարգավորմամբ օրենսդիրը նախատեսել է ստուգման ժամկետի երկարաձգման առավել բարդ իրավական ընթացակարգ, որը բոլոր դեպքերում համաչափ գործիք է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսակետից: Հետևապես, գտնում ենք, Միության օրենսգրքով նույնպես պետք է ամրագրվեր ստուգման ժամկետի երկարացման հիմնավորվածության պահանջը:

Միության օրենսդրությամբ համակողմանի կարգավորում չեն ստացել նաև արտագնա մաքսային ստուգման կասեցման հետ կապված հարցերը, որպիսի իրավիճակը, մեր համոզմամբ, նույնպես պահանջում է խնդրի լուծում օրենսդրական կարգավորման մակարդակով: Ընդ որում, պետք է նկատել, որ Միության օրենսգիրքն այս հարցի առնչությամբ որոշակի իրավակարգավորում նախատեսում է:

¹²⁵ Հարկ է նկատել, որ նշված օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն օրենքը չի կարգավորում «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մաքսային հսկողության հետ կապված հարաբերությունները:

Այսպես, Միության օրենսգրքի 132-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ պարբերությունը մաքսային ստուգման ժամկետի կասեցումն ուղղակիորեն կապում է ուսումնասիրություններ կամ փորձաքննություններ անցկացնելու, Մաքսային միության անդամ պետությունների կամ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններ հարցումներ ուղարկելու, արտագնա մաքսային ստուգումն անցկացնելու համար ստուգման ենթակա անձի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի վերահաստատման, ստուգման տվյալ ժամանակահատվածին առնչվող և արտագնա մաքսային ստուգման արդյունքների հիման վրա կազմվող եզրահանգումների վրա ազդող լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության առկայության հետ:

Միաժամանակ, վկայակոչված իրավադրույթն ամրագրում է նաև, որ մաքսային ստուգման կասեցման ժամկետն ու կարգը սահմանվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Նշված հարաբերությունների կարգավորմանը վերաբերող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 134-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն սահմանում է, որ արտագնա մաքսային ստուգման կասեցումը և վերսկսումը ձևակերպվում են վերադաս մաքսային մարմնի ղեկավարի որոշմամբ՝ ստուգում իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձի գրավոր հիմնավորման հիման վրա:

Հիշյալ օրինադրույթով նախատեսված իրավակարգավորումից բխողովին չի բխում, որ արտագնա մաքսային ստուգման կասեցումն անպայմանորեն պետք է կապվի Միության օրենսգրքով սահմանված վավերապայմանների հետ: Մինչդեռ, Միության օրենսգրքը մաքսային արտագնա ստուգման կասեցումը պայմանավորում է բացառապես դրանց ի հայտ գալով: Ուստիև, գտնում ենք, որ անհրաժեշտ է Օրենքում ուղղակիորեն սահմանել, որ ստուգում իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորումն անպայմանորեն պետք է տեղեկություններ պարունակի Միության օրենսգրքի 132-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանված վավերապայմաններից առնվազն մեկի առկայության մասին: Հակառակ դեպքում, ստացվում է, որ ներպետական օրենսդրությամբ բավարար իրավական

որոշակիությամբ երաշխավորված չեն Միության օրենսգրքով նախատեսված պահանջները: Բնական է, որ օրենսդրական կարգավորման առկա պայմաններում արտագնա մաքսային ստուգման ժամկետի կասեցման յուրաքանչյուր դեպք պետք է ուղղակիորեն կապվի Օրենսգրքում ամրագրված պայմաններից առնվազն մեկի հետ: Հակառակ դեպքում, դրա իրականացումն ինքնին պետք է դիտարկվի ոչ իրավաչափ:

Միության Օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ բացառապես օրենսդրությամբ սահմանված ստուգման ենթակա անձանց խիստ որոշակի շրջանակի նկատմամբ է թույլատրելի հսկողության քննարկվող կառուցակարգի կիրառումը: Այլ կերպ ասած՝ Միության մաքսային օրենսդրությամբ սահմանված է իրավակարգավորման այն տրամաբանությունը, որ հսկողության որևէ ձև կիրառելու համար անհրաժեշտ է նախ և առաջ արդեն իսկ առկա, գոյություն ունեցող իրավահարաբերություն ստուգվողի և հանրային իշխանության անունից հանդես եկող մաքսային մարմնի միջև, որը կանոնակարգվում է մաքսային օրենսդրության նորմերով:

Այսպես, Միության օրենսգրքի 132-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *ստուգման ենթակա անձի կողմից ներկայացված տվյալների հավաստիությունը հաստատելու անհրաժեշտության դեպքում մաքսային մարմինը կարող է արտագնա մաքսային հանդիպակաց ստուգում իրականացնել այն անձանց նկատմամբ, որոնք ստուգման ենթակա անձի հետ կապված են ապրանքների հետ կապված գործարքներով (գործառնություններով):*

Նշված իրավադրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ առանձին դեպքերում մաքսային ստուգումը կարող է իրականացվել նաև այնպիսի տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք մաքսային մարմնի հետ որևէ իրավահարաբերության մեջ չեն գտնվում: Մինչդեռ, վերջիններս ոչ միայն մաքսային օրենսդրության դիրքերից արժևորվող գործառնություններ չեն իրականացնում, այլ նաև մատնանշված չեն Միության օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասում՝ որպես ստուգման ենթակա անձինք: Արդյունքում ստացվում է այնպես, որ վերջիններիս մոտ

անցկացվող ստուգման իրավական հիմքերը Օրենսգրքով նախանշված չեն բավարար իրավական որոշակիությամբ:¹²⁶

Ասվածը կարևորվում է հատկապես նշված անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Ակներև է, որ ստուգման ենթակա անձի հետ ապրանքի հետ կապված գործարքներով առնչություն ունեցող անձի մոտ իրականացվող ստուգումն ամբողջ ծավալով ենթադրում է այն բոլոր կառուցակարգերի կիրառումը, որոնք կարող են առկա լինել, օրինակ՝ հայտարարատուների մոտ ստուգում իրականացնելիս: Խոսքը վերաբերում է հատկապես ապրանքների վրա արգելանք դնելուն կամ դրանց առգրավմանը: Խնդիրն այն է, որ դեպքերի մեծամասնությամբ ստուգման ենթակա անձի հետ գործարքներով կապված անձինք հանդես են գալիս որպես բարեխիղճ ձեռքբերողներ, որոնք կոնկրետ ապրանքը ձեռքբերելիս չգիտեին և պարտավոր էլ չէին իմանալու, որ դրա տեղափոխման ընթացքում կամ դրանից հետո խախտվել են մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջները: Մինչդեռ, առկա իրավակարգավորմամբ խնդիրն այնպիսի լուծում է ստացել, որ նշված հանգամանքը չունի իրավական որևէ նշանակություն: Արդյունքում ստացվում է այնպես, որ օրինակ՝ ցանկացած առևտրային կամ ոչ առևտրային իրավաբանական անձ, ով օրինաչափորեն և բարեխիղճորեն ենթադրյալ օրինախախտ տնտեսավարող սուբյեկտից ձեռք է բերել ապրանք, կարող է հայտնվել ծայրահեղ անբարենպաստ վիճակում, երբ վերջինիս թույլ տված խախտման հետևանքով մաքսային մարմիններն իր մոտ իրականացվող արտագնա մաքսային ստուգումների արդյունքում առգրավեն ապրանքները կամ արգելանք դնեն դրանց վրա:

Ընդ որում, պետք է նկատել, որ բարեխիղճ ձեռքբերողների մասով իրավակարգավորման տարբերակված մոտեցումը Միության օրենսդրությանն ամենևին խորթ չէ: Մասնավորապես, Միության օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն ամրագրում է, որ *մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուների, հարկերի վճարման համապարփ պարտավորություն է առաջանում անօրինական կերպով ապրանքները տեղափոխող*

¹²⁶ Հատկանշական է, որ միայն 2016 թվականի տվյալներով իրականացված հետբացթողումային հսկողության արդյունքներով ստուգվել է շուրջ 128 գործարք, որոնց արդյունքում հաշվարկվել է շուրջ 455.312.973 ՀՀ դրամ գումար: Տե՛ս Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության պաշտոնական կայք www.customs.am

անձանց, անօրինական տեղափոխման մեջ մասնակցող անձանց համար, եթե նրանք գիտեին կամ պետք է իմանային այդ տեղափոխման անօրինականության մասին, իսկ Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման դեպքում՝ նաև այն անձանց համար, որոնք սեփականության կամ տիրապետման իրավունքով ձեռք են բերել անօրինական ներմուծված ապրանքները, եթե ձեռքբերման պահին նրանք գիտեին կամ պետք է իմանային ներմուծման անօրինականության մասին:

Ինչպես տեսնում ենք, Միության օրենսգիրքը մաքսային վճարների վճարման պարտավորությունը նախատեսում է միայն անբարեխիղճ ձեռքբերողների համար: Մինչդեռ, բարեխիղճ ձեռքբերողի մասով նման պարտավորություն առկա չէ:

Խնդրի մասին առավել համապարփակ պատկերացում է տալիս հանրային իրավահարաբերություններում համանման այլ կառուցակարգերի իրավական հիմքերի ուսումնասիրումը: Այսպես, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ը) կետը հարկային մարմիններին լիազորություն է ընձեռում ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով իրականացնել գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակաց՝ միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումներ:

Վկայակոչված իրավադրույթի բովանդակային վերլուծությունից կարելի է առանձնացնել հանդիպակաց ստուգում իրականացնելու իրավաչափության առնվազն երկու վավերապայման.

հանդիպակաց ստուգումը պետք է անպայմանորեն կապված լինի ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակի հետ:

հանդիպակաց ստուգումը պետք է անպայմանորեն կապված լինի միայն համապատասխան ապրանքի ձեռքբերմանն ուղղված տվյալ տվյալ գործարքի կատարման օրինականության հետ:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն հարկային իրավահարաբերություններում կիրառվող հանդիպակաց ստուգման, մաքսային գործի բնագավառում արտագնա մաքսային հանդիպակաց ստուգումը որևէ ելակետով սահմանափակված չէ, ինչը, մեր համոզմամբ, թույլատրելի լուծում չի կարող համարվել: Այն պետք է խարսխվի հետապնդվող նպատակի և կիրառվող գործիքի համաչափության գաղափարի վրա: Առավել ևս, երբ Միության օրենսգրքի 132-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ արտագնա մաքսային հանդիպակաց ստուգումը արտապլանային ստուգում է, որը նույն հոդվածի 7-րդ մասի ուժով իրականացվում է առանց դրանք անցկացնելու պարբերականության սահմանափակումների: Նման պայմաններում ակնհայտ է, որ արտագնա մաքսային ստուգումն արդյունավետ հսկողական գործիք է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձի, ներառյալ բարեխիղճ երրորդ անձի իրավական կարգավիճակն էականորեն սահմանափակելու իմաստով: Մինչդեռ, խնդրո առարկա պարագայում մաքսային մարմնին վերապահված լիազորությունը չունի իրականացման բովանդակային ուղենիշներ: Ուստի, առաջարկում ենք կոնկրետացնել արտագնա հանդիպակաց ստուգման իրականացման իրավական հիմքերը՝ դրանց շրջանակում նախատեսելով մասնավորապես երկու վավերապայման.

արտագնա մաքսային հանդիպակաց ստուգման ընթացքում ստուգման ենթակա անձի կողմից համապատասխան ապրանքի ձեռքբերման հիմքը կազմող գործարքը պետք է քննարկի բացառապես մաքսային օրենսդրությամբ սահմանված նորմերի պահանջների պահպանման տեսանկյունից:

արտագնա մաքսային հանդիպակաց ստուգման ընթացքում պետք է գնահատվի ստուգման ենթակա անձի կողմից գործարքի արդյունքում ձեռքբերված ապրանքների առգրավման կամ դրանց վրա արգելանք դնելու իրավաչափության հարցը,

Այսպիսով, մաքսային ստուգման իրականացման ընթացակարգային պահանջների կանոնակարգումն ունի չափազանց կարևոր նշանակություն մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության իմաստով: Այն հնարավորություն է տալիս վերջիններիս մոտ ձևավորել վստահություն մաքսային քաղաքականության

Կենսագործման միջոցների կիրառման օրինականության նկատմամբ, նպաստում է մաքսային իրավահարաբերությունների կայուն զարգացմանը, ինչի նշանակությունն արտաքին տնտեսական գործունեության կանոնակարգվածության ապահովման հարցում դժվար է գերազնահատել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքի կառուցվածքային բաղադրիչներում արված գիտագործնական բնույթի եզրահանգումները՝ հարկ է վերստին արձանագրել, որ արդի աշխարհաքաղաքական իրավիճակում Հայաստանի Հանրապետության մաքսային իրավունքի ինստիտուտներին վերաբերող գիտագործնական հենքի ձևավորումը և համալրումը դարձել են հրատապ անհրաժեշտություն: Մտահոգությամբ պետք է արձանագրել, որ, թերևս, նաև հենց այդ բազայի սակավության պատճառով է, որ մաքսային մարմին-հայտարարատու հարաբերություններում իրավական կարգավորման կոնկրետ ուղենիշների փոխարեն հաճախ կիրառվում են իրադրային և համակողմանիորեն չմշակված լուծումներ, որի արդյունքը իրավակիրառ պրակտիկայում առաջացող բազմապիսի խնդրահարույց իրավիճակներ են: Խնդիրն ակնհայտորեն համակողմանի է և իրավականից զատ, պահանջում է նաև ինստիտուցիոնալ և համալիր լուրջ փոփոխություններ մաքսային վարչարարության շրջանակներում: Այսուհանդերձ, խնդրո առարկա հետազոտության շրջանակերում, բնականաբար, առաջնային ուշադրություն է դարձվել մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքներն ու օրինական շահերն առավել ընդգծված շոշափող մաքսային հսկողության ինստիտուտին և արվել են դրա կատարելագործմանն ուղղված եզրահանգումներ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Անհրաժեշտ է ներպետական օրենսդրությամբ հստակեցնել մաքսային հսկողության իրավական բնույթն ու բովանդակությունը՝ որպես դրանց բացահայտման չափանիշ գնահատման առարկա դարձնելով այն իրողությունը, որ մաքսային սահմանին պետության կողմից իրականացվող կառուցակարգերի համակցությունը բացառապես հետապնդում է մաքսային օրենսդրության պահպանման նպատակ, որպիսի պայմաններում անհրաժեշտ է հստակորեն զատորոշել «հսկողություն» և «վերահսկողություն» եզրերի սահմանները: Ընդ որում, այս հարցում եզրութաբանական միասնություն ապահովված չէ ոչ միայն Միության օրենսգրքով, այլ նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծով, և

հաճախ չէ, որ հիշյալ եզրույթների կիրառումն արդարացված է կոնկրետ բովանդակային չափանիշներով: Տեսական գրականության մեջ առկա մոտեցումների ընդհանրացումը թույլ է տալիս պնդելու, որ վերահսկողության կառուցակարգի դեպքում, բացի կոնկրետ գործողության՝ օրենքի պահանջների հետ համապատասխանելիության հարցը գնահատման առարկա դարձնելուց, քննարկման առարկա է դառնում նաև դրա նպատակահարմարությունը և արդյունավետությունը: Մինչդեռ, հսկողության պարագայում հիշյալ հատկանիշներն ամենևին չեն գնահատվում, այլ բացառապես քննարկվում է կոնկրետ գործողության համապատասխանությունն օրենքի պահանջներին: Նկատի ունենալով մաքսային հսկողությամբ հետապնդվող նպատակները՝ աշխատանքում առաջարկվել է դրա շրջանակում ներառվող միջոցառումների համակցությունն օրենսդրորեն դիտարկել որպես մաքսային հսկողություն:

2. Աշխատանքում առաջարկվել է գերատեսչական վերահսկողության իրականացման համար ընդհանուր առմամբ սահմանել եռամյա ժամկետ՝ նկատի ունենալով այն, որ գերատեսչական վերահսկողության և մաքսային հսկողության ինստիտուտների միջև առկա է անխզելի ու օբյեկտիվ կապ: Նման պայմաններում գերատեսչական վերահսկողությունն էլ պետք է ողջամտորեն սահմանափակվեր մաքսային հսկողության համար սահմանված ժամկետով: Հակառակ դեպքում, գերատեսչական վերահսկողության ժամկետները չեն թղթակցում մաքսային հսկողության համար սահմանված ժամկետների հետ այն դեպքերում, երբ օրինակ, մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի որոշումը գերատեսչական վերահսկողության կարգով չեղյալ ճանաչելուց (փոփոխելուց) հետո չի պահանջվում մաքսային գործի բնագավառում նոր որոշման ընդունում: Մինչդեռ, Միության մաքսային օրենսդրությունը գերատեսչական վերահսկողության դեպքում միայն նշված դեպքերի հետ է կապում եռամյա ժամկետի գործողությունը:

3. Սուբյեկտ-գործառույթ-լիազորություն եռամիասնականության համատեքստում անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել մաքսային հսկողության ինստիտուտի դերը՝ այն դիտարկելով որպես մաքսային մարմինների գործառույթ: Ընդ որում, այս

համատեքստում աշխատանքում կոնկրետացվել են նաև մաքսային հսկողության խնդիրներն ու նպատակները:

4. Կիոտոյի կոնվենցիային համահունչ՝ առաջարկվել է մաքսային օրենսդրությամբ նախատեսել «Մաքսազերծման» ինստիտուտը՝ դրա շրջանակներում ներառելով մաքսային հայտարարագրումը և որոշակի մաքսային ընթացակարգով ապրանքի մաքսային ձևակերպումը:

5. Անհրաժեշտ է ներպետական օրենսդրությամբ առավել հստակ կարգավորել ռիսկ եզրույթի բովանդակությունը՝ այն կապելով բացառապես մաքսային օրենսդրության դրույթի խախտման հավանականության հետ: Հատկանշական է, որ համանման լուծում ամրագրված է նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծում: Միաժամանակ, առաջարկվել է հակազդման ենթակա խախտումների համակարգում հստակորեն սահմանել մաքսատուրքի զգալի չափի հաշվարկման շեմը:

6. Աշխատանքում առաջարկվել է առավել հստակ կարգավորել մաքսային մարմինների պահանջի հիման վրա բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ձեռքբերման ընթացակարգը՝ վերացնելով խնդրո առարկա հարցի վերաբերյալ Օրենքի «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի միջև առկա հակասությունը, մասնավորապես այն համատեքստում, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով ընդհանուր առմամբ նախատեսված է այն սկզբունքը, որ բանկային գաղտնիքը տրամադրվում է բացառապես դատական համապատասխան ակտի հիման վրա:

Մինչդեռ, Միության օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ *մաքսային մարմինների կողմից հարցման դեպքում՝ մաքսային միության բանկերը և մյուս վարկային կազմակերպությունները տրամադրում են մաքսային ստուգում անցկացնելու համար անհրաժեշտ, այդ թվում՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններն ու փաստաթղթեր կազմակերպության հաշիվներում առկա դրամական միջոցների շարժի վերաբերյալ՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:*

Համանման իրավակարգավորում սահմանված է նաև Օրենքի 125-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ մաքսային մարմիններն իրավունք ունեն հարցում

կատարելու բանկերին և բանկային գործարքներ իրականացնող կազմակերպություններին մաքսային հսկողության ենթակա անձանց արտաքին տնտեսական գործունեությանը վերաբերող՝ մաքսային հսկողություն իրականացնելու համար դրամական հոսքերի վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու նպատակով: Հետևապես, առաջարկվել է վերացնել Օրենքում առկա հակասությունը՝ նախատեսելով բանկային գաղտնիքի պաշտպանության հուսալի իրավական երաշխիքեր:

7. Հաշվի առնելով սուբյեկտ-գործառույթ-լիազորություն կապի լիարժեք ապահովման օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ աշխատանքում հստակեցվել է մաքսային հսկողության դերը մաքսային մարմինների իրավասության շրջանակներում: Ակներև է, որ նշված խնդրի որոշարկուն էական նշանակություն ունի մաքսային մարմինների գործառույթների սահմանման հարցում: Մաքսային հսկողության շրջանակներում ներառվող գործառույթությունների բնույթը հաշվի առնելով՝ աշխատանքում եզրահանգում է կատարվել այն դիտարկելու որպես մաքսային մարմնի խնդիր, որով ապահովվում է մաքսային օրենսդրության նպատակների կենսագործումը: Նման հստակ սահմանազատումն անհրաժեշտ որոշակիություն է հաղորդում մաքսային մարմինների գործառույթների համակարգման հարցում:

8. Առանձին գնահատման առարկա են դարձել նաև մաքսային հսկողության իրականացման սկզբունքները, մասնավորապես, օրենսդրությամբ սահմանված դրույթների միասնական կիրառումը՝ որպես հիմնարար գաղափար, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի այլ դրույթներում հետևողականորեն առարկայացնելու գաղափարը: Մասնավորապես, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 86-րդ, 78-րդ և 74-րդ հոդվածների բովանդակային-համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսդրությամբ սահմանված է մաքսային մարմնի կողմից գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի սահմանումը մերժելու մասին ընդունվող վարչական ակտերի երկու տեսակ՝ «մերժման եզրակացություն» և որոշում «մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու» վերաբերյալ: Մինչդեռ, նշված երկու որոշումների միջև իրենց կիրառական նշանակությամբ առկա չէ որևէ տարբերակում, որը, գտնում ենք, մաքսային

հսկողության իրականացման ժամանակ կարող է հարուցել իրավական որոշակիության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակներ: Դրանով պայմանավորված՝ առաջարկվել է վերացնել հիշյալ հակասությունը և սահմանել, որ ապրանքի մաքսային արժեքը որոշվում է մաքսային մարմնի կողմից կայացվող մեկ վարչական ակտի շրջանակներում:

9. «Շինությունների և տարածքների մաքսային տեսազննում» հսկողության ձևի կիրառումը կարգավորող օրինադրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ Միության օրենսդրությամբ համակողմանի կարգավորված չեն նաև շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ժամկետներին վերաբերող հարցերը: Պարզապես, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 130-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ տարածքների և շինությունների մաքսային զննումն իրականացվում է նվազագույն բավարար ժամանակահատվածում: Օրենսդրությամբ որևէ կերպ հստակեցված չէ նվազագույն բավարար ժամանակահատվածի հասկացության բովանդակությունը: Ուստի, դրանով պայմանավորված՝ առաջարկվել է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսել իրավադրույթ, որի համաձայն՝ մաքսային տեսազննումը պետք է իրականացվի Մաքսային միության մաքսային օրենսգրքի 119-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետներում, բացառությամբ՝

մաքսային տեսազննման նպատակով շինություններ և տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման կամ ապրանքների կամավոր ներկայացումից հրաժարվելու պարագայում.

երբ ապրանքների նույնականացման համար պահանջվում է շինություններում և տարածքներում այնպիսի գործողությունների իրականացում, որոնք չեն կարող ավարտվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

երբ մաքսային տեսազննման ենթակա շինությունների և տարածքների չափերը գերազանցում են 1000 քմ²:

Ընդ որում, պետք է նկատել, որ ներպետական օրենսդրությամբ նման բացառություններ սահմանելու հնարավորությունը նախանշված է հենց Միության օրենսգրքով: Դրան համապատասխան, նշված բացառություններն ամրագրված են

նաև «Մաքսային կարգավորման մասին» ՌԴ օրենքում և «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենքում:

10. Հաշվի առնելով գերատեսչական վերահսկողության և մաքսային հսկողության ինստիտուտների միջև առկա անխզելի ու օբյեկտիվ կապը՝ գտնում ենք, որ գերատեսչական վերահսկողությունն էլ պետք է ողջամտորեն սահմանափակվեր մաքսային հսկողության համար սահմանված ժամկետով: Հակառակ դեպքում, գերատեսչական վերահսկողության ժամկետները չեն թղթակցում մաքսային հսկողության համար սահմանված ժամկետների հետ այն դեպքերում, երբ օրինակ, մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի որոշումը գերատեսչական վերահսկողության կարգով չեղյալ ճանաչելուց (փոփոխելուց) հետո չի պահանջվում մաքսային գործի բնագավառում նոր որոշման ընդունում: Մինչդեռ, Միության մաքսային օրենսդրությունը գերատեսչական վերահսկողության դեպքում միայն նշված դեպքերի հետ է կապում եռամյա ժամկետի գործողությունը, ինչը, գտնում ենք, ընդունելի չէ մաքսային իրավահարաբերություններում կայունության և որոշակիության ապահովման տեսակետից:

11. Միության օրենսգրքով շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում որևէ կերպ կարգավորված չէ նաև շինությունները և տարածքները փակ լինելու դեպքում մաքսային մարմնի գործողությունների ընթացակարգը: Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորման առարկայի շրջանակում ներառվում են բացառապես շինություններ և տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման կապակցությամբ մաքսային մարմնի կողմից հարկադրաբար նշված տարածքներ մուտք գործելու ընթացակարգային հարցերը: Աշխատանքում առաջարկվել է նման դեպքերը կարգավորել նույն հոդվածի առանձին մասով՝ նախատեսելով այս դեպքում նույնպես տեսագրությամբ նշված տարածքներ մուտք գործելու ընթացակարգ:

12. Աշխատանքում առաջարկվել է որոշակիորեն փոփոխել մաքսային հսկողության գոյություն ունեցող ձևերի համակարգը: Միաժամանակ, արվել են նաև դրանց կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Մասնավորապես, օրենսդրական գործող կարգավորման շրջանակներում չեն նախատեսվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ մաքսային տեսազննմանը ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց մասնակցությունը, այդ ընթացքում դիտողությունների և առարկությունների ներկայացումը և այլն: Եվ սա այն պայմաններում, երբ Միության օրենսգիրքը շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում առավել ակնառու երաշխիքներ (հրահանգչական ցուցումի առկայություն, ընթերակաների ներկայություն և այլն) է նախատեսում: Ակներև է, որ հսկողական հիշյալ ձևի կիրառման պարագայում անձանց իրավունքների խախտման հավանականությունը բավականաչափ մեծ է: Հետևապես, մեր համոզմամբ, նշված սկզբունքային հարցերը պետք է առանձին և համակողմանի կարգավորում ստանան Միության օրենսգրքով:

13. «Շինությունների և տարածքների մաքսային տեսազննում» հսկողական ձևի շրջանակներում էական նշանակություն ունի դրա օրինականության ապահովման նկատմամբ հսկողության իրականացումը: Ըստ էության, որպես դրա երաշխավորման գործիք՝ Միության օրենսգրքով նախատեսվել է դատախազին ծանուցելու պարտականությունն այն դեպքերում, երբ ստուգման ենթակա անձի կողմից շենք-շինություններ մուտք գործելու հնարավորությունը խոչընդոտվում է: Մինչդեռ, նշված ծանուցման իրականացման կարգը և ժամկետները Միության օրենսգրքով կանոնակարգված չեն, ինչը, ըստ էության, էապես նվազեցնում է նշված իրավական գործիքի արդյունավետությունը: Ակներև է, որ անարդյունավետ է այն գործիքի կիրառումը, որի գործնական նշանակությունը որևէ կերպ չի առարկայացվում:

Առավելևս, երբ մաքսային հսկողության իրականացման օրինականության նկատմամբ հսկողությունը դուրս է դատախազության սահմանադրաիրավական լիազորությունների շրջանակից:

14. Ավելորդ չէ հիշատակել նաև այն իրողությունը, որ Միության օրենսգրքով կարգավորված չէ շինությունները և տարածքները փակ լինելու դեպքում մաքսային մարմնի գործողությունների ընթացակարգը: Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորման առարկայի շրջանակում ներառվում են բացառապես շինություններ և տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման

կապակցությամբ մաքսային մարմնի կողմից հարկադրաբար նշված տարածքներ մուտք գործելու ընթացակարգային հարցերը: Գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ նման դեպքերը կարգավորել նշված հոդվածի առանձին մասով՝ նախատեսելով այս դեպքում նույնպես ընթերականների ներկայությամբ նշված տարածքներ մուտք գործելու ընթացակարգ:

15. Առհասարակ, պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում գործող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի մի մասն ընդունվել է 2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքի գործողության պայմաններում և համարժեքորեն չի արտացոլում միութենական և կոնվենցիոնալ մաքսային իրավակարգավորումները: Դիցուք, Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասով նախանշված է պահանջ առ այն, որ բնակելի շինություններում մաքսային տեսազննման իրականացում չի թույլատրվում: Պետք է նկատել, սակայն, որ «Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 24.03.2001թ. թիվ 236 որոշման 46-րդ կետն ընդհանուր առմամբ մաքսային մարմիններին ընձեռում է իրավասություն մաքսային հսկողության իրականացման նպատակով մուտք գործելու ֆիզիկական անձանց բնակարաններ: Մասնավորապես, հիշյալ կետի համաձայն՝ *մաքսային մարմինների պաշտոնատար անձինք մաքսային հսկողության իրականացման նպատակով կարող են մուտք գործել ֆիզիկական անձանց բնակարաններ՝ օրենքով սահմանված կարգով:* Այս և բազմաթիվ այլ հակասություններն ու տարընթերցումները բացառելու համար, ինչպես նշել ենք, նպատակահարմար կլիներ Միության օրենսգրքով սահմանված մաքսային հսկողության ձևերին համահունչ, ընդունել դրանց իրականացման մեթոդիկան կարգավորող առանձին իրավական ակտ: Օրինակ, դեռևս գործում է «Անձի քննման մեթոդիկան» հաստատելու մասին ՀՀ մաքսային վարչության պետի 03.03.1997թ. թիվ 21 որոշումը, որը թե՛ հիշյալ հսկողական ձևի անվանման, թե՛ բովանդակության տեսակետից որևէ կերպ չի համապատասխանում գործող պահանջներին:

Մեկ այլ օրինակ. ոփսկի գնահատման չափանիշների մեթոդաբանության հետ կապված հարցերը կարգավորվել են ՀՀ ֆինանսների նախարարի 30.06.2011թ. հրամանի շրջանակներում, որով սահմանված կարգավորումներն ամրագրվել են դեռևս

ՀՀ մաքսային օրենսգրքի այլևս չգործող 148-րդ հոդվածի 4-րդ կետի գործողության պայմաններում: Կարծում ենք, որ անհրաժեշտ է նաև նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը համապատասխանեցնել Եվրասիական տնտեսական միության օրենսդրության և Օրենքի պահանջներին: Այլապես, ստացվում է, որ ենթաօրենսդրական բազան այս ոլորտում համահունչ և ներդաշնակ չէ Միության օրենսդրությանը:

Ըստ էության, աշխատանքում արված եզրահանգումները ամփոփված են ոչ միայն վերը հիշատակված եզրակացության մեջ ամրագրված առաջարկներով, այլ նաև պաշտպանության ներկայացված դրույթներով: Իհարկե, աշխատանքում արված առանձին եզրահանգումներ չեն հավակնում իրենց բնույթով լինել միանշանակորեն ընդունվող այնքանով, որքանով դեռևս չեն տարրալուծվել մաքսային մարմինների պրակտիկայում՝ դրսևորելով դրական և բացասական կողմերը: Ակներև է սակայն, որ մաքսային գործի արդյունավետ կենսագործումը չունի այլընտրանք, քան հիմնված լինելը տեսություն-պրակտիկա կապի ներդաշնակ զարգացման վրա, որի իրականացմանն են միտված սույն աշխատանքում արված եզրահանգումները:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ
ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ**

Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտեր

Հայաստանի Հանրապետության օրենսգրքեր և օրենքներ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ (06.12.2015թ.), ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
2. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք (17.12.2014թ.), ՀՀՊՏ 2014.12.30/76 (1089).1 Հոդ. 1253.30:
3. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք (19.07.1993թ.), ՀՀ ԳԽՏ 1993/15-16:
4. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք (06.07.2000թ.), ՀՀՊՏ 2000.08.21/19 (117):
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (06.12.1985թ.), ՀՍՍՀԳՍ 1985/23:
6. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (18.02.2004թ.), ՀՀՊՏ 2004.03.31/18 (317) Հոդ. 413:
7. «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք (03.07.2002թ.), ՀՀՊՏ 2002.08.08/32 (207) Հոդ. 735:
8. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք (24.11.2004թ.), ՀՀՊՏ 2004.12.28/72 (371) Հոդ. 1455:
9. «Ալցիդային հարկի մասին» ՀՀ օրենք (07.07.2000թ.), ՀՀ ԳԽՏ 1992.06.15/11 (1015) Հոդ. 269:
10. «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենք (20.11.2001թ.), ՀՀ ԳԽՏ 1994/14 :
11. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (18.04.2003թ.), ՀՀ ՊՏ 2003.05.02/25 (260) Հոդ. 407:

12. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (17.05.2000թ.), ՀՀՊՏ 2000.06.23/14(112):
13. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք (07.10.1996թ.), ՀՀ ԱԺՏ 1996.10.15/19 (1119) Հոդ. 230:
14. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք (16.04.2001թ.), ՀՀ ՊՏ 2001.05.31/15 (147) Հոդ. 378:

Հայաստանի Հանրապետության այլ հրավական ակտեր

15. «Մաքսային ապահովման միջոցների պատրաստման նկատմամբ պահանջները և դրանց կիրառման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշում (11.02.2016թ.), ՀՀՊՏ 2016.02.19/13 (1193) Հոդ. 115:
16. «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության արձանագրային որոշում (22.12.2016թ.), չի հրապարակվել:
17. «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշում (21.11.2003թ.) ՀՀՊՏ 2004.02.04/7 (306) Հոդ. 149:
18. «Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշում (24.03.2001թ.) ՀՀՊՏ 2001.04.11/11 (143) Հոդ. 263:
19. «Ռիսկերի գնահատման չափանիշների մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանը (30.06.2011թ.) ՀՀ ԳՏ 2011.09.01/21 (404):
20. «Անձի քննման մեթոդիկան հաստատելու մասին» ՀՀ մաքսային վարչության պետի հրաման (03.03.1997թ.) ՀՀԳՏ 1997.11.19/4:

Միջազգային հրավական ակտեր

21. «Մաքսային ընթացակարգերի պարզեցման եվ ներդաշնակեցման մասին» միջազգային կոնվենցիա (1973թ. Կիոտո):
22. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր (2014թ., Աստանա):
23. Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագիր (2014թ., Մինսկ):
24. Եվրասիական տնտեսական միության՝ պետության ղեկավարների մակարդակով միջպետական խորհրդի թիվ 17 որոշմամբ ընդունված «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիր (2009թ. Մինսկ):
25. «2015-2020թթ. Մաքսային Միության անդամ պետություններում մաքսային հսկողության շեշտադրումը հայտարարագրման և ապրանքների բացթողման փուլից ապրանքների հետբացթողման փուլ փոխադրելու սկզբունքի իրականացմանն ուղղված աշխատանքների հիմնական ուղղությունները հաստատելու մասին» Մաքսային Միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի թիվ 12/3 որոշումը (2014թ., Մինսկ):
26. «Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության միջև Մաքսային միության մասին» համաձայնագիր (1995թ., Մոսկվա):
27. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական և հումանիտար ոլորտներում ինտեգրման խորացման մասին» պայմանագիր (1996թ., Մոսկվա):
28. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագիր (ճանապարհային քարտեզ) (2013թ., Մոսկվա):
29. «Մաքսային միության անդամ պետություններում մաքսային հսկողության և ձևակերպման կարգի մասին» համաձայնագիր (2008թ. Մոսկվա):
30. «Մաքսային փաստաթղթերի ձևերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի որոշումը (2010թ., Սանկտ-Պետերբուրգ):
31. «Ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները և անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկը և դրա կիրառման կարգը

հաստատելու մասին» Մաքսային Միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի որոշում (2013թ., Մոսկվա):

32. «Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ վարչական օգնության մասին» համաձայնագիր (2010թ., Սանկտ-Պետերբուրգ):

33. Եվրոպական միության մաքսային օրենսգիրք (2013թ., Ստրասբուրգ) <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013R0952&rid=1>:

Այլ պետությունների նորմատիվ հրավական ակտեր

34. Ռուսաստանի Դաշնության մաքսային օրենսգիրք (3220) (28.05.2003թ .) N 61-Փ3:

35. «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենք (16.12.2013թ.) N° 129-3:

36. «Մաքսային կարգավորման մասին» Ռուսաստանի Դաշնության օրենք (27.11.2010թ.) N 311-Փ3:

37. Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգիրք (16.07.1998թ.,) No 4495-VI:

38. «Մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենսգիրք (30.06.2010թ.) N° 296 IV:

39. «Մաքսային կարգավորման մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենք (31.12.2014թ.) N° 184:

40. ԽՍՀՄ մաքսային օրենսգիրք (19.12.1928թ.):

41. ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից ընդունված ԽՍՀՄ մաքսային կանոնադրություն (12.12.1924թ.):

42. ԽՍՀՄ մաքսային օրենսգիրք (05.05.1964թ.) N 29:

43. Ուկրաինայի Հանրապետության մաքսային օրենսգիրք (13.03.2012) N 4495-VI:

44. «Մաքսային մարմինների մասին» Բուլղարիայի Հանրապետության օրենքը, (01.01.2007թ.):

45. «Անձնական մաքսային զննության մեթոդիկական սահմանելու մասին» Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի նախագահի հրաման (12.07.1997թ.) N 227-ՕԸ:

Պրակտիկայի նյութեր

46. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 18.07.2012թ. թիվ ՍԴՈ-1038 որոշում:
47. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 01.10.2014թ. թիվ ՍԴՈ-1176 որոշում:
48. Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 12.07.2006թ. թիվ 267-Օ որոշում:
49. Թիվ ՎԴ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010թ. որոշում:
50. Թիվ ՎԴ/3633/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011թ. որոշում:
51. Թիվ ԵԱԲԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010թ. որոշում:
52. Թիվ Տ-2421/2007 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008թ. որոշում:

Մենագրություններ, գիտական հոդվածներ եվ այլ տեսական աղբյուրներ

53. **Ղազինյան Գ.Ս., Վաղարշյան Ա.Գ.** Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը/ ԵՊՀ.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014թ. 416 էջ [1]:
54. **Հարությունյան Գ.Գ.** Սահմանադրական մշակույթ. Եր.: Նժար, 2005թ. 84 էջ [35]:
55. **Դանիելյան Գ.Բ.** Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ոսումնական ձեռնարկ - Երևանի պետ. համալս.- ԵՊՀ հրատ., 2012թ., 704 էջ [36]:
56. Ապրանքների և տրանսպորտային միջոցների հետբացթողումային հսկողության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009, 29 էջ

[http://www.customs.am/Shared/Documents/_CI/Post Clearance Control/th_dzernark_hhv_2009.pdf](http://www.customs.am/Shared/Documents/_CI/Post%20Clearance%20Control/th_dzernark_hhv_2009.pdf) [118]:

57. Mihály Arnold, Customs control in the 21st century. Customs Scientific Journal, CUSTOMS, Special edition, N 1, 2012, էջ 66-91, <http://www.wcoomd.org/en/media/newsroom/2012/may/~media/3D278F3397D04A4FA6E74013855B6177.ashx> [65]:

58. Tadashi Yasui, Benefits of the Revised Kyoto Convention, Research and Strategy Unit, 2010, 8 էջ <http://www.wcoomd.org/~media/wco/public/global/pdf/topics/facilitation/instruments-and-tools/conventions/kyoto-convention/benefitsrkc.pdf?db=web> [64]:

59. David Widdowson, Managing risk in the customs context, Luc De Wulf and José B. Sokol, Customs Modernization Handbook, Washington, 2005, 327 էջ <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/7216/31477.pdf?sequence=1> [58]:

60. Best Practices Report on Modernisation of the Customs Code, BizClim. 42 էջ http://www.bizclim.org/en/images/structure/publication/issues_specific/Customs_best_practice_en.pdf [106]:

61. Aksenova N. A. The problems of the Russian Federation customs activity management nowadays. Customs Scientific Journal, CUSTOMS, Special edition, N 1, 2012, էջ 103-114 <http://www.wcoomd.org/en/media/newsroom/2012/may/~media/3D278F3397D04A4FA6E74013855B6177.ashx> [4]:

62. Габричидзе Б.Н. Российское таможенное право. Учебник для вузов. Руководитель авторского коллектива и ответственный редактор д.ю.н., проф. М.: Издательская группа НОРМА-ИНФРА-М, 1998 520 էջ [3]:

63. Драганова В.Г., Рассолова М.М. Таможенное право: Учебное пособие / М.: ЮНИТИДАНА, 2001 639 էջ [13], [41]:

64. Новиков А.Б. Таможенный контроль в системе административных процедур таможенного дела. Ученые записки Санкт-Петербургского имени В.Б.Бобкова филиала Российской таможенной академии. 2005, № 2 (24), էջ 18-26 [78]:

- 65. Азарова Ю.Ф., Баландиной Г.В.** Комментарий к таможенному кодексу Российской Федерации - Москва: Норма, 2004, 896 էջ [19]:
- 66. Осипов Д.А., Большакова В.М.** О понятиях «Государственный контроль», «Государственный надзор» и «Тотальный контроль над личностью» Власть, 2015, էջ 136-140, № 5 www.cyberleninka.ru [23]:
- 67. Головистикова А.Н., Грудцына Л.Ю.** Толковый словарь юридических терминов / М.: Эксмо, 2008, 448 էջ [24]:
- 68. Козлова Ю.М., Попова Л.Л.** Административное право: Учебник-М.: Юристъ, 1999, 728 էջ [25]:
- 69. Манохин В. М.** Административное право России: учеб. Саратов, Ай Пи Эр Медиа, 2009, 272 էջ [26]:
- 70. Студеникина М.С.** Государственный контроль в сфере управления. М.: Юридическая литература, 1974, 160 էջ [28]:
- 71. Бакаева О.Ю.** Государственный контроль и надзор как основные функции таможенных органов, Ленинградский юридический журнал, 2012, № 4 (30) էջ 34-42, [30]: www.elibrary.ru
- 72. Артемьев А.А.** Таможенные проверки после выпуска товаров: Проблемы процедур: Налоговая политика и практика. 2008, № 7, էջ 10-15, [33]: www.elibrary.ru
- 73. Бекашев К.А., Моисеев Е.Г.** Таможенное право. Учебник, 2-е изд. М.: Проспект, 2008, 360 էջ [38]:
- 74. Тимошенко И.В.** Таможенное право России. Ростов н/Д «Феникс», 2001 512 էջ [39]:
- 75. Молчанова О.В., Коган М.В.** Таможенное дело с учебное пособие..-2-е изд., доп. и испр.-Ростов н/Д. Феникс. 2007, 317 էջ [41]:
- 76. Трошкина Т.Н.** Правовые принципы таможенно-тарифного регулирования // Известия высших учебных заведений. Правоведение, 2003, № 1 (246), էջ 61-76, [42]: www.law.edu.ru

- 77. Степаненко С.М.** Система принципов организации таможенного контроля товаров и транспортных средств // Транспортное право. – 2012. – № 3, № 21-23, [43]: www.law.edu.ru
- 78. Габричидзе Б.Н.** Таможенное право. Учебник для вузов. Отв. редактор проф. -М.: Издательство БЕК, 1995 480 № [54]:
- 79. Глазунова Н.А.** Новая философия таможенного контроля в соответствии с Киотской конвенцией // Промышленник России. 2006. N 2., <http://www.rgwto.com/upload/contents/426/Glaz.doc> [55]:
- 80. Костин А.А., Подойма Л.Ю.** Комплексный подход к развитию системы управления таможенными рисками в рамках Евразийского экономического союза, Вестник Белгородского университета кооперации, экономики и права. 2015. № 2, (54), № 251-259, [56]:
- 81. Костин А.А. Разинькова В.Г.** Система принципов таможенного контроля, Сборник научных трудов вузов России, “Проблемы экономики, финансов и управления производством”. 2013, № 34, № 70-74, [62]: www.elibrary.ru
- 82. Матвеева О.П.** Система управления рисками как фактор обеспечения результативности услуговой деятельности таможенной системы, Вестник Белгородского университета потребительской кооперации.-2009, № 1 (29), № 98-104, [63]:
- 83. Костин А.А.** Форма, метод и способ проведения таможенного контроля: соотношение и деяности, Российский внешнеэкономический вестник, 2013, № 6, № 73-79, [71]:
- 84. Шамахова В.А., Кожанкова Ю.А.** Таможенное регулирование в Таможенном союзе в рамках ЕврАзЭС. Учебник / М.: СофтИздат, 2012, 951 № [72]:
- 85. Халипов С.В.** Таможенный контроль (административно-правовой анализ): Учебно-практическое пособие. М.: Издательство «Таможня. РУ», 2005, 136 № [73]:
- 86. Гречкина О.В.** Таможенный контроль как административно-юрисдикционная деятельность, Право и практика. 2010, № 104-109, № 1 [79]:

- 87. Гречкина О.В.** Таможенный контроль в системе координат таможенного законодательства Таможенного союза, Вестник. Уральского института экономики, управления и права. 2009, № 4, էջ 22-26, [81]:
- 88. Гатаулина О.А.** Дуалистическая природа личного таможенного досмотра, Вестник Бурятского государственного университета. № 2, 2014, էջ 184-186, [84]:
- 89. Газизов Д.А.** Досмотр, как мера административного принуждения применяемая полицией для противодействия правонарушениям в сфере оборота наркотических средств/Административное право и процесс., № 2, 2012, էջ 50-54, [85]:
- 90. Пивоваров Д.В.** Меры обеспечения производства по делам об административных правонарушениях, применяемые сотрудниками полиции, Вестник Кыргызского-Российского славянского университета, 2013, № 9, էջ 54-57, [88]:
- 91. Черкасова Е. К.** Вестник правового регулирования и производства личного досмотра Вестник Уральского юридического института МВД России. 2015. № 1, էջեր 57-60 [89]:
- 92. Григорян Т.В.** Реализация принципа гуманизма в исключительной форме таможенного контроля, Вестник Забайкальского государственного университета, 2014. № 7, էջ 137-147, [95]:
- 93. Бакаева О. Ю.** Таможенное право: учебник / — М.: Норма, 2008. — 560 էջ [15]:
- 94. Козырина А.Н.** Комментарий к таможенному кодексу Российской Федерации- М.: Изд-во Проспект, 2004, 736 էջ [97]:
- 95. Круглов А.С.** Основы таможенного дела: учеб. пособие. Вып. II. Организация и технология таможенного контроля, М., 1995, 132 էջ [99]:
- 96. Тимошенко И.В.** Таможенное регулирование внешнеэкономической деятельности. Учебно-практические пособие, Бератор-Пресс, М., 2003, 304 էջ [100]:
- 97. Матвиенко Г.В.** Таможенная проверка: Правовые вопросы регулирования и применения, Государственный аудит. Право. Экономика. 2012, № 3, էջ 97-105, [107]:
- 98. Гречкина О.В.** Проблемы административного производства по делам о нарушении таможенных правил, Южно-Уральский государственный университет, 2010, էջեր 353-356 [113]:

99. Голубь А.А. Таможенная ревизия в системе форм таможенного контроля. Вестник АГТУ, 2006, № 5 (34), էջեր 246-254 [117]:

100. Агапова А.В. Таможенный аудит: государственный контроль или предпринимательская деятельность: Ученые записки Санкт-Петербургского имени В.Б.Бобкова филиала Российской таможенной академии. 2011, № 2 (39), էջեր 17-23 [120]:

101. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014թ. Հոկտեմբեր, 49 էջ [34]:

Արեւախոսություններ

102. Грачева Е.Ю. Проблемы правового регулирования государственного финансового контроля. ... Доктор юрид. наук. Москва, 2000, 378 էջ [121]:

103. Мягков А.В. Досмотр как мера административного принуждения, применяемая милицией. Дисс. ... канд. юрид. наук. Омск, 2004, 178 էջ [101]:

104. Погодина Н. А. Таможенный досмотр товаров и транспортных средств как форма таможенного контроля. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2010, 203 էջ [98]:

105. Карагодин А.В. Применение органами внутренних дел мер обеспечения производства по делам об административных правонарушениях. Дисс. ... канд. юрид. наук. Москва, 2006, 181 էջ [87]:

106. Юркин Т.Ю. Правовое регулирование таможенного контроля при перемещении через таможенную границу объектов интеллектуальной собственности. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2009 186 էջ [2, 57]:

107. Сергеев Е.В. Таможенный контроль: Проблемы правового регулирования, Дисс. ... канд. юрид. наук. Саратов , 2005, 187 էջ [51]:

108. Косов А.А. Таможенный контроль как способ обеспечения законности. Дисс. ... канд. юрид. наук. Москва. 2005 193 էջ [17]:

109. Матвиенко Г.В. Государственный аудит. Право. Экономика. 2012. № 3, 102 էջ [119]: